

зала  
шкафъ  
полка

XVI  
71

Дуб.  
7.LXVI.6



# ԾԱՂԿԵՓՈՒԽԾ



ԳՐԱԴԱՐԱՆ Ե 50 ԿԱՐ.

Ամենատարածված ընթյու երգերի  
ընդառանակ ԺՈՒԱՎԵԱՅԻՆԻ



Հայոց պատրիարքի



ՀՐԱՄԱՆԱԿՈՂԹԻՒՆ Խ. ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

Արմ.


2-62672

# ԾԱՂԿԵՓՈՒՆՁ

891.99-192

Ձ-22

Ամենատարածուած լինիր երգերի  
լինդարձակ ժողովածու



ԿՐԲ  
ԸՆԴ

ԶՈՐՅՈՒԹ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԻՆՎ. № 17213



14335

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ԵԼԵՔՏՐ. ՄԱՂԱՐԱՆ «ԵՊՕԽ Ա.Հ.» ՄՈՒՋԵՍԻ Ն 8.  
1913

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Թէկ իմ նախորդ հրատարակութիւնների մէջ ես խոստացել էի հետզհետէ դուրս գցել «Ծաղկեփունջի» միջից մի շարք տարածւած՝ բայց ինստիկտներ գրգռող երգեր, որոնց գործածութիւնը գտնում էի վնասակար... բայց ժամանակն եկաւ ապացուցանելու, որ ես սխալւած ու որովհետև ամէն մի երգը որևէ հանգամանքի ճնունդ ովանդգալի կերպով կորցնում է իր ազդեցութիւնը, երւ ովհւում են երգին ծնունդ տւող հանգամանքներ, ուստի ոչ միայն կարիք չէ մնում այդ տեսակ երգեր դէն զցելու, այլ ընդհակառակ անցեալի յիշողութիւնները թարմ պահելու համար՝ անհրաժեշտ է աւելի խընամքով վերաբերեւ այն տեսակ երգերին, որոնք ժամանակի ընթացքում կորցրած լինելով իրենց բացասական յատկութիւններ, մնում են լոկ անցեալի որևէ անձք յիշեցնող յուշեր. ուրիշ խօսքով՝ նրանք մեզ համար «պատմութեան» դեր են կատարում, պատկերացնելով մեզ հեռու—մօտիկ անցեալի լու և վատ կողմեր, դրական և բացասական տիպեր... իրենց հոգեկան արտայայտութեամբ... Այդ իսկ պատճառով ցաւում եմ, որ հանգամանքներից ստիպւած՝ ակամայ գուրս զցեցի մի քանի երգեր, որոնց ապագայում նորից կղետեղեմ «Ծաղկեփունջի» մէջ, երբ փոխւած կլինեն վերոգրեալ հանգամանքներ....

Գալով բանաստեղծական երգերին, կասեմ միայն, որ եթէ մի հեղինակ ցանկանում է ժողովրդականանալ, ժողովրդին սիրելի դառնալ, նա պէտք է ազատ թողնի

ՀԱՅ  
Ի ՀԱՅ  
ԱՅՆ  
ՈՒ ԱՅ



93045-42

ՀՅԵՒ

1045-2002



Ելնէկ ունենամ հազար ու մի կեանք,  
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ:  
Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ,  
Բալէքիդ մատաղ, մատաղ քու սիրուն.  
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,—  
Է՞ն էլ քու փառքի գովքը երգելուն,—  
—Որ արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ  
Նոր օրւայ ծէգիտ, աղիզ հայրենիք,  
Ու անուշ երգեմ, բարձր ու գիլ գովեմ  
Կանաչ արևոդ, աղմատ հայրենիք...

Աւ. Խոտհակեան

### Յ Ի Տ Ա Լ Ա Յ Ի Ա Դ Զ Կ Ա Յ Յ Ե Ր Գ Ը

«Մեր հայրենիք թշւառ, անտէր,  
Մեր թշնամեաց ոտնակոխ,  
Իւր որդիքը արդ կանչում է,  
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:  
«Մեր հայրենիք շղթաներով  
Այսքան տարի կապկապւած.  
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով  
Պիտի լինի ազատւած:  
«Անա, եղբայր, քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասունքով լւացի:  
«Նայիր նորան երեք դոյնով,  
Նւիրական մեր նշան,  
Թող փողփողի թշնամու դէմ  
Թող կործանւի Աւստրիան:  
«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ.  
Պատերազմի գործերում,  
Կարէ օգնել իւր եղբօրը,  
Զանց չարեցի քու սիրուն:

«Անա իմ գործ, ահա դրօշ,  
Շուտ ձի հեծիր, քաջի պէս,  
Գնա փրկել մեր հայրենիք—  
Պատերազմի վառ հանդէս:  
«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անզամ պիտ մեռնի,  
Բայց երանի, որ իւր աղզի,  
Ազատութեան կը զոհւի:  
«Գնա եղբայր, Աստւած քեզ յոյս,  
Աղզի սէրը քաջալեր.  
Գնա թէկ չեմ կարող գալ,  
Բայց իմ հողին քեզ ընկեր:  
«Գնա, մեռիր դու քաջի պէս,  
Թող չտեսնէ թշնամին,  
Քո թիկունքը, թող նա չասէ,  
Թէ վատ է իտալացին»:  
Ասաց, տեց օրիորդը,  
Իւր եղբօրը մի դրօշ,  
Մետաքսից էր, աղնիւ գործած,  
Ուր ելեք գոյն կար որոշ:  
Եղբայրն առաւ և ողջունեց,  
Իւր սիրական քնքոյշ քոյլը,  
Առաւ զէնքը, սուր, հրացան,  
Հեծաւ իւր ձին սկաթոյր:  
—Յոյրիկ, —կանչեց քաջ տատանին—  
Մնաս բարեաւ սիրական,  
Այս գրոշակին պիտի նայի  
Անբողջ բանակը իտալիան:  
Ասաց, վազեց դէպի հանդէս,  
Աւստրիացւոց յանդիման.  
Իւր արիւնով գնել յաւէրժ,  
Ազատութիւն, իտալիան:  
Ո՞հ, իմ սիրտը կարստւում է  
Տեսնելով այսպէս սէրը,

Դէպի թշւառ մին հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր:  
Ո՞հ... արտասունքս ինձ խեղում են,  
Եւ չեմ կարող բան խօսել,  
Զէ... թշւառ չէ իտալիան,  
Եթէ կանայքն այսպէս են:  
Մ. Նալբանդեան

## 4 ԱԶՆԻՒ ԸՆԿԵՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,  
Բայց հանգիստ եմ ես հոգով,  
Իմ թշնամիք ես օրհնում եմ,  
Օրհնում եմ քեզ Աստուծով:  
Հեռանում եմ, անգին ընկեր,  
Չգնահատւած ոչ ոքից:  
Բայց հաւաստեաւ անձնանւէր,  
Ազգիս մշակ կ'հաշուիմ:  
Ազնիւ ընկեր, չը մոռանաս.  
Անդաւաճան, ջերմ սիրով  
Ես սիրել եմ իմ հայրենիք,—  
Գնա և դու նոյն շաւիզով:  
Խեղճութիւնը հայոց ազգի  
Կարեկցաբար մտածիր.  
Ուկէ գրքուկն եղիշէի  
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:  
Այնտեղ սուրբ կրօն, ազգը միաբան  
Ազատ կամքով ու խեղճով.  
Այնտեղ վարդան, անմահ վարդան,  
Իւր ինկելի քաջերով:  
Հայրենիք, — սեղան սրբութեան—  
Ես Աստուծոյ առաջեւ.  
Շատ կ'աղաջեմ, շատ կ'արտասւեմ,  
Որ ծաղէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահս մօտ է,  
Բայց հանգիստ եմ ես հոգով.  
Որովհետև խիղճս արդար է,  
Ճշմարտութեան ջատագով:  
Մ. Շահապեղ

## 5. ԱՐԱԲՍԻ ԱՐՏԱՍՈՒԵՔԸ

Մայր-Արաքսի ափերով/  
Քայլամոլոր գնում եմ.  
Հին-հին դարուց յիշատակ  
Ալեաց մէջը պտըում եմ:  
Բայց նոքա միշտ յեղյեղուկ  
Պղտոր ջրով եղերքին  
Դարել դարել խփելով  
Փախչում էին լալագին:  
—Արաքս, ինչու ձկանց հետ  
Պար չես բռնում մանկական,  
Դու դեռ ծովը չի հասած  
Սգաւոր ես ինձ նման:  
Ինչու արցունք ցայտում են,  
Քու սէդ, հալարտ աչերից,  
Ինչու արագ փախչում ես  
Այդ հարազատ ափերից:  
Մի պղտորիլ յատակդ,  
Հանգարտ հոսէ խայտալով,—  
Մանկութիւնը քու կարձ է,  
Շուտ կը հասնիս գէպի ծով:  
Վարդի թփեր թնդ բանին  
Քո հիւրընկալ ափի մօտ,  
Սոլսակնեղը նոցա մէջ  
Երգեն մինչև առաւօտ:  
Մշտագալար ուսիներ  
Սառ ծոցի մէջ քու ջրին,

Ճկուն ոստն ու տերե  
 Թհղի թաց անեն տապ օրին:  
 Ավերիկ մօտ երգելու  
 Հովիւք թող գան համարձակ,  
 Գառն ու ուլը ըու վճիտ,  
 Զուրը մտնեն միշտ արձակ:—  
 Մէջքը ուղցուց Արաքսը,  
 Փրփուր հանեց իր տակից,  
 Ամպի նման զոռալով  
 Էսպէս խօսեց յատակից:  
 «Միզախ, անմիտ պատանի,  
 Նիբռս ինչո՞ւ դարեռը,  
 Վրդովում ես նորոգում,  
 Իմ ցաւերս բիւրաւոր:  
 «Միրելիի մահից յետ  
 Ե՞րբ ես տեսել, որ այրին,  
 Ոտից գլուխ պճնւի.  
 Իւր զարդերով թանկազին:  
 «Որի՞ համար զարդարւիմ,  
 Որի՞ աչքը հրապուրիմ,—  
 Շատերն ինձ են ատելի,  
 Շատերին ես օտար եմ...  
 «Կար ժամանակ որ ես էլ՝  
 Շքեղազարդ հարսի պէս  
 Հազար ու բիւր պճրանքով,  
 Փախչում էի ափերէս:  
 «Յատակս պարզ ու վճիտ,  
 Կոնակներս ոլորուն,  
 Լուսաբերը մինչև ցայդ  
 Զրիս միջին էր լողում:  
 «Ի՞նչս մնաց այն օրից,  
 Ո՞ր ջրամօտ գեղերու,  
 Ո՞րը իմ շէն քաղաքից,  
 Ո՞րը բերկալի տեղերս:

«Տուրքը ջրի ամեն օր  
 Իր սուրբ ծոցէն Արաքս,  
 Մայրախնամ ինձ սնունդ  
 Պարգևում է լիառատ:  
 «Բայց ես այն սուրբ ջրերով  
 Սուրբ Յակոբի աղբիւրին,  
 Պիտի ցողեմ արտօրայքն,  
 Իմ ատելի օտարին:  
 Կամ կենսատու իմ ջրով,  
 Ավերիս մօտ կըկուած,  
 Իւր համազը կատարէ,  
 Քուրքը կամ Պարսիկը հոտած:  
 «Մինչ իմ որդիք, — ո՞ւ զիտէ—  
 Ծարաւ, նօթի, անտէրունջ,  
 Օտար աշխարհ յածում են  
 Թոյլ սոքերով կիսաշունչ...  
 «Հեռու հեռու քշեցին  
 Բնիկ ազգն իմ Հայկեան,  
 Նորա տեղը ինձ տւին  
 Ազգն անկրօն, մոլեկան:  
 «Դոցմ համար զարդարիմ,  
 Իմ հիւրենկալ ափերը,  
 Եւ կամ որոցմ հրապուրեմ,  
 Ճալու, պլած աշերը:  
 «Բանի որ իմ զաւակունք,  
 Այսպէս կու մնան պահուիստ,—  
 Ինձ միշտ սպւոր կը տեսնէք,  
 Այս է անխար իմ սուրբ ուխտ...»  
 Էլ չը խօսեց Արաքսը,  
 Ցորձանը տւեց ահազին,  
 Օղակ օղակ օձի պէս,  
 Առաջ սողաց մոլեկին:  
 Գամառ-Քաթիսա

Հայաստանի մէջ անձքերին վկայ,  
 Սկզբից մինչև ցարդ ինգրեմ ինձ ասա  
 Միթէ միշտ այսպէս կը մնայ Հայաստան  
 Փշալից անապատ, երբեմն բուրաստան  
 Միթէ միշտ այսպէս աղքո խղճալի,  
 կը լինի ծառայ օտար իշխանի,  
 Միթէ Աստուծոյ աֆոսի մօտին,  
 Անարժան է հայ և հայի որդին:  
 Արդեօք գալու է մի օր ժամանակ,  
 Տեսնել Մասիսի գլխին մի գրօշակ,  
 եւ ամեն կողմից պանդուխտ հայ ազգը,  
 Դիմէ դէպ' իւրեանց սիրուն հայրենիք:  
 Դժւար այդ, միայն Տեսուչդ վերին,  
 Կենդանացրու հայութեան հոգին,  
 Ծագիր նոցա գու, բո լոյս գիտութիւն,  
 Որով իւր էակ նոքա բանական,  
 Կը լինեն գործքով Տիրոջ փառաբան:  
 Բաֆքէ

### 8. ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո'ղջոյն ընդ քեզ Հայաստան,  
 Մեր դիւցազանց գերեզման,  
 Ողջոյն հայոց թագուհի  
 Պսակեալ փառօք հայրենի,  
 Երկինք զրկէ քեզ հրեշտակ,  
 Բիւր վարդը ծին ոտքիդ տակ,  
 Իւր մէկ նայւածքն երկնազեզ,  
 Քու արտասւացդ լլան դեղ:

Ո'ն, ինչ անուշ նւազներ,

Պիտի հնչեն սոխակներ,

Երբ քու ճակատդ պսակէ

Ծաղկէնեան դափնիէ:

Մանուկն յօրըոց կը խայտայ,

Եւ ծերունոյն ոլրտ ցնծայ,

### 6. Գ Ա Բ Ա Խ Ն

Ո'ն ինչ անուշ և ինչողէս զով,  
 Առաւոտուց փչես հովիկ,  
 Ծաղկանց վրայ գուրգուրալով,  
 Եւ մազերուն կուսին փափկիկ  
 Բայց չես հովիկ իմ հայրենեաց,  
 Գնա, անցիր սրտէս ի բաց,

Ո'ն, ինչ աղու և սրտագին,  
 Ծառոց մէջին երգես, թուչնիկ,  
 Սիրոյ ժամերն ի յանտառին  
 Զմայլեցան ի քո ձայնիկ.  
 Բայց չես թուչնիկ իմ հայրենեաց,  
 Գնա, երգէ սրտէս ի բաց:

Ո'ն, ինչ մըմունչ հանես վտակ,  
 Ականակիտ և հանդարտիկ,  
 Քո հայելուդ մէջ անապակ,  
 Նային զիրենք վարդն ու աղջիկ.  
 Բայց չես վտակ իմ հայրենեաց,  
 Գնա, հոսէ սրտէս ի բաց:

Թէպէտ թուչնիկ ու հովն Հայոց,  
 Աւերակաց թուչին վերայ,  
 Թէպէտ ոլգաոր վտակն Հայոց,  
 Նոճիներու մէջ կը սողայ,  
 Նոքա հառաջք են հայրենեաց,  
 Նոքա չերթան սրտէս ի բաց:  
 Պէշիկթաշւեան

### 7. Ծ Ա Վ Ա Կ

Զայն տոնը, ով ծովակ ինչու լոռում ես,  
 Ողբակից լինել չը կամիս դժբախտիս,  
 Շարժեցէք զեփիւոք, ալիքը՝ վէտ-վէտ,  
 Խառնեցէք արտասունք այս ջրերիս հետ:

Երբոր նշոյլը կը ժպտին,  
 Հայ աստեղաց նորածին:  
 Ո՞հ, շիրմանցդ քով ալ հանգչի,  
 Անմահութեան վեհ ողի,  
 Մինչ զւարթունք ի՛ բարձանց,  
 Պատկան սփռեն հայլազեանց:  
 Փափուկ մատունք թնդ դրօշմեն,  
 Այն տառերով ոսկեղէն.  
 Մեր սրտին մէջ «սէր և լոյս»,  
 Մեր հոգւոյն մէջ կեանք և յոյս:  
 Քու վշտերուն փոխանակ  
 Երկինք կանգնեց յաղթանակ,  
 Քու վէրքերուդ ալ դարման՝  
 Քեզի օրէնք շնորհցան:  
Փափաղեան

— o —

## 9. ԻՆՉ ՀԱՄԱՐ ԶԷ

Ինձ համար չէ գարնան դալը,  
 Ինձ համար չէ ծառի ծաղկելը,  
 Ուրախութեան սրտի դրդիոը,  
 Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:  
 Ինձ համար չէ կենաց բաղդը,  
 Ինձ համար չէ երջանկութիւնը,  
 Եւ մըայօն կուսի աչքերը,  
 Նոցա արցունք չեն ինձ համար:  
 Ինձ համար չէ փայլուն լուսնի:  
 Անտառ ու սար լուսաւորելը,  
 Գարնան վարդի երգչի տաղերը,  
 Սոխակ ու վարդ չեն ինձ համար:  
 Ինձ համար չէ բարեկամաց,  
 Մէկ տեղ սիրով աօն կատարելը,  
 Զատիկ օրւայ ուրախ ասելը,  
 «Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար:

Ինձ համար չէ ծնողաց լացը,  
 Ինձ համար չէ աղջկայ տիրիլը,  
 Գերեզմանիս վրայ արտասւելը,  
 Բարեկամաց՝ չչ ինձ համար:  
 Բայց ինձ համար կուզայ ժամը,  
 Կերթամ թշնամեաց պատերազմը,  
 Եւ մահառիթ սպանիչ գնդակը,  
 Անդ պատրաստւած է ինձ համար:  
Պատկանեան

## 10. ԹԷ ԻՄ ԱԼԵՒՈՐ...

Թէ իմ ալեոր հերքս սենային,  
 Ոյժս ինձ յետ գար, կտրիճ դառնայի,—  
 Նժոյդ ձի նստած, պեխս ոլորած,  
 Զեսս թուր առած ես դաշտ կերթայի.  
 Ես դաշտ կերթայի—դաշտ Աւարայրի,  
 Ողողած ցողած Հայոց արիւնով,  
 Ա՛զ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,  
 Քու կորցրած թազը քեզ յետ կուտայի:  
 Կասէի Հայոց օրիորդներին,  
 «Ծախեցէք հազի ձեր թանգ չորելը,  
 Թորէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—  
 Ժանդուտած ու գուլ են մեր թրելը.  
 Տւէք բեհեղեայ մեղ՝ ձեր շապիկը,  
 Որ մենք փաթաթենք մեր մարմու վէրքը,  
 Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից.—  
 Այսպէս յայտնեցէք գուք մեղ ձեր սէրը»:  
 Թէ ես լինէի հարուստ մեծատուն,  
 Սնտուկներս լի ոսկով, արծաթով,  
 Շատերի նման ես չէի լինել  
 Երբէք ազգասէր ունայն խօսքերով.  
 Շամպանեա զինու, Ա... Խ... տեղ՝  
 Կառնէի առատ զնդակ ու վառոդ,

Արձակ համարձակ կերթայի հանդէպ  
Հայատեաց ագդին անթիւ զօրքերով:  
Թէ ես լինէի մի երկը իշխան,  
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման.—  
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,  
Խղճուկ հայ աղգին լինել օգնական,  
Եւրոպ' Ասիա արեան գետերը  
Կը վազեցնէի հեղեղի նման,  
Մինչև որ թագ, գահ ու ազատ կըօն  
Խնձնից չստանար թշւառ Հայաստան:  
Բայց՝ եթէ մի օր, մի ժամ մի լոռէ  
Աստած լինի մեր հողագնդին,  
Ի՞նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի  
Մեր արենարբու թշնամեաց գնդին.  
Նեսդ... Թիւրք մոլի, Պարսիկ ոխերիմ,  
Դարեսոր սոսիւ դու Յոյն կըօնամու,  
Գիտցիք որ իմ սուր երկսայրի սրից  
Անժամա չէր մնալ ոչ մի ձեր որդին:  
Գամառ-Քաթիպա

## 11 ԵՐԳ ՎԱՀԱՆԱՑ

Բամ, փորոտան բարձուստ բոմբիւնք  
յԱյրարատեան դաշտն ի վայր,  
Արի արանց արիւնք յեռանդն  
Առատանան ի հրազդայր,  
Հրաւէր հայրենեաց հոչակի ընդհանուր:  
Հողիք Հայկազեանց բորբոքին ի հուր,  
Որք երկնաւորի պոսկին էք կարօտ  
Ու որ երկաւորիս փառաց երկնայրիք:  
Հապօն արի արանց մանկունք,  
Հայրենավրէժք Հայկազունք,  
Հապօն ի զէն գունդագունդ  
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝

Ի զէն ի վրէժ, ծն անդը յառաջ,  
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,  
Օ՞ն անդը յառաջ մի ձախ մի յաջ,  
Օ՞ն անդը յառաջ, յառաջ յառաջ,  
Հապօն յառաջ:

## 12 ԱՆԻ ՔԱՂԱՔ

Ա՞ի քաղաք նատեր կուլայ,  
Զը կայ ասող՝ մի լայ, մի լայ,  
Կասիս քիչ է թնդ մնայ՝ լայ,  
Ա՛խ երբ լսեմ՝ մի լայ, մի լայ:  
Շատ յաւերով կ'այրիմ տապիմ,  
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,  
Որ խղճալոյս գայ՝ մօտենայ,  
Հէջ չէ ասէ մի լայ, մի լայ:  
Ա՛խ Հայ տղայ, խղճանձի,  
Տես քո Անին թէ ինչպէս է,  
Հերիք ես լամ, դու չ'գթաս.  
Զէ քո Անին շատ ափսոս է:  
Ա՛խ ու վախով օրերս անցաւ,  
Լալէն աչքերս կուրացաւ,  
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,  
Բաղդս բնաւ զիս մոռացաւ:  
Կորուսեր եմ թագաւորներ,  
Ժողովեր եմ գլխուս քոռ բուեր,  
Որք միշտ կ'երգեն՝ «Անին անցաւ»  
Անին անտէր տեսրեցաւ»:  
Եկար տեսար, գարձիր կերթաս,  
Լալով ասես՝ «բարեաւ մնաս»,  
Աստած սիրեմ՝ զիս չ'մոռնաս,  
Մտոիս սաւ մոտենաս:  
Ասիս վահանաց մոտենաս:  
անստեր նուլայ քո խեղճ Անին,  
Կամէ Երբ աւագը կոտաս,  
Թէ օրմ Անի հնկիւ չ'պաս:

(1493-63)

1045-2002

## 13 ԲԼՅՈՒԽՆ ԱԻԱՐԱՅՑՐԻ

Ով զու բարեկամ այրած սրտերու,  
Խօսնակ գիշերոյ հոգեակ վարդերու,  
Երգէ բլբուլիկդ, երգէ ի սարէդ,  
Զանման քաջոց երգէ հոգոյս հետ:  
Թաղէի վասնուց ձէնիկդ ինձ գիպաւ,  
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ' թռւնտ առաւ,  
Ի խաչին թեւէն թռայ ու հասայ,  
Գտայ զենդ ի գաշտ քաջին վարդանայ:  
Բլբուլ ըեղ համար մեր հարքն ասացին,  
Թէ չէ հաւ՝ թլլուլ մեր Աւարայրին,  
Եղիշեաց հոգեակն է քաղցրազրուցիկ,  
Որ զկարդան ի վարդը տեսնու կարմրիկ:  
Զմենն հանապատ կու գնայ կայ ի լաց,  
Յարտազ գայ գարունն ի թռուփ վարդենեաց,  
Երգել ու կանչել յեղիշէ ձայն.  
Թէ պատասխանիկ մ' արդեօք տայ վարդան:  
Դ. Ալեքան

## 14 ԶԻՆԻՈՒԻ ԵՐԳԻ

Թուիր իմ նժոյգ, սլացիր. շուտով,  
Տար ինձ ցանկալի կուի փոթորիկ,  
Կուի մէջ միայն ես արեան գնով,  
Կ'փրկեմ իմ խեղճ ստրուկ հայրենիք:  
Տար ինձ այն աշխարհ—անցեալում հզօք,  
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,  
Ուր աւանդ դժբաղդ եղբայրքս այսօք,  
Իւր կեանքն է ողբում օտարին գերի...  
Անցան շնտ գարեր, անցան շնտ տարիք,  
Ազգս շնտ ապրից քաղցրիկ յոյսերով,  
Բայց նորան երբէդ չժպտաց երկինք,  
Չ'ահսաւ նա կեանք խաղաղ, անվրդով:

Միշտ լուս ու խոնարհ անողորմ բաղդին,  
Երկար սպասեց նա կեանքի գարնան,  
Բայց նորա առջև սոսին թշնամին,  
Իւր սրով փորեց կեանքի գերեզման...  
Դէս, թոիր, նժոյգ, սլացիր շուտով,  
Տար ինձ ցանկալի մարտի փոթորիկ.  
Մարտումն է զինուորն իւր արեան գնով,  
Ազգին պարգևում յաղթութեան դափնիք:  
Ա. Ծամուրեան

## 15 ՀԱՊԱ ՔԱԶԱՋՈՒՆՔ

Հաղա քաջաղունք, հայոց զաւակունք,  
Առէք աղեղունք ի մահ երակունք.  
Անտառը սպասեն, կենդանիք սարսեն,  
Զինուցս ի ձայնէն կենդանիք սարսեն.  
Շեշտակի նեսեր  
Թագիցէք, քաջեր,  
Յրէս անվեհնիր:  
Վաղենք ուր վտանգ՝ այս մեր զքօսանք,  
Որսոց արշաւանք՝ մարտից են կրթանք,  
Երթանք գունդ ի գունդ՝ յաղեղ և մկունդ.  
Յուսով սրտաթունդ՝ յաղեղ և մկունդ,  
Շամբրեմք զինդանիս  
Իրը վթշնամիս  
Ի մեր հայրենիս:

Զի օր մ'ալ նոյնպէս մարտին ի հանդէս  
Զարնենք մահաղեաց զոսոխս հայրենեաց,  
Եւ յաղթանակաւ լցեալ աւարսւ,  
Դառնաք քաջարշաւ լցեալ աւարսւ,  
Եւ ի մեր դափնիք  
Ծափ տան սիրելիք  
Պանծայ Հայրենիք:

## 16 ԶԻՆՈՐԻ ՎԵՐՋԻՆ ՈՒԽՏՀ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,  
Ապագութ մահւան բոլոր սև չարիք:  
Բայց քո սուրբ անունը մինչև վերջին շունչ,  
Ես չեմ մոռանայ սիրոն հայրենիք:

Թող ինձ պատրաստէ անխիղճ թշնամին,  
Կախաղան, և սիւն, կամ մի այլ գործիք,  
Բայց մինչև չը գցեն շերիմ իմ մարմին,  
Քեզ չեմ մոռանալ սէր իմ հայրենիք:

Թող կոյր ամբոխը անձրեէ գլխիս,  
Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,  
Բայց մինչև իմ բերնից չելանէ հոգիս,  
Քեզ չեմ մոռանալ անտէր Հայաստան:

Թող ինձ հալածեն Վաստիի թոռները,  
Ասելով տգէտ, յիմար և անբան,  
Այդ ես կը տանիմ մինչ կեանքիս վախճան,  
Բայց քեզ չեմ մոռանայ, երբէք Հայաստան:

Թող իմ դիակս, մանրած մաս առ մաս,  
Տանեն սգալով դէպ' մահու դտրպաս,  
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,  
Գուցէ քեզ մոռանամ, մայր իմ Հայաստան:

Բայց ոչ, երկնքում լուսոյ որդւոց հետ,  
Երբէ մի անմահ սուրբ հրեշտակապետ,  
Պիտի միշտ գոչեմ, կըկնիմ յաւիտեան,  
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան»:

## 17 Կ Ի Լ Ի Ի Ա

Երբոր բացւին դռներն յուսոյ,  
Եւ մեր յերկրէն փախ տայ ձմեռ,  
Զքնալ երկինս մերս Արմենիոյ,  
Երբ փայլէ իւր բաղցրիկ օդեր,  
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ:

Երբոր ծառերը հազնին տերե,  
Յանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արե:

Տեսի գաշտերն Ոնուրիոյ,  
Լեսն կիլանան և իւր մայրեն,  
Տեսի զերկինս Իտալիոյ,  
Վենետիկը իւր կոնտոներ,  
Կղզի նման չիք մեր կիպրեայ,  
Եւ ոչ մի վայր է արդարեն,  
Յանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արե:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ  
Ուր ամենայն իղճ կ'աւարտի,  
Հասակ մը ուր հէզին ի տենչ,  
Ցիշտակաց իւր կարօտի,  
Ցորժամ քնարս իմ ցրտանայ,  
Սիրոյս տալով վերջին բարես.  
Երթամ ննջեմ յիմ կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արե:

## 18 ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի էլ լոենք, եղբայրք, հիմի էլ  
Երբ մեր թշնամին իւր սուրն է դրեւ  
իր օրհասական սուրբ, մեր կըծքին,  
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,  
Ասացէք եղբարք Հայեր, ինչ անենք,

Հիմի էլ լոենք:  
Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին  
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,  
Զնջեց աշխարհից Հայկայ անունը,  
Հիմքից կործանեց թորգոմայ տունը,  
Խլեց մեղանից թագ, և խօսք, և դէնք,  
Հիմի էլ լոենք,

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին  
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին.

Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց՝  
Այդ սուր ու խոփից մեր շղթան կոհց,  
Վայ մեղ, շղթայով կապած գերի հնք.  
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք երբ մեր թշնամին  
Սոսկալի զէսքը բոնած մեր դլխին,  
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,  
Աղեխարշ բողոք վարուց ապիրատ.  
Մեր գլուխը լալու եփրատ մւր պտունք,  
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին  
Լիրը դոսողութեամբ լցրած իր հոգին,  
Արդարութեան ձայնը հանած իր սրտից  
Արտաքսում է մեղ մեր բնիկ երկրից,  
Պանդուխտ հալածեալ եղբայրը մւր դիմենք,  
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին,  
Անհոգ մեր բերած ծանը զոհերին,  
Իւր լիրը նզոված ձեռքը կարկառեց,  
Ազգութեանս վերջին կապը պատառեց.  
Հայի կորուստը մօտ է ի՞նչ անենք.  
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին,  
Արհամարելով մեր փառքն ազգային,  
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,  
Գայլազգեստ գառին մեղ գլուխ դրաւ,  
Մուրբ խորան չունինք, արդ մւր ազօթենք.  
Հիմի էլ լոենք.

Հիմի էլ լոենք, մարդիկ ի՞նչ կասեն,  
Երբ մեր տեղ բարինք, ապառաժք խօսեն,  
Զին ասել, որ Հայք արժանի էին,  
Այդ սուրկական անարգ վիճակին:  
Մեր Մուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,  
Մինչև երբ լոենք:

Թաղ լոէ մունջը, անդամալոյծը,  
Կամ որոնց քաղցը է թշնամու լուծը,  
Բայց մենք որ ունինք հոգի ու սիրո քաջ,  
Եկ անվախ ենենք թշնամու առաջ,  
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք.  
Ու այնպէս լոենք:  
Գամառ-Քաթիսա:

### 19 ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՔ

Հիմի էլ խօսենք, եղբայրը հիմի էլ  
Երբ ընտանիկան երկառակութեամբ  
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել,  
Եւ սարսափելի ազգութեացութեամբ  
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք,  
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք երբ քաջն վարդան,  
Վաթսուն հազարից, հազարով մնաց,  
Մինչ մնացել էր Պարսից լոկ մատեան  
Գունդը, մեր վաթսուն հազարի դիմաց  
Երբ մեր վատութեամբ՝ ողջ կորուսել ենք,  
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք. երբ օտարից շատ  
Մենք մեր ազգի արինք խմում,  
Մոխտանով լցինք Դւին Արտաշատ,  
Ծլի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,  
Երբ այս ամննը մենք կասարել ենք,  
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ հրապարակում  
Պարսիկն առակ արել է Հային,  
«Եթէ Ասորու նման աշխարհում  
Զկայ մի վատ ազգ, բայց, բան Ասորին,  
էլ վատ է, Հայը», մենք այս տանում ենք,  
Հիմ էլ խօսենք,

Հիմի էլ խօսենք, երբ իշխանութիւն  
Ծախտում է անարդ հացակատակներին,  
Մինչ ստրուկ մարդիք նստած մեր գլխին,  
Եւ մեզ կարծում են հող իրենց ոտքի,  
Ու մենք մեղ կոխող ոտքը լիզում ենք.

Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ կռւսաւորչի,  
Բնիկ ժառանգի թերը կտրած,  
Անարդ Պարսիկը՝ այս ու այն թեմի՝  
Կարգում է անսուչ ըստ իւր չար մտաց,  
Եւ մենք դեռ՝ «կեցցէ արին» գոռում ենք  
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,  
Երբ ողջունում ենք մենք այդ չըերին,  
Որ գուան շուն են, և մեզ տեսնելիս,  
Շուտ դիմակները դուռմ երեսին,  
Այդպիսիներին գարձեալ պատւում ենք.  
Հիմի էլ խօսենք:

Էլ մեր երեսին մնաց մի կաթիլ,  
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.  
Ո՛չ թէ չենք ուղում հողէց հող կորչիւ  
Թշնամու արիւնով մեր թրին ջուր ասնք.  
Ազգ, եկեղեցին փրկենք աղատենք.  
Ապա թէ խօսենք:  
Մ. Նալլանդեան

## 20 ԴՐԻ ԶՈ՞Վ ԽՆԴՐԵՍ...

Դու զ՞ով խնզրես, մայր իմ անուշ  
Ե'կ, մի դողար, մօտեցիր հոս՝  
Անլաց աչօք դիտէ զորդիդ  
Եւ իւր վէրքերն արիւնահոս.  
Թըքաց մայրեր թող լան ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս կը եմ օրսանիս մէջ,  
Կակուղ ձեռամբ փայփայելով  
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր  
Իրեկ հրեշտակ նւազելով.

Զիս հանգէցուր ի հող ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

«Նորեկ որդւոյս կենաց արև

Զեզի համար փայլի, չայեր»,

Այսպէս յայնժամ գու կերգէիր

Օրօրոցիս նստած քովեր.

Անոնց համար շիջաւ և դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Կարմիր կայլակը ցայտեն վէրքէս.

Սակայն մայր իմ, նայէ չորս գիս,

Արիւնառուշտ թուրքերը տես

Հազարներով փուած գիտին.

Կերաւ զանոնք մեր սուրբն ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Որպէս վիշտ մոլնչելով,

Յանկարծ մեզ վրայ յարձակեցան,

Յնցեց Զէյթուն գլուխը ժայռոտ,

Իւր վից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկաւ ձորք մեր ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ստւերք,

Զի չէ մեռած հայոց կրակ,

Ու ցնծացին այնչափ զոհեր.

Զի լուծաւ վրէժ յարեան վոակ,

Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,

Հատուցանես զայն սիրուհուս,

Վերջին անգամ գրկեմ մեր հող,  
Ուր արդ կիջնեմ ի ծոցն անլոյս:  
Խաչ մը տնկէ՛ վրաս ու դռն  
Ուրախ լուրեր տար ի Զէթուն:  
Պէտքաշն

## 21. ԹԱՂՈՒՄՆ ՔԱԶՈՐԴՈՅՆ

Ո՞չ փող զարկենք, ոչ արձագանք լեռնասոյդ  
Սարէ ի սար չարաշուկ տարին լուր,  
Ու չերգեցինք ողբոց երգերը սրտայոյլ  
Երբ պատանոյն բացինք մասյլ փոսին դռն:  
Գիշերական մունջ ստւերներ շուրջ կային,  
Երբ հրացանի կոթով զնող փորեցինք,  
Լուսին միայն դողդոջ շողայր մեր զլիխին,  
Սուզ էր պատեր զդաշտ բլուր և երկին:  
Պէտք չէր դագաղ և ոչ ճերմակ պատանքներ,  
Որով գոցուէր ազատորդին քաջ որդին.  
Նա յետ մարտին կարծես յոդնած կու հանգչէր  
Ու վերարկուն կարմիր բաւ էր իւր անձին:  
Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցից  
Մէր քաջ Տէրտէրն, զինւոր Հայոց ու Աստուծոր,  
Գովեց զմահն և զբաջութիւնն իւր օրհնից,  
Թոյլ չի տւաւ հառաջմ' ու ճիչ հանելոյ:  
Բայց երբ զլուխն ի բարձ դրինք հողաշէն,  
Տեսանք զգեղ ճակտին ու վէրքն պայծառ.  
Մէր մալ քամի յանկարծ փչեց ցրտաշունչ,  
Լուսնին շողերն եկաւ զոցեց մթին անպ,  
Ու մեր սարերն զերթ ուրւականք անմռունչ  
Սև գլուխնին տնկած դիտեն ապշութեամբ:  
Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան  
Խաչ մը զրինք, ինչպէս իւր մօր պատեր ետ,  
Ո՞չ այլ շքեղ արձանագիր, ոչ տապան,  
Զինք մենակ թողուցինք իւր փառքին հետ,  
Պէտքաշն

## 22. ԹԷ ԻՄՍ ՀՕՅԻԵՆԵԱՅ

Թէ իմս հայրենեաց քնար սպաւոր  
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն,  
Թէ նորա բեկրեկ թելեր վշտաւոր,  
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:

Թէ հայ մուսային սրտապուչ նւագ,  
Դեռ կ'եղերերգէ՛ հառաչանքս է այն,  
Թէ Հայաստանի սև բաղդին հազար,  
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն:

Թէ իմ հայրենեաց կիսամեռիկ շունչ,  
Դեռ լսւի տխուր՝ իմ ողբերս է այն,  
Թէ լրիկ մնջիկ հեծէ անշշունչ,  
Ո՞չ, անկարեկիր իմ լալիքս է այն:

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն,  
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն,  
Չորս հազար տարւոն պարծանաց գարուն,  
Արձագանք տարող՝ աղազակս է այն:

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր,  
Ահա այս մաշւած իմ կուրծքս է այն,  
Սև սև թերթերուն էջ սրտակոտոր,  
Արտասուք գրւած՝ իմ աղիքս է այն:

Թէ բանսս կարդաս արիւնոտ դաշտեր,  
Վարդագոյն ներկւած՝ իմ կողերս է այն,  
Թէ աչքէ անցընես շամփրած նիզակներ,  
Մահանոտ ցցւած՝ իմ թիկունքս է այն:

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ,  
Ինկած տեսանես՝ իմ ոյժս է այն,  
Թէ զէնք, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր,  
Փշած կոտորած՝ սոկորներս է այն:

Թէ արեամբ ներկեն ակունք եղեմին,  
Նշխար քաջերուն իմ բիբերս է այն,  
Թէ քաղցր ու ամբիծ ալիք Եփրատին  
Լեղի են դարձեր՝ արտասունքս է այն:

Թէ վճիտ գետերն, աղբերքն արծաթի,  
Լալիք առւակեն՝ երակներս է այն.

Թէ Տիգրիս, Գեհողին, Փիսոն մռնչեն՝  
Թէ պղտոր զնան՝ իմ արիւս է այն:

Թէ սառնամանիք ձմբան ըքարեր,  
Լեռներն է պատեր, իմ գագաթս է այն.  
Եւ քաղցրիկ զեփիւսն անուշիկ հովեր,  
Ցրտադին վիշն, իմ շնչիկս է այն:

Թէ վտակ վտակ ցողէ զիշատակ,  
Զայս տրտմալաստակ, աչքերս է այն,  
Թէ սրտաձայնիկ երգէ զշայաստան.  
Կանչէ զշայաստան՝ անկեղծ սէրս է այն:

Թէ մթին խորշերն ու ձորեր լաեն,  
Սկերով ծածկեն մենաստանս է այն.  
Թէ ողբ կ'կարդան վայրերն եղեմին,  
Ճնշւած լերդերուս արձագանքն է այն:

Եւ Հայաստանիս հողեր ուխտիւ,  
Պիստ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.  
Թէ կը համբուրեն կաթողին խնդիւ,  
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն:

Եւ հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ  
Ընկած ապարագդ՝ իմ ճակատս է այն,  
Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պսակ,  
Դրած սպաւոր՝ գլուխիկս է այն:

Եւ կիսակործան տաճարն հայրենի,  
Սկ սուզ է պատեր տաղաւարս է այն.  
Ուր շիջելավառ կանթեղ զեռ հիւծէ,  
Նւազ առ նւազ՝ իմ յոյս է այն:

Ուր տխուր նստեր, մազերն են ծածկեր,  
Իւր սեռուկ աչքեր սիրականս է այն.  
Զեռքերն ի ճակատ, կոնակն ի հողերն,  
Յուսով կոթներ՝ Հայաստանս է այն.  
—Դերեղմանս է այն:

Ուր երբ տհսանեմ զիմ հէգն Հայաստան,  
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն,  
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական,  
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն:  
Ա. Հ. Ֆէլիկեան

### 23 Թէ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Թէ հայրենեաց պսակադիր:

Գողթնիք քնարք լսել են,

Երկնից թող գան անձման հոգիք:

Հայոց քաջեր պսակել:

Մասեաց գագաթ թող գան բաղմեն,

Երկնից գունդ գունդ հրեշտակներ,

Աստած իջեր ի Հայաստան,

Հայոց արիւն հոտոտել:

Փալէք ամպեր Շաւարշանէն,

Ալ մի ցօղէք ձեր ցօղեր,

Շաւարշանը ոռոգւած է,

Հայոց քաջաց արիւնէն:

Եւ կը ծին ու կը ծաղկին,

Այս դաշտի մէջ խոտ վարդ,

Այլ վարդանայ ընկած երկիր՝

Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ քաջ եղիշէն,

Գրիչ ի ձեռն գայ յԱրտադ,

Չափէ ձեկ գրէ գրոշմէ,

Կամք, մահ, հաւատը Վարդանաց:

Գ. Էպ. Սրւանձեան

### 24 ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԻ

Ազօթարանը բացւեցաւ ժամանակ է զարթնելու,  
Երթամ ախոռ, զոմշուկներս լծեմ՝ զութան վարելու,  
Դէն, զոմշուկներ, ելէք, ելէք, արտը էրթանք աշխատինք  
Զարկ ու խարջի վատէն մօտէ, վօթենք ալուն ու քրտինք:

Հայի գութան, հայի գութան որի՞ համար կը ջանաս,  
Ո՞վ քեզմով կտանջւի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս,  
Այն օր, երբ քեզ ձեւքս առի՝ աղատ օրս կորուցի,  
Անվախ սիրս վհատեցաւ հոգիս թուրքին մատնեցի:  
Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն  
վերջ ունի,  
Դուն տեսամբ որ մեր դիւշմանը ամօթ, խելք ու  
գութ չունի:  
Սըմ փշտեմ ես քու խոփը, տանք գարբնին կուելու,  
Կունք—կոփենք սուր ու սուսեր՝ դիւշմանի դէմ կուելու:  
Եղբարք հայեր, առէք խոփը, տանք գարբնին կուելու  
Կուի—կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու:  
Գամառ-Քաթիսա

## 25 ԵՐԳ ՊԱՆԴԻՍԻ

Ծիծեանակ, ծիծեանակ, գու գարնան սիրուն թռչնակ,  
Դէսի մեր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ:  
Ա՛յս, թռիր, ծիծեանակ, ծնած տեղս Աշտարակ,  
Անդ շինիր քո բոյնը, հայրենի կտուրի տակ:  
Անդ հեռու ալեռի, հայր ունիմ սպաւոր,  
Որ մինակ իւր որդուն սպասում է օրէ օր:  
Երբ տեսնես դու նրան, ինձնից շատ բարե արան,  
Ասա թռն նստի լայ, իւր անըախտ որդու վրայ:  
Դու պատմէ թէ ինչպէս ասա անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով՝ կեանքս մաշւել եղել է կէս:  
Ինձ համար ցերեկը՝ մութ է շրջում արեգը.  
Գիշերը թաց աշքիս, քունը մօտ չի գալիս:  
Ասիր, որ չբացւած՝ թառամեցայ մենացած,  
Ես ծաղիկ գեղեցիկ՝ հայրենի հողից զրկւած:  
Դէհ, սիրուն ծիծեանակ, հեռացիր, թռիր արագ,  
Դէպի հայոց երկիրը: ծնած տեղս-Աշտարակ:

## 26 ՕՏԱՐՈՒԽԵՂԻՆ ԻՆՉ ԱՍԱՅ

Օտարուհին ինձ ասաց, «Հէր ես լալիս, արցունքը  
Ճեղիղի պէս ինչնւ են ուսումնում քու աչքունքը,  
Քու տրտմութեան ձար ունիմ, կփարատեմ քու դարբը»:  
Թշիս վրայ չեմ տեսնում փայլուն շուշանն ու վարդը»:  
— Զուր մի ջանար, սիրական, իմ դարդը չես փարատիւլ  
Հոգիս հոգսից, ցաւերից չես փրկել, չես ապատիլ.  
Թնդ իմ աչքից հեղեղայ արտասունքի աղբիւրը,  
Արտասունքն է լամսում սրտի խոր խոր ցաւերը:—  
Օտարուհին ինձ ասաց. «ունս, հասել է գարունը,  
Դաշտերի մէջ բացւել են հազարերանգ ծաղկունքը,  
Իջնենք գաշտը, օդ քաշենք, ծաղկունք քաղէ, փունջ փնջէ:  
Հայրենիքից կարօտն առ, որ թախիծ քեզ չի տանջէ»:  
— Հայրենիքիս կարօտը ձեր գաշտերիցը չեմ առնիլ,  
Սառ հիւսիսից երկինքը Հայաստանի չեմ տեսնիլ  
Ուր ըիւր պատիկ ցոլուն են արեգակի շողերը,  
Կենսատու է անձրել, մեղրածին են ցողերը.  
Օտարուհին ինձ ասաց. «մուսացիր քու հայրենիք,  
Քու հայրենին այստեղ է, ուր սիրում են քեզ մարդիկ:  
Տես արեին, նա պայծառ չէ շողջողում հիւսիսում.  
Հայաստանը կորել է, խեղճ, դու ցնորք ես ուզում»:  
— Սուտ են, սուտ քո զրոյցը, Հայաստանը չէ կորած,  
Նա այնտեղ է, ուր Եփրատ ու Տիգրիսն են զրկւած,  
Ուր Երասխը մըմունչով յուզւած ջուրն է զորում,  
Ուր Մասիսի գագաթը ամպերից ցած է նայում,  
Ուր փայլում է արեգը իր կուսական շողերով,  
Ուր ջրում է երկինքը՝ երկիրը զով ցողերով,  
Ուր որ չկայ բորէաս, չկայ շիմուն ու խորշակ,  
Օգը շունչ է երեշտակի, ջուրը մեղք է անուշակ...  
Հայաստանը կայ... աւմդ խոպանացած, ամայի,  
Եւ կծաղկի, երբ նորից ծծէ քրտինքը Հայի...  
Նորա ստինքը յամառ է, չի կերակրում օտարին,  
Օտարն խարւած ասում է. «շիջաւ ասաղը Հայերին»:

Քարուն անցաւ, միս սոխակ, խօսուն լեզվիդ կատ գրաւ,  
Ու խեղճ վարդի թերթիկի հետ շարականդ էլ տարաւ,  
Կրանամ զուռը վանդակիդ, ազտութիւն քեզ կուտամ,  
Բայց աղաչում եմ քեզի, թոփի դէպի Հայաստան.  
Վարդ ես ուղում՝ այնտեղ է, անամպ երկինք, մեղմ հովեր,  
Ճաճանչափայլ արեգակը, կարկաչանոս առուներ:  
Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օքերին,  
Մէգ, մասախուղ հեղձուկ օդը հաշեց մաշեց իմ հոգին:  
Փչեց հողմը Հիւսիսին, փոշին երկինք բարձրացուց,  
Կտրի վրայից ագռաւը խոպոտ զաղան հնչեցուց.  
Ահա Հիւսիսի սոխակն, ահա Հիւսիսի այել...  
Ի՞նչ էք կորցրել Հիւսիսումն, այ խելացնոր խեղճ Հայեր...  
Այս, ես ատել եմ նորա կեանքն ու վայելը պատիր,  
Տէք օդը իմ երկրին, դալար դաշտն ու վարդ կարմիր  
Գամառ-Քաթիսա

## 28 ՊԱՆԴԱՒԽՏ ՎԱՍՊՈՒԽԱԿԱՆՅՈՒՆ

Թողարկեր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառած էնի,  
Թող իմ աչքը կլլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի.  
Թէ տիւն էլ արտառունք ունես, արի ծիկ հետ ու լաց արա,  
Մեր արտառունք թող ամպ կտրի, հայոց դաշտերն  
անձրև էնի:

## 27 Ի Մ Ս Ո Խ Ա Կ Ի Ն

Սոխակ ինչնւ դադրեցար քու անուշ երգն երգելից,  
Որ քամում էր արտասունք շատ իմ էրված աչերից.  
Միտդ է երբ ծագում էր արշալոյսը գարնանային,  
Քանի՞ զու միտս բերիր իմ առարկան ցանկալի...  
Այն յիշատակն անուշ էր, ինչոչ երազ վաղանցիկ,  
Որ գէթ վայրկեան թշւառին դարձնում էր նա երջանիկ.  
Համակ աշխարհ մոռացած, ունկս քո ձէնին յառած,  
Մաքով թոշում էի ես իմ հայրենին կարօտած...  
Գիտեմ, զու էլ, ես կարօտ մշտագարուն այն դրախտին,  
Որից հետու մեղ չկայ քաղցը ժպիտ մեր բաղդին,  
Ո՞վ կուտայ ինձ թեր թուչի, որ խոյանան սլանան,  
Օդն ու ամպերը ձեղքին ու տանին ինձ Հայաստան.  
Թէ նորա օդը շնչեմ, այն կենսատու սուրբ օդից —  
Գիտեմ միկելու եմ անբուժելի իմ ցաւից...

Թողեր ենք ծէթկիկ ձագերս խեղճ ու կրակ վէր պար  
թորիվան  
Այս ախպէր ինոնց արև ինոնց օրեր մենք ենք տեեր,  
Թողեր ենք մեր կողակիցք վզիկ ծոած կէլիւ պէրան,  
Կողակիցք որ չում մահւան հետն ապրելու ուխտ ենք արեր  
Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառած էնի  
Թող իմ աչքը կլլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:  
Քելեր ենք շատ սար ու ձոր, արուն գետերն էլ ընցել ենք,  
Էս մարդ է, թէ հրեշտակ է, քար է թէ հաւք գարմացեր ենք  
Այս մեր տղերը կանչելով ճանպախ հըմէն լացուցել ենք,  
Ղարիպ ենք էս երկրի մէջ, ուր որ անբան հեսապւեր ենք,  
Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառած էնի  
Թող իմ աչքը կլլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:  
2

Մեղինչի խամար զինի, երբ մեր տղէք ու խաց չունին,  
Մեղ ինչ պէտքէ օտարին զարդ, երբ մեր ընկեր պէտ-  
պիկ էնի  
Էր էրթանք տեսնել էն փառք որ մեր ճակտի քրտինք  
էնի  
Օտարին տուն մեղ ինչ շահ, երբ մեր տուն փռւտ կե-  
րան չունի.

Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էնի,  
Թող իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:  
Էնկանտար ենք խոնարհեր, որ հմէն ժարդ մե պեռ կդնի,  
Էս մարդ է, թէ անասուն, իսկի հարց-փորձ արող չըկայ,  
Մէկ քրտինք մէկ փարի կուտանք, շատ տիր առնող չըկայ,  
Փոսի մէջ ինկած զարիա, մեր ձեռք բւնող հանող չըկայ.  
Թող ախպէր թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էնի,  
Թող իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:  
Էս էրկնուց խաւքերը տես, ինչպէս կերթան ճվլալով,  
Որ ձեազնի առեր թեին, որ կուտ կտանի ուր ձեագերին,  
Մենք մարդ ենք, խայու աղայ կեանք կնցուցենք ան  
ու գարով.

Կեանք չունենք մանէ կլվախնանք մեր գերեզման կը  
լցւի փշով.

Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էնի,  
Թող իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:

Թէ հովեր իրար զարնեն տեղ մը չունինք պախկւելու,  
Թէ ամպեր կարկուտ թափեն, տուն մը չունինք սթարւելու,  
Թէ երկինք ճէր էլ էնի, խելք էլ չունինք վաստակելիւ,  
Ա՞ն էս ինչ խօրօտ օր է, կասենք, փարէք կուտանք գինու.  
Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էնի,  
Թող իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:  
Զնըս տեհէն ծովերն առեր, մենք չնը կզզի մը մնացեր ենք,  
Ես կասեմ կեամի շինենք տիւ գինով ես աւալ թաւալ,  
Որ մէկն էլ թէ ես շինեմ կուկայ կոտրի յիմարաքար  
Օէ օր ծով կպանցըանայ շատեր խեղեց եաման մէկ ճար.

Թող ախպէր թող որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էնի,  
Թող իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի:  
Արէ ջան ախպէր, արե սիրտդ մաներ քարի նման,  
Թէ կսիրես քեռ թիստոս, քեռ ոլապերու սուրբ գերեզման  
Ու հմէն զարիպ կուրպաթ խայու տղէք խաւսարական  
Վկէք տանք մեր քրտինք, մեր ցաւն ու դարտ կալմի պէրան  
Հէսապենք վայ մեղ ասենք, մեր սիրով փիրին աչք կլվան  
Մեր արտսունք ամպ թող դառնայ Հայոց դաշտի վէրէն  
խալայ:

Տ. Ամիրճանեան

## 29 ԱՌԱԽՈՏԵԱՆ ԵՐԳԻ

Այ մարդ, այսօր շատ քննցար, ննջեցիր,  
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.  
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,  
Զերմութիւնը ձորն ու դաշտը փըսւեցաւ,  
Բնկերներդ վաղ արտերը գնացին,  
Ցորեն, զարին գերանդիով հնձեցին,  
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,  
Նստան հանգչիլ կաղնիներու հովումը:

Այ մարդ՝ վեր-կաց սառը ջրով լացվիր,  
Գոտիդ կապէ, գերանդիո առ դաշտ հասիր,  
Քանի հով էնունձդ արա արտումդ,  
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ:  
Հունձդ կապէ, բարդ բարդէ, տուն արի,  
Հանգստացիր, երբ բո հունձդ կատարի,  
Բեր գերանդիո կախէ պատին քո տանը,  
Ես իրիկուն կը պատրաստեմ սեղանը:

Այ մարդ՝ հերիք ինչ որ այսօր քննցար,  
Աչք մէկ բաց, տես թէ որչափ ուշացար,  
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,  
Վաղ լուել է մեր գդիրը ձայնելէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քնել, ովուական,  
Արեգական շողը հասաւ մեր գրան,  
Մի ծուլանար, ժամանակդ խնայէ,  
Այս պիտի մեզ բոլոր ձմեռը կերակըէ,  
Գամառ-Քաթիսաւ.

## 30 ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,  
Թէ երգ թռչնին սիրողաբար,  
Մատունք կուսին ամենագեղ,  
Թէ որ զարնեն փափուկ ընար:  
Զունին ձայն մի այնքան սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Տներ ինձ քու ձեռքդ, եղբայր ենք մենք:  
Որ մըլըկաւ էինք զատւած.  
Բաղդին ամէն ոխ չարանենդ,  
Ի մի համբոյր ցրւին ի բաց:  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Երբ ալեոր Մայր Հայաստան,  
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,  
Մըտին խորունկ վէրքըն դաժան,  
Քաղցր արտաւաց բուժին ցօղով:  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Մէկ տեղ լացինք մենք՝ ի հնում,  
Եկէք գարձեալ յար անբաժան,  
Խառնենք զարտօսր և ըգինդում,  
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Մէկ տեղ յոգնինք, մէկ տեղ ցանենք,  
Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,

Հզնունձ բարեաց յերկինս հանենք,  
Որ կեանք առնուն Հայոց գաշտեր.  
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Պէտք թաշտեաւ

## 31 Ի Մ Ս Է Բ Ը

Սիրում եմ այնպէս, որպէս չէ սիրած  
Դեռ ոչ մի էակ արար աշխարհում,  
Այդ սէրն է միայն որ սրտիս տիրած  
Անշէջ վառում է իմ ջերմ եղբերում:  
Բայց ես իմ սիրով չեմ երգում ներբող,  
Երկնային պարգև սին գեղեցկութեան,  
Պաշտում եմ մի սուրբ պատկեր լուսաշող,  
Նա է իմ կոռոքը երկրպագութեան:  
Ո՞հ դու ես իմ սէր, սուրբ ազատութիւն,  
Ես քեզ եմ միայն սիրում խելազար,  
Բեզ եմ նսիրում իմ խանդ, իմ աւիւն,  
Իմ կեանք, իմ արև զոհում քեզ համար...  
Ո՞հ ազատութիւն անմարմին ոգի,  
Թովիչ երազում ինձ երկեցար,  
Եւ իմ վառ սրտի, իմ վառ ցնորքի,  
Դու միակ իշխող տիրուհին դարձար,  
Ես զմայլում եմ քո լոյս պատկերով,  
Քո հետ համբուրում ազատ անվտանգ,  
Բայց յանկարծ դահիճն արնաներկ սրով,  
Խզեց իմ սիրոյ մաքուր թոթովանք...  
Ես քեզ կամեցայ, ով իմ լոյս հրեշտակ,  
Պարզնել սիրոյս վարդը նորաբաց.  
Այժմ առ դիակս, վարդի փոխանակ,  
Արնաներկ դիակ-քո սիրոյն զոհւած...  
Ա. Ծատուրեան

## 32 ՀԱՅՅԻՆԻՔ ՄՐԲԱԳԱՆ

Հայրենիք սրբազն, իմ սիրուն աշխարհ,  
Թռչում եմ գէպի քեզ հոգւովս անդադար.  
Բայց աւաղ, այս բանտում փակւած եմ անտեսա-  
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես:  
Հանապաղ տաճջւեցայ քո ճակատագրով,  
Սրտում շղթաների ձայներ կրելով...  
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,  
Ա՛խ, կամ ոչնչանալ կամ լինել ազատ:  
Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռւել,  
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել  
Բայց, աւաղ, այս բանտում փակւած եմ անտեսա-  
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես:  
Զգիտեմ, ինչպէս է կոիւն հրդեհւում,  
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...  
Տարւում է միշտ համբաւ սպանութեան ահեղ  
Թափում է ազգ արիւն, բայց ես չեմ այնտեղ:  
Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,  
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...  
Թոնդ այս տեղ չարչարեմ անծանօթ կապւած:  
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ ազատւած:

## 33 ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբայրք, մարդկութեան մէջը  
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.  
Հայ անւամբ զմեզ կ'ողջունեն Երկինք:  
Եղբայրք, Հայ ապրինք:  
Հայ ապրինք,—մեր հայրն է այն Դիւցազուն  
Որ ազատութիւն սովորեցոյց մարդուն,  
Ու մեզ վեհ անուն մը տւաւ բաժին.—  
Եղբայրք, Հայ ապրինք,

Մեր աշխարհն է սուրբ.—Մեր հոգուն վրան,  
Աստած է քալեր, հանելով զնդամ.  
Մեր լեզուն սահղծեր ու խօսեր նախ ինք.—  
Եղբայրք, Հայ ապրինք:  
Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին որբան,  
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.  
Երօնից նախկին սեղանն է Մասիս.—  
Եղբայրք, Հայ ապրինք,  
Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝  
Ոյլ և յեթեր մէջ շողա լուսալիր.  
Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք.—  
Եղբայրք, Հայ ապրինք:  
Հայ ապրինք.—՞ր ազգ կայ Հայուն նման,  
Որ ունենայ հին պարծանքներ այնքան,  
Ո՞ր ազգ Հայուն պէս շըեղ հայրենիք.—  
Եղբայրք, Հայ ապրինք:  
Նար-բէյ

## 34 ԹՇԻԱԽ ՀԱՅՅԻՆԻՔ

Թշւառ Հայրենիք, ո՛չ, դու, լաս հերիք  
Հոսես արտասունք քո հեղիկ, հեղիկ.  
Ո՛չ, թոնդ հանդարտին հասուչանքդ ու լաց  
Թոնդ լոէ տխուր Մուսայդ ողբասաց.  
Քօղդ առ մէկդի, թող աչքունքդ ժպտին  
Դէմ մայրակարօտ քո հայ պանդխտին.  
Որ ձեռն ի ճակատ՝ մէջ օտար վայրաց  
Կուլայ քո վսեմ փառքդ անմոռաց:  
Հայրենիք, քո սիրտդ բացւաւ ծաղիկ  
Քո շուրջդ ներկեց այդդ գեղեցիկ.  
Ե՛ւ եւ, արջնաթոյր արդ ամպոց տակէն  
Որ վեց գարէ վեր գլուխդ ծածկեն.  
Ե՛ւ եւ ձեռքդ տուր, որդի քո եմ ես  
Տնւր որ համբուրեմ սիրով որտակէզ,

Եւ քեզ՝ սիրտ մ' ունիմ, տամ դանի յօժար  
Զոր հայութիւն ինձ տւառ քեզ համար,  
Յ. Մանւէլիան

## 35 ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

Վիշներս ճկած՝ սրտով խոնարհենք.  
Տիրասէր հպատակ լինինք ու ծառայ,  
Նորա անունը աղօթքով յիշենք  
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:  
Քրտինք—վաստակի մեր տասանորդը.  
Տանք նորա զօրքին, որ նա կշտանայ,  
Բլլանք սուլթանի մտերիմ ճորտը,  
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:  
Թող նա մեր որդոց անմեղ արիւնով  
Հաճոյքի համար սուրը լւանայ,  
Սրտերուս կսկիծը զսպենք խնամքով,  
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:  
Թող պարկեշտառուն մեր աղջիկներով  
Սուլթանի տուփուտ պասքը յագենայ,  
Մեր ոսկին սէրայ տանինք փէշերով,  
Խեղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:  
Յուցնունք որ Հայը չէ տաճկին սսոխ,  
Այլ բարեացակամ սերտ ընկեր է նա.  
Նորա զովողն է և ոչ չարխոսով,  
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:  
—Լուռ կաց, խեղճ Հայ մարդ, անոտի յոյսեր,  
Քեզ շատ խարեցին, էլ մի հաւատալ.  
Կանցնին ու կերթան շատ ու շատ զարեր,  
Հայ ազգիս վերայ Թուրքը չի խղճալ:  
Ինչո՞ւ կը մոռնաս Փրկչի ասածը.  
«Դուռը չբախած՝ ոչ ոք չի բանալ»,  
«Ով ստացել է իւր չի հայցածը»,—  
Հայ ազգի վերայ Թուրքը չի խղճալ.

Աղատ լլլալ կուզես, գիտեմ փափագդ,  
Բայց դու մի յուսուլ համնիլ այդ օրին.  
Ո՞ւր է, դու գիտես, բախտդ ու փառքդ  
Ու աղատ կեանքդ:—Ի ծայր քո սուրիմ:  
Գամառ-Քաթեպա

## 36 ԻՄ ՄԱՀԸ

Եթէ տժկոյն մահու հրեշտակ  
Անհուն ժպատով մ' իշնէ իմ դէմ...  
Շողիանան ցաւքս ու հոգիս,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ սնարս՝ իմ տիպար  
Մոմ մը վտիտ ու մահադէմ,  
Ո՞հ, նշուէ ցուրտ ճառագայթք,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ ճակտովս արտօսրազօծ  
Զիս պատանի մէջ ցուրտ գէլթ վէմ,  
Փաթթեն զնեն սև դագաղը,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ հնչէ տխուր կոչնակ՝  
Թրթուռն ծիծաղն մահու դժխեմ,  
Դագաղս առնէ իր յամը քայլ  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ մարդիկ այն մահերգակ՝  
Որք սև ունին ու խոժու դէմ՝  
Համասփահն խունկ ու աղօթք,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ յարկարեն իմ հողակոյտ,  
Եւ հեծիծմամբ ու սդալէն  
Իմ սիրելիքը բաժանւին,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Իսկ աննշան եթէ մնայ  
Երկրի մի խորշն հողակոյտն իմ,  
Եւ յիշատակս ալ թառամի,  
Ո՞հ, այն ատեն ես կը մեռնիմ...  
Պ. Դուքեան

## 37 Ը Ո Ւ Շ Ա Ն Ի Կ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից՝  
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից,  
Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,  
Արդ հեռանաս՝ մեղ մութ պատէ անփարատ:  
Քո սուրբ ձեռօք մեր վէրերը շատ անգամ,  
Լւսնայիր, դեղ դնէիր ամեն ժամ,  
Քո մազերից ոլորէիր վիրակապ,  
Քո բոլոր կեանքդ ազգիդ համար է ազապ,  
Արդ հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,  
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,  
Հայաստանը զրկւի իւր սուրբ Շուշանից,  
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:  
Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,  
Մեր սիրտ հոգին քեղ հետ տանիս մաքրուհի,  
Գնաս բարեառ, մեր լոյս հաւատն քեղ ընկեր,  
Աջն ու խաչը քեղ պահապան զօր գիշեր:  
Կարինեան

## 38 ՀԱՅՐԵՆԵԱՅՑ ՍԻՐՈՎ

Հայրենեաց սիրով վառւած վիճ սրտեր,  
Ի՞նչ կը յապաղէք ենել ի հանդէս.  
Ի՞նչ կը յապաղէք, սիրտ կը դիմանմյ,  
Սիրտ որ ազգասէր ըլլայ կը ցանկայ,  
Տևանել հայրենեաց այսքան բիւր աղէտ,  
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ.  
Խեռ ատելութեան և չար նախանձու.  
Սիրմերն ու ոգին հեռու մղենք, հեռու,  
Սիրտ սրտի կապած, թե թեկի տւած,  
Հայրենեաց սիրոյ ասպարէզը բացւած.  
Օ՞ն, վազենք յառաջ, ի սուրբ խաչն վստահ,  
Օ՞ն երթանք յառաջ, և անձնանւէր,  
Հայրենեաց օդտին ըլլանք ուխտանւէր:

Հայ, մի վհատիր, սիրտ առ և սիրտ տուր,  
Տկարը զօրանան, քաջը խրախուսին,  
Վատերը բացւին, վատերը զատւին,  
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին,  
Խաչ, Սէրն են նշան ճշմարիտ Հայուն,  
Խաչ Սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն,  
Սիրոյ գրօշներ,  
Թոնդ արդ պարզւին.  
Հաշտութեան ձայներ,  
Թոնդ արդ հնչւին:  
Հայն մէկ սիրտ եղաւ,  
Սիրով միացաւ.  
Սուտ են որ կասեն,  
«Հայք զիրար կ'ատեն»:

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկ-  
եկէք, հայկազունք, եկէք միանանք.  
Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտ,  
Օրհնելով Տէրը, որ մեղ պարզեց,  
Մեր Ազգին կասին ու հոգին.  
Աղքային սահմանադրութիւն,  
Յաւերժացի արդիւնաւէտ:

Ս. Փափազեան

—○—

## 39 Ի Մ Ե Բ Գ Բ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,  
Սիրտ բարեկամք անջատած են ինձանից,  
Թառամում եմ իս այս օտար երկուումը,  
Մենակ բսած ծաղկի նման դաշտումը:  
Կամաց կամաց տարիները անցնում են,  
Մեղ նորոգած գարուն, ամառ դարձնում են,  
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,  
Ինձ երէկը կրկնվում է միշտ այսօր:

Որ ազգն երբ զանի փրկարար կոչեց,  
 նոր հոգի, նոր կեանը անոր պարզեց,  
 Եկէք, բարեկամք առ բարձրեալն Աստւած  
 Ուղղեմք մեր մաղթանը սուրբ սրբէ բղիած.  
 Կեցցէ, կեցցէ, կեցցէ, միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:  
 Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,  
 Բերին մահն ի գուռն Հայոց աղքութեան,  
 Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,  
 Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց:  
 Ցառաջադիմութեան բացաւ ասպարէզ,  
 Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեղ,  
 Կեցցէ, կեցցէ, կեցցէ, միշտ,  
 Ազգն ու Սահմանադրութիւն:  
 Զնջեց ամենայն կարծիք անձնական,  
 Խեղեց ամենայն ձայն անհատական.  
 Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,  
 Առաջնորդ լինել զործոց աղգային:  
 Մյն որ Աստուծոյ ձայն տւաւ մեզի,  
 Մենէ թող առնու ձայնով մայնապիսի.  
 Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,  
 Ազգն ու Սահմանադրութիւն:  
 Հայերս անարգւած գրկեց բարձրացուց,  
 Մարդկային կոչման մեզ արժանացուց,  
 Շնորհեց մեզի զոր ազատն Աստւած՝  
 Մարդկութեան երկրորդ նշանն էր զբած.  
 Որուն շնորհիւ արդ ստացանք մենք,  
 Անոր յարդ տալով ապրինք ու երգենք.  
 Կեցցէ կեցցէ, կեցցէ միշտ են:  
 Դուն ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,  
 Ալ այսուհետեւ մի սպար լոիկ.  
 Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,  
 Զքեղ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ,  
 Ալ մի լար, մալրիկ, լազդ ի պար փոխէ,  
 Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.  
 Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ, են:

Ասպարէզս նեղ է ճամբան ու փշոտ,  
 Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.  
 Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի։  
 «Դա ասում են, իր կեանքումը դարդ չունի»։  
 —Ես դարդ ունիմ, դարզս մին է ու պէս-պէս,  
 Բայց չեն տեսնում ձեր աշքերը կարճատես  
 Երբ հս մատ անհիւրընկալ այս աշխարհ,  
 Քանի ըստէ բախտը ժպտաց ինձ պայծառաւ  
 «Հա, ասացի դարձել է իմ անիւը.  
 Լրացել է իմ վատ բախտի չար թիւը,  
 Յանկարծ փչեց անտուժելի հիւսիսին,  
 Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին։  
 Այսպէս չորցուց իմ նաղելի հասակը.  
 Իմ անողորմ, անագորյոն վիճակը,  
 Ա՛խ, մօտեցիր օրհասական օր մահւան,  
 ԲԵՐ քու հետը սև հող ու նեղ գերեզման։  
 ԹՌՆՊ սաւ լինի իմ նոր տանը յատակը,  
 Ծանը բարէ վրաս ծածկած վերմակը,  
 Բայց, միս, երբոր կ'անցնի ամիս ու տարի,  
 Կ'ամամստի գերեզմանը այն քարի։  
 Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,  
 Իմ անունը իմ յիշատակ—կըկորչին.  
 Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան,  
 ՈՐ դարէ դար մնար, ամուր անկործան...  
 Ես երգեցի երգ ոլորտն ու անուշ,  
 Իմ ընարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ.  
 ՄԵՐԷ այնըան անգութ կ'լինի լետա գետ,  
 ՈՐ անունս անգամ կանէ նա անհետ։  
 Դամառ-Բաթիստա

— o —

40 ԱՐԻՔ ՀԱՅԿԱՁՈՒՆՔ

Արիք Հայկազունք, առաջ ընթանանք,  
 Սահմանադրութեան նոր բարս մ'ալ տանք,

Հայելք, միանանք մեր մօր հետ օրհնենք  
Զանոնք որ մեզի տւին սուրբ օրէնք.  
Սահմանադրութեան բարեաց փոխանակ  
Թռղ վարեն ուրախ ի կեանք փառունակ:  
Թռղ և մեր որդիք հետ անոնց անւան՝  
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.  
Կեցչ, կեցչ, կեցչ, միշտ, ևն  
3. Սլամեան

---

## 41 ԶԵՅԹՈՒՆ ԱՆԿԱԽ

ԶԵՅԹՈՒՆ, անկախ դու աշխարհիկ,  
Քո սար ու ձոր են անառիկ,  
Ամեն մի քար և անկիւնդ,  
Շաղախել է քո արիւնդ:  
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ,  
Գեռ ես քո զօրեղ բազկում,  
Ռուրինեանց երկիրն է շարժում,  
Յիշատակ նախնի դիւցաղանց:  
Պատկերն է քո քաջ դաւակաց,  
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ:  
Մզրախն է ունեցած կայքու,  
Քո ապրուստն է և քո կայքն,  
Բանութեան լուծը թուրբ մարդու,  
Էդ գէնքով ես թօթափել դու:  
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ:  
Կեցչ Գրիգորեան հաւատը.  
Հայ պահել է իր ժողովուրդը.

Ո՞չ մի կըօն աշխարհիս վրայ,  
Չունի ազատ ողին սորա:  
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ:

— o —

## 42. Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Երնէկ, թէ այս նոր տարին,  
Ջերջ ապր Հայի ցաւերուն.

Զարը կորչէր ու բարին.  
Բուն դնէր մեր սրտերուն:  
Երնէկ, թէ այս նոր տարին,  
Աղատ շնչէր Հայաստան,  
Եւ շուրջ Մասիս մեր սարին,  
Փայլէին արտ-անդաստան:  
Երնէկ, թէ այս նոր տարին,  
Ռարի կանդնէր Հայաստան,  
Եւ կիսաքանդ մեր կարին,  
Լինէր քաղաք մեր ոստան:  
Երնէկ, թէ այս նոր տարին,  
Հայ սրտի մէջ ուժ հոսէր.  
Ապաւինած իւր սրին,  
Հայը քիւրդէն չի սարսէր:  
Երնէկ, թէ այս նոր տարին,  
Հայ աղգ ի մի գումարւէր:  
Ի զլուխ կարնոյ Հայ ամրին,  
Հայի զրօշակ ծածանէր  
Հայեր, երէք չերկմտինք,  
Կը կտարւի այդ ամեն,—  
Եթէ իսպատ մենք հանենք,  
Փոքրոգութիւնը մեր սրտէն:  
Դամառ-Բաթլութ

---

## 43 ՈՂՋՈՅՆ ՏԻՒԲ

Ողջոյն տւէք իմ հայրենիաց  
Կիսակործան տաճարներուն  
Ողջոյն տւէք աւերակաց,  
Արարատեան գաւառներուն:  
Ողջոյն տւէք Աւաբայրի  
Արինաների սուրբ վայրերուն,  
Ողջոյն տւէք տխուր լուսնի,  
Թը լուսացնէ սև շիրիմներուն:

Ողջոյն տւէք պանդուխտ հայուն,  
Թշառ հայուն, չւառ հայուն,  
Ո՞հ ձեռք տւէք, ո՞հ սիրտ տւէք,  
Ո՞հ շունչ տւէք անշունչ հայուն:  
Ողջոյն տւէք ոլոր մոլոր,  
Մոլար վազող գետակներուն,  
Ողջոյն տւէք պղտոր բոլոր,  
Աղի լեղի աղբիւրներուն:  
Ողջոյն տւէք ո՞հ հող դարձած,  
Արքայական պալատներուն,  
Ողջոյն տւէք դետնատարած,  
Սրբոց անրիծ մասունքներուն:  
Ողջոյն տւէք ծաղկանց խումբ-խումբ,  
Որ կան թագւած հովիտներում,  
Ուր հայ սոխակ թումբէ իթումբ,  
Կեանք է խնդրում դեռ շատերուն:

## 44 Լ Ռ Ե Ց

Լոեց: Ամպերը եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսինն աչքէս խեցին.  
Մնացի մենակ՝ հոգիս վրդոված,  
Զեռներս ծոցիս, գլուխս քարշ արած:  
Եւ այնունետև ամեն իրիկուն.  
Մնում եմ լուսնի խաղաղ ծագերուն.  
Նորա տիրամած դէմքը նայելիս՝  
Յիշում եմ թշւառ վիճակը ազգիս:  
Ա՛խ, ցոլա, փայլէ, տխրադէմ լուսին,  
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային.  
Պատմէ շատերուն Վարդանի մահը,  
Կամ ի՞նչպէս կորաւ հայ ազգի դահը,  
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը—աշխարհը Հայաստանէ  
Գամառ-Քաթիպա

## 45 ԶԱՐԹԻՐ ՍԻՒՏ ԻՄ

Զարթիր, սիրտ իմ վշտահար,  
Նոր առաւօտ քեզ ծագեաց,  
Պարք մուզայից շուրջ դըւ,  
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:  
Փանծան դիւցաղն մեծ արքայ փառօք,  
Ճեմս առեալ յերթս բո երգով,  
Ո՞չ, արև ոչ լուսին, ոչ աստեղք, ոչ երկին,  
Հասանին քոյդ փառաց, յաւերժացիր:  
Ուրախութեան տօն է այս,  
Բերկը եալ սրտից զեսահաս.  
Պարք մուզայից շուրջ դըւ,  
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

— o —

## 46 ԱՌ Ա. ԶԳԴՍ

Ազգ իմ ուրքան նկուն մնաս,  
Սիրտս քեղնից չի զատւի,  
Հազար տեսակ չարչարանք տաս, այ բահարան  
Սիրտս քեղնից չի զատւի,  
Քեզ չեմ մոռանայ յաւերեան, ունա սովոր  
Հարազատ մայր իմ Հայաստան,  
Թէկուզ զբախուն էլ ինձի տան,  
Սիրտս քեղնից չի զատւի:  
Քեղնով եմ ես երջանիկ,  
Իմ սիրելի իմ անուշիկ,  
Ծոցիդ մէջը հանգչիմ մայրիկ,  
Սիրտս քեղնից չի զատւի:  
Զիւանին եմ, քեզ բարեկամ,  
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,  
Հնդկաստանին էլ տէր դառնամ,  
Սիրտս քեղնից չի զատւի:

## 47 ՍԻՐԵՑՔ ՄԻՄԵԱՆՅ

Ես տաճար մտայ... «Սիրեցէք միմեանց».  
Լովում էր բեմից քարոզ փրկչաւանդ,  
Եւ ստւար շարքեր բարհպաշտ մարդկանց,  
Աղօթում էին այնտեղ ջերմեռանդ:

«Սիրեցէք միմեանց»... օ վսեմ ուսմունք.  
Որ միշտ կրկնում ես միայն տաճարում,  
Եւ միայն այնտեղ անչար զգացմունք,  
Գուցէ զարթեցնում մարդկանց սրտերում...»

Շատ եմ փափագած, որ լսեմ ես քեզ,  
Եւ կեանքում—հեռու տաճարի բեմից,  
Բայց իզնւը փափագ... Դու հալածւած ես  
Եւ մարդկանց սրտից, և կեանքի շեմից...  
Ա. Ծատուբեան

## 48 ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ

Հաղիւ լրացաւ քսան մէկ տարիս,  
Աղւամազ քսաւ երես ծնօտիս,  
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի,  
Զիլերս ամուր՝ ասես երկաթի,

Տւէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,  
Ծառը արմատով գետինէն հանեմ,  
Սուր ակրաներովս երկաթ կը ծամեմ,  
Մէջս այդքան ոյժ, ասէք ի՞նչ անեմ:

Առջև գրէք մարդ հարիւր ու հազար—  
Զարդեմ տրորեմ զերդ բողկ ու դազար.  
Ինչ այլք շաբթու մէջ՝ այն ես օր կանեմ...»  
Մէջս այդքան ոյժ, ասէք ի՞նչ անեմ:

Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,  
—Նրա Սուրբ հողին ըլեմ ես զուրբան—  
Մարմինը ուժեղ ու առոյգ է Հային,  
Ալ, ափսիս, թմրած է նորա նոգին:

Թէ մի օր դարթնի նորա վեհ հոգին,  
Նա պարզ կը ցուցնէ Օսմանլի ազգին,  
Ովկ էր երկուսէն ստրուկ և կամ տէր...  
Ա-իս, երբ պիտ, թնդաք, խեղճ Հայի սրտերը  
Գամառ-Քաթիւլա

## 49 ՊԱՐՁ ԳԻՇԵՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր,  
Երկինքը լի աստղերով,  
Եւ լուսինը մեղմ փայլում էր,  
Կաթնանման իւզ լուսով:

Նա հայում էր, լոիկ մնջիկ,  
Իբրև մի կոյս դէպի վան,  
Նրա աչքին երեռում էր,  
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեմնում էր անթիւ քրդեր,  
Առած սուր, թուր, հրացան,  
Կոտորում են... կողոպտում են...  
Աւերում են անտէր վան...

Եւ կարծես թէ երկնքիցը  
Ասում էր այդ լուս վկան.  
Վրայ հասիր, հայ աղդասէր,  
Զեռքից գնաց Հայաստան:  
Ո. Սաֆարեան

## 50 ՏԵՍԿՔ ԱՂԱԼԻՒՆԻ

Տեսէք աղաւնին նոյնան տաղանին  
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին  
Աւետիս կուտայ Հայկեան սերնդին  
Թէ եկաւ գարուն Թորդոմայ զարմին:  
Արթնացէք Հայեր, քաջաց զաւակներ  
Առէք միութեան տէդ ու նիզակներ

Շուտով կազմեցէք անըայ խմբակներ  
 Հաղէք բաջութեան զէն ու զրահներ:  
 Այսափ քնանալ մեզի հերիք է,  
 Թմրին ու պառկիլ խետ մեծ չարիք է  
 Սիրեն ու սիրւիլ արդէն բարիք է,  
 Հայու զինւորի համար պարտիք է:  
 Եկէք միանանք, բանանք դպրոցներ  
 Մեր մատաղ մանկաց համար վարժոցներ,  
 Վառենք, բորբոքնք սիրոյ հնոցներ,  
 Մեր սառած սրտին ըլլան հալոցներ:  
 Շուրփ պէս անցան այս հինգ մեծ գարելք  
 Լացին հայրենեաց գաշտեր ու սարեր,  
 Հերիք ալ ձեզի, հերիք է վատեր,  
 Հերիք մեր բաժին արցունք ու ահեր:

## 51 ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵԲԴԻԼ

Տէր՝ կեցն դու զհայս,  
 Եւ արա զնոսա պայծառ  
 Կեցն զհայս.  
 Չողորմութիւնդ վերին  
 Հաճեաց ձօնել նոցին,  
 Ձի նովիմբ մարթասցին  
 Ապրիլ յաստիս:  
 Ո՞վ Տէր մեր Տէր փութա,  
 Չաղդ մեր համայն փրկեա  
 Ի թշնամեաց.  
 Կափն զաշս նոցուն,  
 Հատ զարմատոյն զբուն  
 Եւ զաղդ մեր պարտասուն  
 Արա հզօր:  
 Ի քո՞իջեալ տեղի  
 Չաթոռ հայրապետի  
 Մեր հաստատեա,

Զերկարութիւն կենաց  
 Հօր մեր Աստածազգիալ  
 Ծնորհեա պետին մեր հարց,  
 Որ զմեղ հովուէ:  
 Թաղիանուեան

## 52 Վ Տ Ա Բ Ն Դ Ի Ն

Թէպէտ վտար քաղքէ քաղաք կամ թափառ,  
 Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անզթաբար,  
 Այլ արդէն իսկ Ազատութեան երբ վեհ ձայն  
 Թուառ բերնէս, յանձն առի զայս վիշտը համայն:  
 Ազատութեան ես անձնւէր,

Վիշտ, յաւ, սիրով եմ յանձն առեր:

Թէպէտ հեռի իմ սիրեկեաց գրկերէն,  
 Հեռի նոցին գողտրիկ ձայնէն, երգերէն,  
 Տիսուր քնարս նոճիներէն վար կախած,  
 Լոփկ ողբամ խեղճ ազգիս բաղդն մտահայց:  
 Ազատութեան ես անձնւէր, և այլն:

Թէպէտ յաշացս դառն հոսեն արտասուր,  
 Յայտնել սրտիս կարօտն ու սուգ և պասուք,  
 Այդ արտասուք սրտիս վէրքերը լւանան,  
 Վէրքեր, զորոնք ազգիս յաւերն հոն բանան:

Ազատութեան ես անձնւէր, և այլն:  
 Վտարանդիք, թէպէտ դառն են այս օրեր,  
 Օր մ' ալ տեսնես նպատակիդ ես հասեր,  
 Ազատութեան յաղթանակը քու ձեռքիդ,  
 Վարդն ու շուշան պսակ պճնել զան ճակտիդ.  
 Ազատութեան ես անձնւէր, և այլն:  
 Մ. Փօրթուզակեան

## 53 ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր երազի նման,  
 Անցաք գնացիք, այլ չէք դառնալու,

Ո՞հ, դուք երջանիկ, ո՞հ անհոգ օրեր,  
Հնդունակ միայն ուրախացնելու:  
Չեղանից յետոյ եկաւ գիտութիւն,  
Իւր ծանր հայիացըով աշխարհի վերայ.  
Ամեն բան ընկաւ մտածութեան տակ,  
Ռոպէ չը մնաց ազատ կամ ունայն:  
Գիտակցութիւնը յաջորդեց սորան,  
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիւ,  
Ապօլլոնը տևեց ինձ իւր քնարը,  
Ռոպէս փարատիչ արտում ցաւերիս:  
Աւաղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,  
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,  
Ինչպէս իմ սիրոն էր, իմ զգացմունքը,  
Ուրախացուցիչ չը գտայ մի լար...

Ինու կաց դու քնար, այլ մի հնչեր ինձ,  
Ապօլլոն, յետ առ գարձեալ դու նորան  
Տնւր մի այլ մարդու, որ ընդունակ է  
Զօն բերել կեանքը սիրոծ աղջկան:  
Ես պիտի գուրս գամ գէպի հրապարակ,  
Առանց քնարի, անզարդ խօսքերով,  
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,  
Խաւարի ընդդէմ պատերազմելով.  
Թող պատգամախօսն—հնացած Դէլֆի,  
Իւր եռոտանու վերայ քրփրի,  
Թող միշին դարու գաղափարներով,  
Ամբոխը խարել ճգնի—աշխատի...  
Մ. նալբանդեան

## 54 ԱՂԲՍ կին

Ճուրտը գչեց ձմեռ սաստիկ,  
Չինը ծածկեց գետինը,  
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,  
Պատսպարւիլ ցրտիցը,

Ժամի դոնում դողդողալով  
Կանգնած է մի աղքատ կին.  
Նորա հանդերձ պատառ պատառ,  
Չունի շապիկ իւր հազին.  
Անհամարձակ նա իւր ձեռքը,  
Պարզում է անցկացողին—  
«Ողորմութիւն արէք, պարոն,  
Անտուն, անտէր աղքատին»:  
Չեզ սիրելիք, ասեմ ով է  
Այս լիզմակի աղքատը,  
Այն ցրտումը ոտարորիկ  
Կանգնած, ժամի դոնումը.  
Շատ ժամանակ դեռ չէ անցել,  
Երբ նա փառքով ու պատով  
Ման էր գալիս փողոցներում  
Իւր սեպիական կառքերով.  
Այժմ, վախով նա իւր ձեռքը  
Պարզում է անցկացողին—  
«Ողորմութիւն արէք պարոն,  
Անտուն, անտէր աղքատին»:  
Ամենայն օր նորա դոնում  
Կանգնած էին շատ կառքեր,  
Միշտ հացկերոյթ, ընթրիք, զինի  
Նւազարան ու տաղեր.  
Ամենայն ոք ցանկանում էր  
Լինել նորան բարեկամ,  
Ամենայն ժամ նորան բաց էր,  
Շռայլ քսակը միծատան,  
Այժմ զրկւած ամէն բանից,  
Չունի անզամ հացի գին—  
«Ողորմութիւն արէք, պարոն,  
Անտուն, անտէր աղքատին»:  
Ժամի դոնում նա կանգնած է,  
Սչըերը կոր, վիզը ճուկ:

Նորա նախկին բարեկամքը  
Չեն ասում նորան, «խղճուկ,  
Ե՛կ դու մեր մօտ, մենք կամոքենք  
Քո վիճակի դառնութիւն,  
Կը թուլացնենք ճակատագրիդ  
Խիստ հարւածի սաստկութիւն»:  
Նա տանում է տառապելով  
Սյու սոսկալի վշտերին—  
«Ողորմութիւն արէք, պարոն,  
Անտուն, անտէր աղքատին»:  
Մ. Նալբանդեան

## 55 ԱՂԱՍՈՒԻ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի՝  
Գետնին նայելով՝ մնացել եմ նստած,  
Զեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ բարի  
Տևած լալիս եմ, օրս խաւարած:  
Ամպերն առաջիս, սարերն ետեիս,  
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,  
Աղի արտասունքով էրւած, խորոված,  
Երեսիդ նայեմ, մնամ քարացած:  
Ծնող, ազգականք հեռու ինձանից,  
Լուսնին նայելով ձեր սէրը յիշելով,  
Եարաք եղբար կըլի, որ ես ձեղանից  
Իմ կարօտս առնեմ, ձեղ ջան ասելով:  
Աչքս ծով դարձաւ ճամրին նայելով.  
Մէկ դուշ, որ գլխիս պտիս է գալիս,  
Թէ երբ մէկ խապար կը համնի ինձ բարով։  
Հոգոց հանելով ասում եմ լալիս:  
«Նապլնւ, իմ նապլնւ, աննման նապլնւ,  
Սիրտս խորովի՝ անունդ յիշելով,  
Նապլնւ, իմ նապլնւ հրաշալի նապլնւ,  
Աղասին քեզ տայ իր յետին բարով։

Սարերի դօշին, ձորերի միջին,  
Վայ զլիխն տալով քո խեղճ Աղասին,  
Երեսիցդ զրկւած, քո սիրով մաշւած  
Տատրակի նման փղի վերայ նստած:  
Նապլնւ, իմ նապլնւ, մէկ շունչս է մնացել,  
Ուկերքս քըրբվել՝ աչքերս խաւարել,  
Թնդ մէկ շունչդ առնեմ, յետոյ հող մտնեմ,  
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիւտ կլինեմ:  
Քեզ եմ մնում, քո ջանին մեռնեմ,  
Հող ու գերեզման ես վրէս ունեմ,  
Քանց իմ սառը մարմին էլ ինչ գերեզման,  
Ինձի պէտք կուգայ, երեսիդ դուրբան։  
Մ. Աբովյան

## 56 Յ Ո Յ Ս

Թող փչէ բամին պաղ պաղ հրեսիս,  
Վերէն ամպիրէն սաստիկ ձիւն թնդ գայ,  
Ուքան որ կուզէ թող փչէ չիւսիս,  
Յուսով եմ վաղուց, գարունը պիտի գայ:  
Թուխպը թնդ պատէ երկինքը պայծառ,  
Թանձը մառախուզ երկիր թնդ փակէ,  
Տարերք աշխարհիս խառնւին իրար,  
Յուսով եմ, վաղուց արև պիտի ծագէ:  
Թնդ գայ փորձութիւն, թող գայ հալածանք,  
Խաւար թնդ զառնայ անաղօտ լոյսը,  
Սարսափելի չին Հային տառապանք—  
Միայն... չի հատնէր խղճուկի յուսը։  
Գամառ-Քաթիսա

## 57 Հ Ա Յ Բ Ե Ն Ի Ք

Իմ Հայրենիք զիս կը կանչէ,  
Հեռու եմ Հայաստանէն.  
Հայու որդւոյն կը վայելէ  
Հեռանալ Հայաստանէն։

Միթէ արծաթ, ոսկի գոհար  
 Կը սփոփէ Հայաստանը  
 Այն որ կողբայ որդւոց համար՝  
 Խղճալի Հայաստանը:  
 Խոր տիխութեան մէջ է թաղւեր  
 Թագուհի Հայաստանը,  
 Բորիկ ոտքով, արձակ մազով  
 Կ'արտասւէ Հայաստանը:  
 Անգութ երկինք ալ չի յիշեր, որդի  
 Մոռացեր է Հայաստանը,  
 Անսիրտ Հայերն ալ չեն յիշեր յանչ  
 Անոշիլ Հայաստանը:  
 Ո՞հ թողէք զիս խօսեմ ազատ,  
 Երգեմ միշտ Հայաստանը,  
 Անուշ երկիր, կոյս անարատ,  
 Անման Հայաստանը:  
 Արև ծածկեր է իւր գէմքը,  
 Խաւար է Հայաստանը,  
 Հայոց արեն ալ մարեր է,  
 Սև հագեր Հայաստանը:  
 Թշւառ սրտիս ձայն կը կտրի,  
 Ողբալով Հայաստանը,  
 Ո՞հ, չը կայ Հայ որ սփոփէ  
 Նւազեալ Հայաստանը:  
 Մինչեւ կտրի իմ վերջին շունչս,  
 Պիտի կանչեմ Հայաստանը,  
 Պըլլէիմ մէյ մ' հայրենեացս  
 Հապա մտնեմ գերեզմանը:  
 Անդորրութիւն ես կը լինգրեմ  
 Սիրելի Հայաստանին,  
 Կտրել այս ձայնս չէ, չէ կարող  
 Սոսկումն գերեզմանին:  
 Հ. Հայկունի

58 ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԼԱՆՔ  
 Աշխարհիս վերայ մէկը կար միայն,  
 Որ ինձ սիրում էր հոգով անարատ,  
 Նա իմ մայրիկն էր, իմ անուշ Ազին,  
 Հոգոյս ու մարմնոյս ձնող հարազատ:  
 Միտքս թուչում է միշտ գէպի երկինք,  
 Երբոր յիշում եմ մայրիկիս անուն.  
 Այդ նրանից է, որ չեն երկրային,  
 Ոչ նորա սովինք, ոչ նորա լեզուն.  
 Նա ինձ կաթ տւաւ, տւաւ և լեզու,  
 Մին քան զմիւսն աւելի անուշ.  
 Մէկով իմ փափուկ մարմինն էր մնվում,  
 Միւսով զարգանում իմ հոգին քնքոյշ:  
 Ի՞նչ կայ այնքան քաղցր ու մննդարալը,  
 Որքան անարատ կաթն մայրական,  
 Ո՞վ կարէ խօսել այնպէս սրտաբուխ,  
 Ինչպէս որ մայրն է թոթովում մանկանէ  
 կարծես հիմա էլ տեսնում եմ մօրս.  
 Ես իբրև մանուկ գրկումն եմ անա,  
 Նուրբ շրթունքներիս զարկում է մատով,  
 Որ իւր հետ ձայնեմ «աղու» կամ «աղմօտ»  
 Ես թոթովում եմ հճճվում է մայրս,  
 Իմ մէջ տեսնում է շնորհքի նշան.  
 Զար աչքից աղատ պահելու համար՝  
 վերաս կարում է պէս պէս թալիսման:  
 Դ. Աղայեան

Հազար երանի քեզ մանուկ ամբիծ,  
 Որ շուտ հետացար դու այս աշխարհից,  
 Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն  
 Անմեղութեան հետ, մոլի չարութիւն:

Բայց այն ովզ գիտէ՞ քեզ ի՞նչ էր սպասում  
Փշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.  
Միթէ յաւիտեան պիտի մնայիր  
Հանգիստ գրկի մէջ քո մօք սիրալիր,  
Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժպտար,  
Դարնան վարդի հետ այս օտար աշխարհ,  
Գամոռ-Քաթիուս

## 60 ԿԱԼԱՆՍԻՐԾԸ

Ա՛խ, բաց արէք իմ մութ բանտի  
Փակ դռները—տւէք լոյս.  
Տւէք ինձ մի սեաբաշ ձի,  
Եւ սեաչեայ մատաղ կոյս:

Մատաղ կուսին ջերմ գրկելով,  
Առաջ մի լաւ կը պաչէմ,  
Ապա դէպ' դաշտ՝ ձի նստելով,  
Ես բամու պէս կը թոչէմ:

Բայց մի բարձր է իմ պատուհան,  
Բանտիս դռան պինդ փականք,  
Եւ հեռու է կոյս սեաչեան  
Քաշւած իւր ճոխ ապաբանք:  
Եւ բարի ձին կանանչ դաշտում  
Մինակ անսանձ արածում,  
Ե՛ւ ուրախ է, և թոշկոտում,  
Եւ պոչն օդում խաղացնում:

Մենակ ես եմ—տիսնւը գարդատ,  
Իմ չորս բոլոր—մերկ պատեր.  
Լոկ կանթեղն է շուրջ ազօտ  
Սփոռում մարող, թոյլ շողեր,  
Եւ լսում եմ, լսում միայն,  
Գիշերային լուռ ժամում  
Լուռ պահնորդի քայլերի ձայն  
Բանտիս դռան յետնում:  
Ա. Ծառուեան

## 61 ԲԱՆՏԻՄ

Մարտի վերջերին աչքերս սառեց  
Զնդանի ծակից երկինք նայելով,  
Ասի, զուցէ մի խարբիկ մ'առնեմ  
Կուռնկներ կանցնին իրանց երամով:  
...Եարար Տէր-Աստած ի՞նչ եղան արդիօք  
Ինչնւ կուռնկներ ոյս տարի չեկան,  
Գիշերով զնացին, որ ես չտևնեմ,  
Թէ ուրիշ ճամբով թողին ու անցան...

— Զան, ձայնիդ զուրպան տեսայ քո ճամբան,  
Աստած կորիս դու հեռւանց չերթաս,  
Այս մեր գիրեից անցու քո քարւան  
Քիզ հարցմոնք մ'ունեմ, ինձ ջուղաբ մ'տաս.

«Դու բարով եկար, որտեղ մնացիր,—  
Ասա ինձ կուռնկ ինչնւ ուշացար  
Մի ջուղաբ մ' տուր ախ սիրտս պատուե,  
Դէհ, ասա, կուռնկ, արդիօք ի՞նչ տեսար:  
Դու կըրածրանաս ու եր ցածանաս,  
Հարաւից կուգաս կերթաս ի հիւսիս,  
Տարին երկ անդամ քո բոյն կղնես  
Նպատ, Անտօք, Սիս, Սիփան, Մասիս:

Ինձ ընկերներ կան էն լեռանց վըայ  
Արդիօք ի՞նչ կանհն, խարբիկ մ' չունիս,  
Տեսամ զու նրանց, լսիր նրանց ձայն,  
Ջուղաբ մ' տուր ինձ, մատաղ քեզ հոգիս:  
Ինչ մեծ յոյսերով ճամբայ ելայ ես,  
Ինչ կար սրտիս մէջ ու ինչեր դարձաւ...  
Ծնկերներս ամէն չորս կողմ կը կուեն  
Ես ընկայ զնան, այս է իմ դառ ցաւ:  
Ծնկերներս ինձի ճամբու զբեցին,  
Պատէրներ աւին Տէրով ամանաթ,  
Գրկւանք մէկ-մէկու համբուրինք զիրար,  
Ողջ էին ամէնք ուրախ ու զարթ:

Այժմ չեմ գիտեր, ողջ են թէ մեռած,  
Ոչ մի լուր չառայ, ումից հարցունեմ,  
Ու ու ձեռս կապած ցցել են զնդան,  
Կոհնկլ քեզանից իղատ խաբրբեր չունիմ:  
Կոկիծ մտաւ սիրտս, թուլացան ոտներս,  
Կոռունկ ջուղար մ' տուր, ասա ի՞նչ եղան,  
Իմ հարիւրներով կտրիճ ընկերներս,  
Կուռում յաղթեցին թէ ընկան մեռան:  
Կոռունկ շըխօսեց իր երամ քաշեց,  
Թռաւ հեռացաւ, աչքէս կորուսաւ,  
Կտրեց իմ յոյս, իմ բաժին թողեց,  
Մութ զնդան, զնչիլ, սև դարդ ու սև ցաւ  
Զ. Փ.

## 62 ՏԱՊԱՆԱԳԻՐ

Տարաժամ դրինք սև հողի տակ,  
Իմ անգին նուշիկ, իմ փոքրիկ հրեշտակ,  
Գարնան ծաղկի պէս ընքուշ բացվեցար,  
Եւ ծաղկի պէս էլ շուտ թառամեցար:  
Երբ զայ նոր գարուն, աշխարհ կը զարթի,  
Կը ծաղկի թուփը աննման վաթի,  
Կը գայ ծիծեռնակ, կոռունկ և սարեակ,  
Սակայն չես զարթնիլ աւազ, դու հոգեակ:  
Շիրիմիդ վրայ կուզամ միշտ լալու,  
Անդարձ կորուստ դառն ովբալու,  
Իսկ երբ որ դրի օրերուս վախճան,  
Քո կողքիդ կը լինի և իմ գերեզման:  
Դոդուեան

## 63 ՀԵՐՈՍԻՆ

Հերնս, դու անցար քո կեանքի ուղին,  
Աժմ քո վառքը կապրի աշխարհում.  
Կապրի քո վսեմ, անձնուրաց ոգին,  
Մուրբ հայրենիքիդ հզօր երգերում.

Կապրի քո գողծը—գործ հերոսական,  
Որ ազատութիւն պարզեց նըրան:  
Քանի որ ազգը չնչում է ազատ,  
Կենդանի կը մնաս գու նըրա կրծքում,  
Դու ընկամր... բայց քո արիւնս անարատ,  
Կը հոսէ դարձեալ մեր երակներում,  
Եւ քո գործերի փառահեղ գափնին,  
Միշտ ոյժ ու եւանդ կը տայ քո ազգին:  
Կուի փոթորկում անունդ յիշելով,  
Սարսափ կը ձգենք թշնամու սրտում,  
Հերոսիդ մահը կերպեն մեծ փառքով,  
Մեր մատաղ կոյսերն իրանց երգերում,  
Եւ դու չես լսիլ երբէք լացի ձայն,—  
Լացը կանարգէր քո սուրբ գելեզման:  
Ա. Շատուրեան

## 64 ՀԱՅԵՐՈՒՄ ԹՈՒՔԲ

Դուն լսելոք հաշով վաճառական ես,  
Միւլք, փող ու ապրանք կասեն շատ ունես,  
Բայց թէ փողէդ շահ չունի հայաստան,  
Թքել ենք քու ալ փողիդ ալ վրան:  
Քաջ ես լսել ենք, ինքդ մեծաւոր.  
Անուն յաղթողի ունիս վառաւոր,  
Բայց թէ թրէդ շահ չունի հայաստան,  
Թքել ենք քու ալ թրիդ ալ վրան:  
Ի վերուստ ըանքար քեզի տւած է,  
Հեղինակ անունդ աշխարհ փուած է.  
Բայց թէ զրչէդ շահ չունի հայաստան,  
Թքել ենք քու ալ զրչիդ ալ վրան:  
Հեռատես մտքով դուն զարդարեցար,  
Հզօր իշխանին սիրելին դարձար.  
Բայց թէ մտքէդ շահ չունի հայաստան,  
Թքել ենք քու ալ, մտքիդ ալ վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,  
Շատ կը յօրինս թանկազին բաներ.  
Բայց թէ ձեռքէդ շահ չունի հայաստան,  
Թքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրան:  
Երկինք չորհեցին քեզ լեզու ճարտար.  
Բարողի ստացար հաչակ ու համճար,  
Բայց թէ լեզէդ շահ չունի հայաստան,  
Թքել ենք քու ալ, լեզիդ ալ վրան:  
Կուտամ քեզ պատիւ, կունենաս դու յարդ,  
Ու կը դնեմ քեհ աղնիւ մարդոց կարդ,  
Երբոր օրօրանէդ մինչի գերեզման  
Միակ ձգամունքդ լինի հայաստան:  
Գամառ-Քաթիպա

## 65 ՔՈՅՑՐԵՐԻՍ ՄԷՋ

Քոյցրիս մէջ ես սգազգեաց  
Ինձ նման տխուր չկայ,  
Դժոխքումն էլ իմ ունեցած  
Կը ակի պէս հուր չկայ:  
Ծարաւ պապակ այրում եմ,  
Ո՞հ, մի կաթիւ ջուր չկայ,  
Սպասում եմ այցելութեան,  
Ոչ մի տեղից լուր չկայ:  
Իմ տարիքս անցնում են շուտ,  
Գլորում են հանապազ,  
Ա՛խ իմ յոյսա իմ փափազս,  
Համարում են ինձ երազ:  
Որտեղ ձայն ու շուկ լսեմ,  
Կը վագիմ այնտեղ վասպ,  
Սպասում եմ այցելութեան,  
Ոչ մի տեղից լուր չկայ:  
Քո խղճալի հարաւն իմ ո՞հ,  
Ինձի օգնէ քաջ հիւսիս,

Քեզ եմ տեկ իմ Ախուրեան,  
Իմ անառիկ մեծ Մասիս  
Երբ կ'լսեմ աւետեաց ձայն,  
Ուրախութեան աւետիս,  
Սպասում եմ այցելութեան  
Ոչ մի տեղից լուր չկայ:  
Զիւան

## 66 ԵՐԳ ՄԱՐՏԻ

Մնացես բարեաւ սէր իմ, սէր  
Հըաւէր մարտին որոտաց,  
Թէ չեմ քաջաց ես ընկեր,  
Չկայ բաժին ինձ փառաց:  
Մի լար, հողոյս իմ հատոր,  
Գոյցէ դառնամ, ո՞հ մի լար,  
Թանկայց մարտին ես ի զոռ,  
Տեսուք յերկինս մենք զիրար,  
Եղբայրադաւ չէ նախանձ  
Որ բորբոքեալ յիս վասի,  
Ի սուրբ հողոյ Հայրենեանց  
Բառնամ զլուծ օտարի:

## 67 ԴԱՐԻՊ ՄՇԵՑԻՆ

Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,  
Չող շատ բարե բերեր եմ հայի գեղերէն.  
Ախպէրքս ինձ յրկեցին դէպի ես կիւման.—  
(Մի վախնաք, չուզեմ ձեր մանէթ ու թուման)։  
Վարագայ Սուլք Խաչէն բերեր եմ ձեզ լուր.  
Խղճացէր Հայ ազգիս, տէք մէկ մէկ թուր:  
Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշէ,  
Օսմանլին ու բիւրդը կեանքներս կ'մաշէ.

Օր կ'լայ՝ գերելար կ'անէ մեր տղոց,  
Օր կ'լայ արտերս ձգէ կրակ ու բոց.  
Թէ չօդնէք՝ մենք ալ շուտ կ'լանք ցիր ու ցան.  
Խղճացէք Հայ աղքիս տւէք մեզ հրացան:

Սուրբ ժամերս զարձուցին անասնոց կոյանք,  
Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք,  
Խաչը ոտքով փշեցին, տեղ դրին լուսնակ.  
Խեղճ Հայն օրն իրաւն ծաղր է ու ծանակ.  
Ո՞վ ախալարք, բերեր եմ ձեզ այսպէս սև բօթ—  
Չուզենք մենք ձեր ռակին, տւէք մեզ վառող:

Այսքան շատ տանջանքին Բնչպէս դիմանանք,  
Մինչեւ Երբ ձեր դիմաց անօդ պիտ' մնանք.  
Մեր աղդը տէր չունի Սլավօնի նման,  
Բարի՝ զուք ըլլայիք մեզի օգնական,  
Հոգիներս տրորած է, ջաներս ցաւոտ,  
Չուզենք մենք ձեր գրարան, տւէք թնդանօթ:  
Շատ տառապանք քաշեցինք դիւշմանի գէնքէն,  
Շատ ալ մահ դիւշմանը կերաւ մեր ձեռքէն,  
Առանց ատոր աշխալիքը մեր չէր բազմամարդ,  
Հիմի փուշ կ'բանի, ուր առաջ էր վարդ.  
Բայց մենք ձեր անդուկի փողին կարօտ չենք,—  
Հայ ախալարք, շնորհեցէք զուք մեզի մէկ մէկ զէնք:  
Քամառ-Քաթիսա

## 68 ՕՏԱՐ ԵՐԿԻՐ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,  
Դու հայրենիք քեզ յիշելով կարտասւեմ,  
Զկայ ծնող, չկամ ուղիք, ըոյր, եղբայր,  
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:  
Օտար երկին, արե, աստղեր և լուսին  
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թւին.  
Բնակարանս տիտը պանդով օտարաց,  
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,  
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն.  
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս,  
Նա օտար չէ, Նա իմն է, սիրէ զիս:

## 69 Տ Ա. Ռ Ա. Գ. Ի Ի Ն

Ընդ աստեղօք օտար ափանց  
Տարագրելոյս չիք բերկրանք,  
Լքեալ հոգւոյս յոյս Հայրենիաց,  
Դու ես միայն սփոփանք:  
Օտար աստղեր լոյս չունին:  
Օտար երկինք ինձ մթին:  
Օտար բոյսեր գառն ու անհամ:  
Զրեր պղտոր ու լեղի,  
Դաշտը, անապատք, հովիտք, արտեր  
Ու պարտէնսերն անբերի:  
Օտար ծառեր շուք չունին:  
Օտար ծաղիկը հոտ չունին:  
Օտար երկիք երջանկարեր՝  
Ծանը այդ պայման ինձ համար,  
Զին ձմեռ են իւր գարուններ,  
Չունի երբէք ինձ ամառ:

Օպալ երկինք ամպոտ ենձ սպան  
Օտար սրտեր անգութ են:  
Օտար թէկ շնչեմ ես օդ,  
Ցաւօք սահին իմ օրեր,  
Քեզ Հայաստան սիրակարօտ,  
Սիրտս համայն քեզ նւէր:  
Օտարութիւն, դու փուշ ես:  
Այլ Հայրենիք, դու վարդ ես:  
Եղանակ մարտարա — օ —

## 70 ԱՅՑ ՍԵՒ ԱՄՊԵՐ

ԱՇ սև ամպեր, վայ սև ամպեր,  
Սիրտս պատեց սև ու մութ...

Եարաբ ի՞նչ էք դուք ինձ բերում—  
Գարնան անձրկ', թէ կարկուտ...

Յուսով-լուսով արտ եմ ցանել,  
Արին թափել ու քրտինք,  
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,  
Աղօթք արել... որ երկինք՝

Արտիս նայի, տունս ինսայի,  
Կեանք տայ, օր տայ իմ հացին.  
Վայ բարէքիս... Աստւած չ'անի,  
Թէ որ անհաց մնացին...

ԱՇ սև ամպեր, ի՞նչ էք դուռում,  
Սիրտս պատեց սև ու մութ...  
Եարաբ ի՞նչ էք արտիս բերում—  
Գարնան անձրկ' թէ կարկուտ...

ԱՇ Շատուրեան

## 71 ՄԱՅՐԻՆ ԱՆԻԾԵՑ

Մայրն անիծեց իր զաւակին. «Ի՞մ որդիի,  
գու պանդխտանաս.

Օտար երկրում հէք պանդխտի խոր վշտե-  
րով գու վշտանաս.

Չոր քարը քեզ սնարք անիս, թաց աւազին  
պառկես տրտում.

Արև չելած քունդ կոտրես, յոյսն մեռնի  
ըս սև սրտում»:

Եւ կատարեց մօր անէծքը. Մօտենում  
էք հրաժեշտն արագ.

Յիշում էք միշտ մուայլ ապագան որդին վը-  
հատ և անճարակ.

«Աստւած գիտէ անյայտ ճանբաս—մւր  
կիջեցնէ, մւր է տանում,

Ո՞վ կը կապէ խաչ իմ կրծքին, հող թափէ  
իմ գերեզմանում...

«Կերթամ վաղուց կրկնում էք նա—չըր  
հաւատում մայրը թշւառ,  
Բայց երբ «մնաս բարով» ասաց, մայրը  
յանկարծ մնաց շւար.

Ասպանդակին երբ ոտ դրեց, զարհուրած  
մօր կապւեց լեզուն,  
Կարողացաւ միայն ասել. «Գնաս բարով,  
իմ սիրասուն.

Այն ճանպայով, ուր ոտ դնես, վարդ ու  
մեխալ դէմդ բուսնեն.

Այն քաղաքը, ուր դու մտնես, Գրողի ձայ-  
ներ թող չը հասնեն.

Ինչ խնջոյքին ներկայ լինես, զինով դեղան  
գաւ աթ զաւեր.

Ծովերը քեզ գինի դառնան, խորտիկներով  
լցին նաւեր»...

Իսկ կուչ եկած մզկտում էք մատադա-  
հաս կինը ծածուկ,

Աղրիւրի պէս արցունք թափում և աղօ-  
թում էք կամացուկ.

«Քնզ եմ կանչում երկրից երկինք, ով Արա-  
րիչ, լամբ իմ ուխտ.

Եարիս կրակը այրում է ինձ, պահիր ամեն  
անտէր պանդուխտ,

Շուտով դարձու լինդակից—միակ ճարն  
իմ սրտի խոցին.

Թուշ դնեմ նրա թշին հոգիս փչեմ նրա  
ծոցին»...

Նայեց պանդուխտն իր սիրածին, կանչեց  
այսպէս. «ինձ նայեցէք»  
Ես թողնում եմ իմ հարն աւանդ, վարդերի  
մէջ փայփայեցէք.  
Եթէ դառնամ, տիրոջ հասցըք աւանդն ան-  
խախտ իմ կաթոգին,  
Իսկ թէ մեռնեմ, աւանդս ձեզ, ողորմի տւէք  
տիրոջ հոգին»...  
Ն. Քուչակ

## 72 Մ Ա Յ Ի Կ Ի Ս

Հայլինիքս հեռացեր եմ,  
Խեղճ պանդուխտ եմ—տուն չունիմ,  
Ազիզ մօքէս բաժանուեր եմ,  
Տխուր-տրտում—քուն չունիմ:  
Սարէն կուգաք, նախշուն հաւքեր,  
Ա՛խ իմ մօրս տեսեր չէք.  
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,  
Ախըր, բարեւ բերեր չէք:  
Հաւք ու հովեր եկան կըշտիս,  
Անձէն գպան ու անցան.  
Պապակ—սրտիս, փափագ—սրտիս  
Անխօս դիպան ու անցան:  
Ա՛խ, քո տեսքին. անուշ լեզուին  
Կարօտցեր եմ, մայրիկ ջան,  
Երնէկ, երնէկ, երազ լինիմ,  
Թռնեմ մօտի, մայրիկ ջան.  
Երբ քունդ գայ, լուռ գիշերով,  
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,  
Սրտիդ կըպնիմ վառ—կարօտով,  
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...  
Աւ. Իսահակիան

## 73 Ե Բ Ա Զ

Ես լսեցի մի անուշ ձայն.—  
Իմ ծերացած մօր մօտ էր.  
Փայլեց նշոյլ ուրախութեան,  
Բայց ափսոս, որ երազ էր:  
Կարկաչանոս աղբիւրն այնտեղ,  
Թաւալում էր մարգարիտ.—  
Նա յստակ էր որպէս բիւրեղ,  
Սյն երազ էր ցնորամիտ:  
Եւ մեղեգին տխուր, մայրենի  
Ցիշեց մանկութեան օրեր.—  
Մօրս համբոյրն ես զգացի,—  
Ա՛խ, ափսոս որ երազ էր:  
Կործքին սեղմեց կարօտագին,  
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—  
Բայց արտասութքս գնում էին.  
Ա՛խ, այդ ինչու երազ էր:  
Ա. Շահաղիզ

—o—

## 74 ՄԵՂԱՅՅ ՔԵԶ ԱՍՏԻԱԾ

Կուշա ևմ և առողջ, կեանքից բաւական,  
Սեղանս առատ ճաշս պատական,  
Բայց թէ ինչպէս իմ այդ կեանքին հասած—  
Այդ մի հարցնէք... Մեղայ քեզ Ա'սուած...  
Շատ կարճ միջոցում ես հարուստ դառայ,  
Հող կալւածներ, կառք ու ձի առայ,  
Բայց թէ ինչ փողով, ինչպէս վաստակած—  
Այդ մեր մէջը մնայ... Մեղայ քեզ Ա'սուած...  
Տներ շինեցի, շրեղ փառաւոր,  
Ապրում եմ մէջը. ինչպէս թագաւոր,  
Բայց քանի՞ մարդու ես տուն իմ քանդած—  
Այդ մի հարցնէք... Մեղայ քեզ, Ա'սուած...

Խանութ բայց արի, գործ սկսեցի,  
Կարճ ժամանակում մեծ զանձ դիվեցի,  
Բայց քանի՞ անդամ ես կոտր եմ ընկած—  
Այդ մեր մէջ մնայ... Մեղայ քեզ, Ա՛ստւած...  
Կեանքումս ես գտայ մի «ազնիւ ընկեր»,  
Դործիս մէջ դրեց տասնեակ հազարներ.  
Բայց վերջը... վերջը նա քաղցած մնաց,  
Իսկ ես կշտացայ .. Մեղայ քեզ, Ա՛ստւած...  
Ես միշտ ասում եմ և միշտ քարողում.  
ԱԱղքատն էլ մարդ է ուտել է ուզումս.  
Բայց քանի՞ մարդ եմ ես աղքատ թողած—  
Այդ մի հարցնէք... Մեղայ քեզ, Ա՛ստւած...  
Երբ տեղն է գալիս՝ սուրբ եմ ձեանում,  
Ժամում ծնկաչոք ազօթք եմ անում.  
Բայց հոգիս վաղուց սատանին ծախած  
Աշխարհք եմ խարում... Մեղայ քեզ Ա՛ստւած...  
Թէ մէկը պատիս գպչի աշկարայ,  
Ես կրակ կը թափեմ այդ մարդու վրայ.  
Բայց ծածուկ ինչքան ես թուք եմ կերած—  
Այդ մեր մէջ մնայ... Մեղայ քեզ Ա՛ստւած...  
Է՞հ, բաւական է զլուխներդ տանեմ,  
Ախը ողորն ասեմ, զորն խոստովանեմ...  
Ոտով ու գլխով մեղքի մէջ թաղւած  
Ես մի հրէշ եմ... Մեղայ քեզ, Ա՛ստւած...  
Ա. Ծառուրեան

## 75 ՀԱՅՈՅ ԴԻՒԻ

Բաժակներ առնունք, հղբարք,  
Լիք լիք բաժակներ գինով.  
Կարմիր ու ճերմակ գինի,  
Մեզ լինի անուշ համով:  
Բերներուս տանենք անվախ.  
Զէ դա խառնած կամ խարդախ.

Նեկտար է և ոչ զինի.  
Խմննք՝ մեզ անուշ լինի.  
Արաքսայ ջրով ցօղած,  
Հայոց արևով հասած,  
Հայոց աղջիկ է քաղել,  
Քնքոյշ ձեռներով քամել:  
Այս բերքն է հայոց երկրին,  
Հայաստան տնկած Նոյէն,  
Անմահ երկրային զինին  
Նա խմեց, երբ իջաւ սարէն,  
Այս անուշ զինին խմողը,  
Սրտէն թող հանէ ոխը,  
Ամենքս էլ ասնք «ամէն».  
Որ շատ տայ մեղի ամ էն:  
Գամառ-Քաթիստ

## 76 ԿԵՆԱՅ ԲԱԺԱԿ

Եղբարք, մի շուրջ ժողովեցէք,  
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,  
Բաժակներդ դարդկեցէք  
Մեր Հայ ազգի կենացը:  
Հայոց երիտասարդներուն,  
Հայրենիք պաշտպանողներուն,  
Որոնց անկումն էլ սուրբ է մեզ—  
Այս բաժակը նսիրենք:  
Հայ աղջիկներու կենացը,  
Որք միայն հայ մարդու կու սիրեն,  
Միշտ իրանց մաքուր կու պահեն.—  
Այս բաժակը դարդկենք:  
Արանց, որ մեր սիրտը զրաւում են,  
Մեզ զգօն ճամբով վարում են.  
Որոց կեանքը մեզ օրինակ,—  
Մի երրեակ «կեցցէ» ասենք:

Եղբարց, որք այժմ աւալտել են,  
Մեր ուխտի անդամ եղել են,  
Որոց ուխտը միշտ սիրում է, —  
Այս բաժակը նւիրենք:  
Եղբարց, որք գալից ազատ են.  
Մահւան հանգիստ վայելում են,  
«Ողորմի հոգուն ասելով»  
Այս բաժակը նւիրենք:  
Բայց որ դեռ գինին փայլում է,  
Ու մեղ իրան մօտ կանչում է,  
Բաժակներդ դարդակեցէք  
Ազատութեան կենացը:  
Պատկանեան

## 77 ԱՐԲԵՑՈՂԻ ԿՏԱԿԸ

Բնկերք մաշւելով պօտազրայից.  
Շուտ կը հեռանամ ես ձեզանից.  
Կարձ միջոցով լինելով մեռած,  
Զէք տեսնիլ ինձ այսպէս արքած:  
Այն գինետան մէջ ինձ թաղեցէք.  
Ուր ամենից շատ արբում էի,  
Այնտեղ գերեզման պատրաստեցէք,  
Որ տակառի տակ ես պառկէի,  
Ոտներս դէպի պատն արէք,  
Իսկ դլուխս դէպի ծորակը.  
Որ երկու ձեռքով բռնէի ես,  
Գինով լիք մնձ բաժակը:  
Ինձ հին տկի մէջ պատանի տեղ,  
Լաւ փաթաթեցէք, կուպը բսեցէք  
Եւ որպէս մեղքիս թողութեան դեղ,  
Կէս թունկի գինի բերանս ածէք:  
Անձէս թաղեցէք, չածէք զանգակ,  
Ի սէր Աստուծոյ թաղմանս ժամանակ,

Բաժակներ շըրխկացրէք գորա փոխանակ,  
Գինով թրջեցէք արբողիս դիակ:  
Դամրանական գուք չ'զրէք տառ,  
Որքան ապրելուս, վարքիս համար.  
Միայն ասել հինգ բառ մեծատառ,  
«Սա էք արբեցող սաստիկ թշւառ»:  
Բայց դեռ քանի որ չեմ մեռել,  
Բերէք խմեմ կէս թունկի գինի.  
Հոգեհանս գինու ուռմբի կարծելով  
Գուցէ ձեռք չ'տայ, երբ արբած տեսնի:

## 78 ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒԻՆ

Գարունն է եկել նախշուն թևերով,  
Նախշուն թևերը պէս պէս ձևերով,  
Գոյն գոյն ծալիկներ՝ կարմիր ու սպիտակ,  
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:  
Երկինք ու երկիր քեզ տօնեն գարուն,  
Զի ես քան զամէն եղանակ սիրուն,  
Նա անձրէ ցողէ առատ ի վերէն,  
Դա օրհնել տայ քեզ եկոր հաւերուն:  
Ուկի արել Փայլէ քեզ վերէն,  
Կենասրեր հովը փչէ լիներէն,  
Ա՛խ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,  
Արգեօք դու լինչ բաղդ բերիր ինձ Տէրէն:  
Գլխաքարչ կերթամ ի պարտէզ այգուն,  
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն իբուն,  
Չկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,  
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ է անդորր քուն:  
Մեռած պատանքած գետնին կեանք տւար,  
Տերլիթափ ծառին ստւերախիտ արար.  
Քեզ թունոց երամ հանդէս կանչեցիր,  
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար:

Առաջ գնան, գալուն, գէպ' հիւսիսն ի խոր  
Գնան, կանաչցուր դու անդ սար ու ձոր,  
Որոց անհամբեր քեզ կան՝ տուր բարե,  
Քու ուրախ գալստեամբ նոցա գւարճացուր  
Կուգաս գալ տարի՝ դու ինձ կու գտնես,  
Ո՛չ ի մեր այգին և ոչ ի պարտէզ,  
Այլ անզարդ քնով հողի տակ պառկած,  
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես,  
Գամառ-Քաթիսա

## 79 Գ Ա Բ Ո Ւ Ն

Է՛յ, կանաչ ախպէր, դուն բարով եկար,  
Դուն բարով եկար, իմ կանաչ ախպէր:  
Մով-մանուշակով ծաղկուն սարերէն,  
Արտուտն ու արօս ինձի ձէն տուին:  
Ու գարնան անուշ արև ոսկեղջն  
Ինձի ձէն տուին՝ սար ու ձոր ելնեմ:  
—Երանէկ ձեղի, սարեր, ու ձորեր,  
Նշնուն հագերէք գարնան զուքսերով,  
Ա՛խ, սիրաս մեռաւ ծով-դարդերի մէջ,  
Գարնան զուքսերին մնաց կարօտով:  
Ա՛խ, սարեր, ձորեր, դժւք առաջւան էք,  
Բլրուկ ու բաղեր զժւք առաջւան էք.  
Ա՛խ մինակ ես եմ փոխուեր ու չորցեր,  
Բլրուկ ու վարդեր, դուք առաջւան էք:  
Ա՛խ, ես եմ փոխուեր ու աշխարհի մէջ,  
Հարիբ ու հիւանդ ճանրոշդ եմ դառներ.  
Ճամբէս մոլորել կերթամ փշի մէջ,  
Սարեր ու ձորեր, դուք առաջւան էք:  
Կեանքիս աղբուրը մարդիք քամեցին,  
Իմ փայ, —աշխարհը դարձրին մութ զնդան,  
Ա՛խ, սիրտս ու հոգիս հալ ու մաշ արին,  
Ու ծաղիկ կեանքիս փորին գերեզման:

Կերթամ փշի մէջ, գերեզման կերթամ  
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ,  
Ա՛խ, տանեմ սիրտս, տանեմ գերեզման...  
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ,  
Ազիզ մեռելս տանեմ հողին տամ...  
Է՛յ կանաչ ախպէր, կուգաս գալ տարի,  
Ու գերեզմանս մամոռվ կը զուքես,  
Իմ կանաչ ախպէր, գալդ միշտ բարի,  
Խեղճ գերեզմանս մտքէդ չըքցես...

Աւ. Խսանակեան

—ο—

## 80 Տ Ր Տ Ո Ւ Ն Զ Ք

Է՛հ մնաք բարով, Աստւած և արի,  
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերե...  
Աստղ մ'ալ ես կերթամ յաւելուլ երկնից,  
Աստղերն ի՞նչ են որ՝ եթէ ոչ անբիծ  
Եւ թշւառ հոգւոց անէծք ողբագին  
Որք թոփն այրել ճակատն երկնըին,  
Այլ այն Աստուծոյն՝ շանթերոն արմատ  
Յաւելուն զէնքերն ու զարդերն հրատ...  
Այլ ո՞չ ինչ կըսեմ... շանթահարէ գիս,  
Աստւած, խոկն հսկայ փշէ հիւլէիս  
Որ ժպրէի ձգտել՝ սուզել խորն երկնի,  
Ենել աստղերու սանդուին անալի...  
Ողջնին քեզ, Աստւած զողդոջ էակին՝  
Շողին՝ փթթթին՝ ալմոյն ու վանքին,  
Դու որ ճակատիս վարդն և բոցն աչերուս  
Խլեցիր թթթուումս շրթանց՝ թոիչն հոգւոյս,  
Ամպ տւիր աչացս, թեք տւիր սրտիս,  
Հսիր մահւան դուռն ինձ պիտի ժպտիս,  
Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքի,

Կեանք մ' անհուն շողի՝ բոյրի՝ ազօթքի,  
Իսկ թէ կորնչի պիտի իմ հունկ շունչ  
Հնու մառախուղի մէջ համը՝ անշունչ  
Այժմէն թնդ որ շանթ մ'ըլլամ դալկահար  
Պլըլիմ անւանդ, մըռընչիմ անդադար  
Թնդ անէծք մ'ըլլամ քու կողդ խրէիմ,  
Թնդ յորջորջեմ քեղ «Աստւած ոխերիմ»:  
Պ. Դուբեան

## 81 ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,  
Ախորժ ընտանի իմ հոգու համար,  
Առաջին զու խօսք ականջիս հասած,  
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդւած.  
Մանկան լեզվս թոթովանք տկար  
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար  
Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,  
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու.  
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ  
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.  
Ասես թէ ահա կանչում էին ինձ  
Պապեն ու հայրեր խոր գերեզմանից  
Հնչիր դու, հնչիր այժմ և յաւիտեան,  
Մայրենի լեզու, բարբառ սիրական  
Արի, բարձրացիր հնութեան փոշուց.  
Դու իմ հայ լեզու մոռացւած վաղուց.  
Ըզեցիր նոր կեանք սուրբ գրւածներով,  
Որ ամենայն սիրտ վառի քո սիրով:  
Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,  
Սուրբ է այն, միւս այլ ձեւ ոճը,  
Բայց թէ ազօթքել, գոհանալ պէտք էր,  
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,  
Իմ երանական մտածութիւնքը—  
Ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը:  
Սա, նաղարեան

## 82 ԱՀԱ ՔԵԶ ԶԵՌՄ

Ահա քեղ ձեռս, ընկեր թանկագին,  
Սեղմիր զու նորան անվախ անկառկած—  
Բարեկամ է նա լքեալ թշւառին,  
Փորձութեան բովում կոշտերով ծածկւած:  
Թող ծանը վշտիցն անցած օրերի  
Հանգչի քո սիրտը գոնէ մի վայրկիան—  
Արի իմ գիրկը, ընկեր սիրելի,  
Ես ջերմ կուրծքիս օրօրեմ նորան:  
Եւ ցաւակցութեան այրող արցունքով  
Տանջանքիդ այդ կուր շղթան կործանեմ,  
Գուցէ և սիրոյ գիւթական շողով  
Մի բողէ ես քեղ հանգիստ պարզեմ...  
Յ. Յովհաննիսեան

## 83 ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵԲ

«Հայրիկ, ասաց դուստր հօքը,  
Կապոյտ երկնքի վրայ  
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,  
Ասես համար, թիւ չկայ:

Ասում են որ՝ ամենայն մարդ  
Աստղիկ ունի երկնքում,  
Ճշմարիտ է, ասա հայրիկ,  
Իմ որտեղ է փայլում,  
—Այս, գատրիկ, այդ աստղերը  
Ունին հաշիւ ու համար,  
Եւ մեղանից իւրաքանչիւր  
Մի աստղ ունի իւր համար:

«Հայրիկ տես տես, աստղը թռաւ,  
Յետքից պայծառ գիծ թողեց,  
Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
Միւս անգամ այլ չերկեց»:

—Ո՞ն, իմ դստրիկ, հանգիստ կացիք,  
Դա մեծատան մի աստղ էր,  
Որ իւր օրում, իւր կեանքումը  
Խելզ ասածը չը գիտէր:  
Աղքատները նորա դանից  
Գիշեր ցերեկ հալածւած,  
Մի մարդ չկար նորան ծանօթ,  
Որ չը լինէր վշտացած:  
«Հայրիկ, տես տես միւս աստղ թռաւ  
Եւ գիծ անգամ չը թողեց,  
Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
Միւս անգամ այլ չերևեց:  
—Ո՞ն, ոիրական, խաղաղ մնայ,  
Բոնակալի դա աստղ էր,  
Որ աշխարհն իւրեան գերի  
Ծնած օրից կարծել էր:  
Շատ հալածանք, շատ նեղութիւն  
Պատճառեց նա իւր կեանքում,  
Շատ տուն քանդեց, շատ մարդ դրկեց,  
Գութ չունեցաւ իւր սրտում:  
«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,  
Որ այնպէս պարզ վառվում է,  
Նորա մաքուր պայծառ լոյսը  
Չորս կողմը բակ բոնել է»:  
—Ո՞ն, իմ դստրիկ, աղօթք արա,  
Դա ծերունու մի աստղ է,  
Որ իւր կեանքում ոչ մի մարդու  
Ոչինչ վնաս տւած չէ:  
Այն լուսաւոր բակն է նորա,  
Առաքինի գործերը,  
Աղօթք արա, որ երկարեն  
Նորա կեանքի թելերը:  
Շատ օր չանցաւ, երկնքիցը  
Մի այլ աստղ պակասեց,

Ովի՞ աստղիկն էր, որ ընկաւ,  
Բան հարցանող չերևեց:  
Մինչդեռ լուսինն արծաթափայլ  
Լոյս էր տալիս գիշերին,  
Խորհրդաւոր մինչ տիրել էր  
Անվրդով խոր լուսւթիւն.  
Մի սրտաթափ, մազերն արձակ  
Վաղեց աղջիկ սգաւոր,  
Դէպի գիւղի գերեզմանքը,  
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ:  
«Հայրիկ, աստղիկ չէ փայլում,  
Դու յաւիտեան ընեցիր.  
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո կիրկ,  
Ինչն անտէր թողուցիր:  
Իմ աստղիկին ասան նոյնալէս,  
Որ չփայլի հէրիք է,  
Այս աշխարհն ինձ առանց քեզ,  
Մութ ու խաւար մի բանտ է»:  
Մի մարդ չկար որ նկատէր  
Որ հետևեալ գիշերին,  
Պակասեցաւ երկնքիցը,  
Մի պայծառ աստղ խնդագին:  
Երրորդ օրը շատ սգաւորք  
Փորեցին մի գերեզման,  
Ուր թալրեցաւ իւր հօր մօտին,  
Մարմինը խելզ աղջկան:  
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,  
Յետքից պայծառ գիծը թողեց,  
Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
Միւս անգամ այլ չերևեց»...

Մ. Նալբանդեան

## 84 Խ Բ Ա Խ Ա Յ Ա

Հերիք որդեակը այսքան տարւան տառապանք,  
Հերիք անգութ դաժան քրովին ոտքն ինկանք,  
Քանի խոնարհ զլուխ տւինք գայլերին,  
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին:  
Հերիք ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ,  
Հին քաջերի արիւնից ենք և ազատ,  
Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր ոչ նիզակ,  
Մեր բահերն էլ կանեն նրանց շանսատակ:  
Ինչով են նրանք մեզ տիրելու արժանի,  
Նրանք մարդ չեն այլ ընսական վայրինի,  
Մերն է ձիբը, մերն է ուսումն ու հանճար.  
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար:  
Հերիք ելնենք ցոյց տանք թէ մենք, և այնու  
Նրանց են մեր կոյս աղջիկները, հարսունքը,  
Նրանց են մեր ճակտի ըրտանց արդիւնքը,  
Նրանց առւրի ծայրն է կարծես մեր հոգին,  
Նրանց գամբոը մեղնից շատ է թանկագին:  
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, և այնու  
Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,  
Նրանք մեր վրայ լոիկ արցունք են թափում,  
Զեն խնայել թե ու թեկունք, կը հասնեն,  
Շուտով կուզան կը միանան Սուրբ գործին:  
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, և այնու:

## 85 ՐԱՅՑՈՒ ՄԱՀԸ

Հհատած հոգուս ցաւած խորքերից՝  
Աշխայթ, արթնացիր, —կրկին ոգի առ,  
Տուր ինձ, արիւնոտ որտիս թելերից,  
Մի պատկ հիւսեմ անմահի համար:  
Անմահ Ռաֆֆիի սուրբ յիշատակին՝  
Բերում եմ ահա ի ձօն ալս հիւսւած,

Ազգիս բազմաշխատ աղնիւ մշակին՝  
Ես էլ ուզում եմ տալ յարգանք յուզւած:  
Գումական մի զուժիր, թէ Ռաֆֆին մեռաւ,  
Նա անանց կեանքով միշտ կայ կենդանի,—  
Դարեր կլսահեն, նա զես անզրաւ:  
Հայ սերնդոց մէջ երկար կեանք ունի:—  
Նորա վեհ մտքի փայլուն ծնունդներ—  
«Կայծեր», «Խամսայի մելիքութիւններ»,  
«Սամուէլ», «Փոչեր», «Խենթ», «Դաւիթ-Բէգեր»,  
Կ'ընծային Հային նոր կեանքի մտքեր...  
Ճանապարհ ուէքը, Բափփին անցնում է,  
Ուսերին բարձած բեռն անմահութեան...  
Տեսէք հետքերը որչափ հնձում է  
Համայն հայ ազգից դափնիք զոհութեան:  
Թռղ Բափփին երթալ, կայթէ այն կաճառ՝  
Ուր հանդիսացած կան մեր մեծ մարդիկ,—  
Բայց հայը ընդմիշտ նորա ձիրքն ու հանճար,  
Կը յարգէ անկեղծ քնրոյշ զերթ վարդիկ:  
Անցիր, սլացիր զու երկնի խորան,  
Ով յաւերթացած լուսափայլ հոգի—  
Բայց քո վաստակներն կըտան նոր ոգի,  
Նոր շունչ Հայերին վերածնութեան...  
Անցաւ և Բափփին ինչպէս մի յաղթող,  
Եւ պայծառ հետքը թողեց աշխարհում.  
Սերնդից սերունդ նա կանգնեց կոթող,  
Նշան անմոռաց հայոց սրտերում...  
—

## 86 ԱՅԺՄ Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

Այժմ ինչ անենք, որ փրկենք հային,  
«Հայի արիւն ալ վօթեցաւ» արգէն.  
Դաժան թշնամուն իրանց զոհ բերին  
Հազար կտրիճներ՝ մէկի փոխարէն:

Մեր շէն գիւղօրայք — քարուքանդ եղած  
Մեր բոյր ու եղայր — գտրձել են մոխիր.  
Ով սուր ու հըրից կենդանի մնաց,  
Ցուպը ձեռն առաւ՝ զընաց տարնագիր:  
Մեր ոչինչ չօգնեց ոչ հուր և ոչ զէնք,  
Ոչ բիւր քաջերի նահատակութիւն,  
Քէ, եղբարք հայիր, այժմ ինչ անենք,  
Որ մեր հայրենիք զըտնէ փրկութիւն:  
Եկէք եղբայրներ, լուսոյ ջահ վառենք  
Եւ պայծառ լուսով լըցնենք մեր աշխարհ —  
Գուցէ այսպիսով փրկութիւն զըտնենք  
Թշւառ և անտէր մեր ազգի համար:

Լ. Մանուէլեան

---

87 Ք Ա. Յ Լ Ե Ն Ք

Յուսահատել մեզք է ընկեր,  
Արիացիր, ոգի առ, —  
Նայիր, փայլեց հեռում լապտեր,  
Մենք էլ կառնենք շուտ դադար:  
Արիացիր, սիրու առ, ընկեր,  
Շարունակենք մեր ուղին,  
Լսիր կարծեմ՝ թէ զանդակները,  
Ղօղանջեցին սարերէն...

Ահա բացւեց ալօթարան,  
Վստահ ընկեր, առաջ բայլենք,  
Զինուոր ենք մենք ազատութեան,  
Եւ անփորձ տեղ կը համնենք...

---

88 ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ

Հովերն առան սար ու գմբեր,  
Ամպերն ելան, — մութն ընկաւ,  
— Անգին էրիիկ, էրիք յուսաս,  
Քու շողողուն աստղն ընկաւ:  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ զայ,  
մէրքը սրտիս տուն չեմ զայ...

Կաթիւ կաթիւ ամպն է ցօղում  
Սև ու պղտոր երկնքէն.  
Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում  
Իմ անգիւման, ու սրտէն.  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ զայ,  
Վէրքը խորն է, ճար չը կայ...  
Անգութ կեանքում վէրք ստացայ  
Մրտանց սիրած ընկերէս.  
Անիսիզ կեանքում վէրք ստացայ  
Անուշ սիրած բուրիկէս...  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ զայ,  
Ազիզ բալիդ էլ չը կայ...  
Աւ, հսահակեան

89 ՊԻՐ ԵՍ ՀԱՅ ԲԼԲՈՒԼ

Ուր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ,  
Մեր հոգին էրված, մեր սիրտը եարոտ...  
Սև սուզ է պատել մեր կեանք ու օրին,  
Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին.

Վայ, սև գիշերն է մեր կեանքը մաշում,  
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում.  
Ուր ես, հայ բըլբուլ ձայնիդ ենք կարօտ,  
Զիս երգում էլ մեզ գարնան առաւօտ...

Մեր օրն ու արև մթնել սևացել,

Դժոխքի գուռն է մեզ կեանքը բացել,

Բաղդն էլ մեզանից երես շուռ տւել,

Խեղճ հային կրակի բերանն է գցել:

Էրգում ենք անմեղ, սրաներս եարոտ,

Քո գեղ ու գարման երգին ենք կարօտ,

Մարէսար ընկած՝ մենք վայ ենք կանչում,

Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում:

Քաղցած ենք, ծարաւ, անտէր, խղճալի. —  
 Հաց, ջուր ենք ուզում մեղ թոյն են տալի.  
 Մեր ձանբէն դժւար, մեր ձանբէն քարոտ,  
 Ուր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ:  
 Լեզով չի պատմեի հայի գարդ ու ցաւ.  
 Հայի արիւնով աշխարհ ներկւեցաւ.  
 Սիրտն է մղկտում, սիրտն է սևանում,  
 Ոչ ով մեր ձէնին ականջ չի դնում:  
 Ուր ես, հայ բըլբուլ, երգիդ է կարօտ,  
 Ես աև օրերին մեր սիրտը եարոտ...  
 Բըլբուլ, զու մեղ հետ տանջւում ու լալիս,  
 Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս:  
 Դու ասում էիր, ազգ իմ մի սգայ,  
 «Յուզով եմ վաղ ուշ գարուն պիտի գայ».  
 Բայց, ախ, չը տեսանք գարուն վարդահոտ.  
 Ուր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ:  
 Ա. Ծառուրեան

## 90 Գ. Ռ Ի Թ Ա. Ն

Ես գութանն եմ անգին քարեմ,  
 Կոկիկ—մոկիկ ակօս շարեմ,  
 Հողոտ արտեր լաւ կը վարեմ.  
 Ես գութանի խէրին գուրբան:  
 Մանձկալն ըսաւ՝ եղն շարեմ,  
 Արտը ըսաւ, տեղով քարեմ,  
 Խոփը ըսաւ՝ լաւ կը վարեմ.  
 Ես գութանի խէրին գուրբան:  
 Զընջին ըսաւ՝ ուզունվել եմ,  
 Լըծկանի հետ գուզանվել եմ,  
 Նոր հարսի պէս բըզանվել եմ.  
 Ես գութանի խէրին գուրբան:  
 Գոմէն ըսաւ, կողքաբան եմ,  
 Հոսովէլ տալիս՝ լաւ կը տանեմ,

Ղապալ՝ ղապի մէջ կը հանեմ,  
 Ես գութանի խէրին գուրբան,  
 Եզը ըսաւ, այլին աշեմ,  
 Ճիպոտ տալիս լաւ կը քաշեմ,  
 Ղոռատայ գոմէշ շատ կը մաշեմ,  
 Ես գութանի խէրին գուրբան:  
 Զեիչն ըսաւ, ձեհմ—դըզեմ,  
 Չանկեալ գոմէշ գութանին կուզեմ,  
 Խոփից առաջ ես կը վաղեմ,  
 Ես գութանի խէրին գուրբան:  
 Մանձկալն ըսաւ, խաշի բերէք,  
 Հօտզներ ջան, արիք կերէք,  
 Օրւայ վարը տեղը բերէք.  
 Ես գութանի խէրին գուրբան:

## 91 Ե. Ր Կ

Ա՛խ թէ երկինք գէթ մի վայրկեան  
 Լսէր կըրծիս հառաչանք,  
 Փայլէր ինձ սուրբ ազատութեան  
 Վառ, կենսատու արեգակ  
 Ա՛խ թէ և ես կարենայի,  
 Որպէս արծիս անարզել  
 Գէթ մի ըոսէ ազատ կեանքի  
 Ազատ օղում սաւառնել.—  
 Որպիսէ ջերմ լիք փափազով  
 Կարօտ պայծառ երկնքի  
 Կը թաչէի ես խնդալով  
 Դէպ, Հայրենիքս անձկալի—  
 Դէպ այն երկիր նւիրական,  
 Ուր սահեցան անխոռվ  
 Զքնաղ օրեր իմ մանկութեան  
 Լի դրախտային սուրբ սիրով:

Դէպ այն երկիր երջանկալից,  
Ուր մայրիկս նազելի  
իւր ջերմ գրկում պարզեց ինձ  
եւ կեանք և սէր, և հոգի:  
Ուր առաջին ես զգացի  
եւ սիրով վիշտ, և հրճւանք  
Ուր ես անյագ ճաշակեցի  
Կեանքի վայելք ու գգւանք...

Ախ Հայրենիք, երկիր չքնաղ,  
Երբ պէտքէ իմ խեղճ հոգին  
Հանգչէ անդորր, հանգչէ խաղաղ  
Բո կենսարոյր վարդ կըծքին:  
Ա. Ծառուրեան

## 92 ԸՆԿԵՐՆԵՐՄ

Հնկերներս վաղ են մեռել  
Ազիզ սրտեր հող են դառել,  
Չոր ծառի պէս ես եմ կեցեր,  
Հնկերներս հող են դառել:

Անգին մէջս ախ մէջը կոր  
Անկուշ հոգին աչքն է քցեր,  
Ազիզ մօրս կեանքն է հատեր,  
Չոր ծառի պէս ի՞նչ եմ կեցեր:

Ծառս ծաղկած անբեր մնաց,  
Եիլ ու ճուղքս գարնան չորցան  
Դարդի որդն էլ սիրտս է մաշեր,  
Չոր ծառի պէս ի՞նչ եմ կեցեր:

Մի վաղի էյ մաշւած սիրտ,  
Աշնան քամին հիմա կուգայ  
Ծառդ արմատով կառնի կերթայ  
Աշնան քամին հիմա կուգայ:  
Ա. Խանակեան

Օ Պ Օ Պ Ե Ե Պ  
93 ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ

Արի իմ սոխակ թնդ պարտէկ, մէրին,  
Տաղերով քուն բեր տղիս աչերին,  
Բայց նա լալիս է, զու սոխակ մի դալ,  
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:  
Եկ, արեղաձնդ, թնդ արտ ու արօտ,  
Օրօրէ տղիս, քընի է կարօտ,  
Բայց նա լալիս է, զու, ձագուկ մի դալ,  
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:  
Թող զու, տատրակիկ, քու ձագն ու բունը,  
Վույվույով տղիս բեր անուշ քունը,  
Բայց նա լալիս է, տատրակիկ մի դալ,  
Իմ որդին չուզէ սդաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, զող արծաթասէր,  
Շահի զբուցով որդուս քունը բեր,  
Բայց նա լալիս է, կաչաղակ մի դալ,  
Իմ որդին չուզէ սովզաքար դառնալ:  
Թող որսդ, արի, քաջաօիրտ բաղէ,  
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ...  
Բաղէն որ եկաւ՝ որդիս լոեցաւ,  
Ռազմի երգերի ձայնով ընեցաւ:

## 94 ԲԻՒԼԲԻԻԼՆ ԶԱՐԹՆԵԼ Է

Բիւլբիւն զարթնել է վարդին ծոցումն,  
Դէ, ննջիր սիրելիս, ասում եմ լայ լայ,  
Դու զառնիշան նախշած օրօրոցումն,  
Դէ, ննջիր մարալս, ասում եմ լայ լայ:  
Եօրղանչէդ ալխարայ, բաւթով զարդարած,  
Դօշակդ դանաւուզ բանդում կարած,

Բարձր գեղին աթլազ դոյլց լբցրած,  
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լայ լայ:  
Իստակ գիւլարաթու կապանքիդ քողն,  
Տամն ու չորս տարեկան է նորա դործողն,  
Մանր ալմաստներով ականջիդ օդն.  
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լայ լայ:  
Հարիւր մատազ մորթամ, մինչի քիզի ճարեցի,  
Թառակիդ զանազան ոսկիր կարեցի,  
Ինչքան ինձի նեղացրիր՝ անէծը չարեցի,  
Դէ, ննջիր, մարալս, ասում եմ լայ լայ:  
Տէրը քեզ պարզեի հարիւր տարի կեանք  
Անւանդ զարդարին ալլըն գովասանք.  
Խելօք որդի լինես ծնողաց պարձանք,  
Դէ ննջիր, հողեակս ասում եմ լայ լայ:  
Մայիփի Աերովէն քեզի կնքաւոր,  
Պսակդ տեսնալին էլած ուխտաւոր,  
Աստւած քեզ նորա հետ պահի բազդաւոր,  
Դէ, ննջիր, մարալս, ասում եմ լայ լայ:  
Զեռքիդ խազալիքն է կենացր թելն,  
Մի օր առանց քեզ՝ տանի ինձի սելն,  
Զարկեարի միայնակ Ռափայէլն,  
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լայ լայ:

## 95 ՆԱԶԵԻ ՕՐՈՐԸ

Քնիր իմ բալիկ, օրօր, իշ արա,  
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել.  
Կոյլ կոռնկները սուգ ու շելանով  
Մեր սև երկնքից եկան անցկացան,  
Ա՛խ մեր լեռներում նրանք կուրացան,  
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:  
Հողնն է հեծեծում սև անտառներում  
Անտէր մեռելի սուզն է այն, բալիկ,

Անտէր ու անխաղ մեռելները շատ,  
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:  
Կարաւանն անցաւ, բարձած արցունքով  
Սև անապատում ծովնկ չոքած մնաց,  
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է,  
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:  
Յուրանք եմ կապել օրօցքիդ,  
Զար աչքերի դէմ, մեր չար գուշմընի,  
Քնիր ու աճիր, շուտ արա, բալիկ,  
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:  
Դալուկ շվթունքիդ իմ կաթը սառեց  
Գիտեմ այն գառն է չես ուզում, բալիկ,  
Ա՛խ վշտիս թոյնն է քամել նրա մէջ,  
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:  
Կաթիս հետ մէկտեղ սև վիշտս ծծիր,  
Հոգուդ մէջ թող նա սև վրէժ գառնայ,  
Ծլիր բոյ բաշիր, բոյիդ ես զուրբան,  
Եւ լաց մի լինիր, ես շատ եմ լացել:  
Ա. Ահարոնեան

## 96 ՔՈՒՆ ԵՂԻՐ ԲԱԼԱԱ

Թուն եղիր բալաս, աչերդ խուփ արա,  
Նաշխուն աչերիդ քուն թող գայ վրայ,  
Օր օր օր, բալաս օր օր ու նանի,  
Իմ անուշիկիս քունը կը տանի:  
Ոսկի խաչ վզիդ՝ քեզի պահապան,  
Նարօտ կապել է ծարէն տէր պապան,  
Օր օր օր, բալաս, օր օր ու նանի, և այլն  
Մաւի յուլուններ կախել եմ ես ար  
Նազար չես առն ուլ, քուն եղիր, մի, լալ:  
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի և այլն  
Այս բանի մօրդ, անքուն աչքերով  
Անցըրէլ է օրեր օրօրոցքիդ քովը.  
Օր օր օր, բալաս, օր օր ու նանի և այլն:

Օրօցքդ օրբեմ, օրով բօյ քաշես,  
Մղկտան ձայնով սիրտս չը մաշես.  
Օր օր օր, բալաս, օր օր ունանի, և այլն  
Դուն ալ քուն եղիր, ինձի ալ քուն տներ.  
Սուրբ Աստւածամայր, բալիկիս քուն տներ.  
Օր օր օր, բալաս, օր օր ունանի, և այլն  
Գ. Ք.

## 97 ՊԱՆԴԽԾԻ ՄՈՒ ՕՐՈՌ

Սև սարեկէ մը զուլալ զուլալ կը խաղան,  
Խաղան թափեն ածաթակող աւագան,  
Աւագանէն վէր զոյդ վարդի փնջերուն  
Փնջերը ցողեն վեր մարմարէ քարերուն:  
Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,  
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն:  
Արև մօտ է ոսկէ թելեր ժողվելու,  
Հուտով դառնայ սեսսե սուզեր հանելու,  
Ա՛հ, իմ արև էլ չեմ գիտեր երբ կուգայ:  
Թէ գայ, կեանքիս, թէ սև հողիս լոյս կուտայ:  
Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,  
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն:  
Աստւած, ինչի՞ մօրը ծովով գութ տւիր,  
Կ'առորմ թեկիկ ինոր վերէն չը դրիր,  
Որ զարիքին կարօտամաշ չը մնէր,  
Որ թէ մեռնէր աչքիկ խեղճ խեղճ չը հայէր:  
Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,  
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն:  
Աստւած, ինչի՞ սիրտս գեհէն վառեցիր.  
Ու գու սարի աղբիւրի պէս մնացիր.  
Ա՛հ, ես մեղայ, ներէ, մարդ եմ, տկար եմ,  
Կին եմ, մայր եմ, որդիս ողջ-ողջ կը թաղեմ,  
Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,  
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն:

Ա՛յ եղունիկ միւար՝ ձագերդ թէ չկան,  
Շուտով կածես շուտով կանհս մտահան,  
Ա՛ն ես ցամքած մէկ հատիկս էլ հեռանայ,  
Ու ճար չկայ թէ իմ սրտիկս հովանայ:  
Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,  
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն:  
Որդեակ, որդեակ, թէ գան բարով ձիերով,  
Մէրիկ կանչես, ասեն մեռաւ կարօտով,  
Աստւած սիրես իմ գերեզման չը մոռնաս,  
Քանչիմ՝ արտսունք չոր հողերուս ընծայ տաս:  
Օրօր որդեակ, օրօր կտրիճ իմ սիրուն,  
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն:  
Տ. Ամիրճանեան.

## 98 ՎԱՆԵՑԻ ՄՈՒ ԵՐԳԸ

Պղտի տղայ, չեմ օրօրիւ օրօրանքդ որ քուն լաս,  
Հայ աղբարըդ ոտքի ելան, մինակ դժւ ետ պիտ մնաս,  
Զարթէ, հոգիս անուշ քունէդ, թնդ աչքերդ լուս տեսնին:  
Արևմուտքէն արև ծագեց, բաղդը բանեց Հայ աղգին:

Զար սուլթանի ոսկի թափալ ջարգւեցաւ, վար ինկաւ.  
Թախտի տակէն հաղար ազգաց ազատութիւն ծագեցաւ,  
Ով որ շուտով ոտքի ենէ, ազատութիւն կը գտնէ,  
Սիրուն որդիս միթէ մինակ, չար լուծի տակ պիտ' մտնէ:  
Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողագին ու լացինք  
Աղի աղի արտասունքով ձեռք ու ոտք լւացինք,  
Բայց նա չանսաց պազատանքին ողորմելի հայերուն,  
Այժմ, նայինք, նա կը լու՞ շառաչիւնը սուրերուն:

Տնւր, սիրական քակեմ ձեսքիդ պալուները արձակեմ,  
Ու այդ թուլիկ աշխիդ մէջը մի պողպատէ սուր զնեմ,  
Հստրուկ գնա արեան դաշտը, վերագարձիր պատւած,  
Արդեօք մի օր պիտի լումս մեր խնդիրը, ով Աստւած:  
Գ. Քաթիւպա

99 Օ Ռ Օ Ռ

Անուշ քնակը աչերն տաեր, ու չն  
Անուշ հովիերն է տարուբեր,  
Իս տատրակիս քունն է եկիր,  
Անուշ երգով ասեմ օր օր:  
—Ես քուն չունիմ, անզութ մայրիկ,  
Հէրիք աչքս, կապես, հէրիք,  
Մէկ պահիկէն կանեմ պաճիկ,  
Ինձ արձակիր մ'ասեր օրօր:  
Մինչև չի լան մատաղ մանկիկ,  
Ծիծ չեն իտար նրան, դառնիկ.  
Դու չը լացած, իմ մի հատիկ,  
Ես ծիծ կ'ուտամ, կասեմ օրօր,  
—Խղճռւկ սրտով ձայն ևմ ձկեր,  
Կը ճվճվամ, դու չես լսեր  
Անուշ ձայնիդ ես զմայլեր, ոզգայրա լուն  
Ես լալիս եմ, կասես օրօր,  
Արցունքներդ մարդարտի պէս  
Երեսից ցած բնչի կը թափիս.  
Մի լար, ձագուկ, մի լար մեղք ես  
Ո՞ւմ կուզես, նա քեզ ասի օրօր:  
—Քիրկդ ինձի հանդատարան,  
Ծծերդ բերնիս անուշ ծորան,  
Իրիւան դէմ պառկեմ օրան  
Աչքս փակիր՝ ասա օրօր:  
Թնացնեմ իմ աղաւնիս,  
Մեծացնեմ սիրով սրտիս,  
Կարմիր վարդի նման բացւիս,  
Շուքիդ նստեմ ասեմ օրօր:  
—Մի քիչ թուլցուր թեկրս ստքերս  
Է՛լ թմրեցաւ փափուկ մսերս,  
Անուշ մրափն առաւ աչքերս,  
Ենույ կապիր, ասա օրօր:

Էղ սուտերովդ չեմ խարւի ես,  
Կուզես որ ինձ նստացնես,  
Զը քնանաս ծիծս ուտես  
Դատարկ տեղից ասեմ օրօր:  
—Քիչ մը ձոր ձոր, քիչ մը ձար ձար,  
Քիչ մը տան տան, քիչ էլ պապար,  
Քիչ էլ պապան առ հօպպա տար,  
Քիչ էլ մէն մէն, յետոյ օրօր:  
Էղ քու լեզուդ կուտեմ հիմայ,  
Քո արշինովդ կտաւ չկայ,  
Տան տան, մէն մէն՝ էլ հարաբայ  
Աչերդ պահ պահ, ասեմ օրօր:  
—Սիրտդ քար է, էլ իմացայ,  
Լացի լացի՝ շահ չունեցայ,  
Այժմ ընեմ, էլ ձար չկայ,  
Երկար, երկար, ասա օրօր:  
Գ. Քաթիսա

## 100 ՆՆՁՒԱ ՈՐԴԻՄ

Ննջեա, որդիս, անուշ քնով  
Օրօր կասեմ ու նանի,  
Քնոյ հրեշտակ իւր թեկրով,  
Քո երեսին հով անի:  
Ննջեա ննջեա անուշ զաւակ  
Շուտ մեծացիր ու մարդ դառ,  
Հայրենիքիդ լեր պիտանի,  
Նորա արեան վրէմն առ:  
Գիտես արդեօք նվ էր պապդ  
Եւ ինչ գործեր նա արաւ,  
Նա վարդանն էր որ իւր գործով,  
Հայրենիքին փառք բերաւ:  
Քո անունն էլ նոյնպէս վարդան,  
Քաջ վարդանին նմանիր,

Նորա տւած օրինակով,  
Հայրենիքիդ ծառայիր.  
Դիտացիր որ ամենայն մարդ,  
Պարտական է իւր աղքին,  
Սիրել օգնել թէ որ պէտք է,  
Հայրենիքին դոհ լինել:  
Թէ՛, մեծացիր ու քաջացիր,  
Ազգիդ վրայ մտածիր,  
Զեռքէ դ եկած ամէն բարիք,  
Նորա համար մի խնայիր...

—o—

## 101 ԴԵՌ ԳԻՇԵՐ Է

Դեռ զիշեր է, առաւօտ չէ,  
Հանգիստ քնիր, իմ զաւակ,  
Ահա, ծիծս առ բերանդ,  
Եթէ ունիս դու փափագ:  
Թէկ դրսից քո ականջին  
Դիպչում է սուր աղաղակ,  
Քնիր, քնիր, սիրուն մանեիկ,  
Ժամանակ չէ զարթնելու,  
Մի հաւատար, որ խարում են,  
Ոչինչ չունին քեզ տալու:  
Դու քոյրերուդ մի մտիկ տար,  
Նրանք մեծ են, զառնուկս,  
Օրօր ասեմ, դեռ դու քնիր,  
Որ մեծանաս ձագուկս,  
Ահա դրի գլխիդ տակը,  
Բարձի տեղակ բազուկս.  
Հանգիստ քնիր սիրուն մանեիկ,  
Ժամանակ չէ զարթելու,  
Մի հաւատար, որ խարում են,  
Ոչինչ չունին քեզ տալու:

Օրոցքիդ մէջ քեզ պինդ կապեմ,  
Զը լինի թէ գլորիս,  
Կամ թէ լնկնիս գետնի վրայ,  
Քեզ վասես, մոլորիս,  
Մտիր Մորփէոսի գիրկը,  
Մինչ լեզու սովորիս,  
Այժմ շուտ է սիրուն մանեիկ,  
Ժամանակ չէ զարթելու:  
Մի հաւատար, որ խարում են,  
Ոչինչ չունին քեզ տալու:

## 102 ՄԱՆԻԿԻ ՕՐՈՌԸ

Բնեն եղիր, Մանիկ,  
Քնիր, իմ բալան,  
Աչք խնուփ արա,  
Հերիք, քանի լաս:  
Գուցէ բաղցած ես,  
Ուզում ես ուտել,  
Գուցէ ցաւ ունես,  
Ասա, ինչ անել:  
Ահա քեզ կաթը,  
Կեր ու կշտացիր.  
Ահա տաք շորեր,  
Դէ, հանգստացիր:  
Բայց չէ լալիս ես,  
Զես ուզում լոել,  
Թո անքուն մօրդ  
Խղճալ ու քնել.  
Դէ, եկ իմ գիրկը,  
Քեզ լայ-լայ կանչեմ,  
Լայ-լայով գուցէ  
Աչքիդ քուն բերեմ:

Լայ-լայ սիրուն, իմ Մանիկ,  
Լայ-լայ նախշուն, իմ մանկիկ,  
Մատաղ գնամ աչերիդ,  
Մատաղ կամար ունըերիդ:  
Պաչիկ կըտամ ճակատիդ,  
Պաչիկ փափլիկ թաթիկիդ,  
Գիշերը ցերէկ ևս կանեմ.  
Լայ-լայ, լայ-լայ, իմ Մանիկ,  
Լայ-լայ, լայ-լայ, իմ մանկիկ:  
«Ահա քնից Մանիկս,  
Նախշուն աչերը խռւփ արաւ.  
Դէ, այժմ արի, հրեշտակ,  
Որ պահպանես թերդ տակ»:  
Կ. Կ. Մ.-Շահնազ.



### ՄԵՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

#### 103 Գ. Ա. Ռ Ո Ւ Ն

Ահա եկաւ մեր գարուն  
Ու զարդարեց դաշտերուն.  
Գոյն գոյն ծաղկունք մեզ բերեց  
Սիրուն գարուն, մեր գարուն:  
Գոյն գոյն ծաղիկներ  
Գնանք քաղելու,  
Տէրին փառք տալու:  
Զմռան չորցած գետինը,  
Տեսէք, ինչով է ծածկած,  
Կարմիր, դեղին շուշանը  
Չորս բոլորքին է սփոած:  
Գոյն գոյն շուշաններ  
Գնանք քաղելու,  
Տէրին փառք տալու:  
Մի քայլ յառաջ մենք, իսկոյն,  
Տեսնում ենք վարդ գոյնզզոյն.  
Վարդի միջին սոխակները  
Երգում ին միշտ անհամբեր:  
Գոյնզզոյն վարդեր  
Գնանք քաղելու,  
Տէրին փառք տալու:  
Վարդի թփեր կարդ ի կարգ  
Բնութիւնից բուսել են,  
Իսկ նոցա տակ բարդ ի բարդ  
Մանուշակներ բուրում են:  
Փունջ փունջ մանուշակ  
Գնանք քաղելու,  
Տէրին փառք տալու:  
Ա. Գ. Բ.

## 104 ՎԱՐԺԱՏՈՒՆ

«Մայրիկ ինչու այս խեղճը  
Ման է գալիս գըջլտւած;»  
Ոտքը բոբիկ, գըլխաբաց:  
Ինքն էլ գընթէ միշտ հարդած»:  
—Ռոբերակ՝ դա էլ քեզ նման,  
Մի օր առայ էր փոքրիկ,  
Բայց թողեցին անխնամ,  
Նորա մօտի վատ մարդիկ:  
Չուղաբկեցին վարժատուն,  
Բարի խրառ չտւին,  
Խեղճը մնաց անուսում,  
Ծոյլ ու անդործ բնաւին:—  
«Մայրիկ չուղիմ ես նման  
Լինել թշառ այդ մարդուն,  
Այսունեւու պիտ երթամ  
Ամենայն օր վարժատուն:»

Գ. Ք.

## 105 Մ Ե Ղ Ո Ւ

Հա ծագեցաւ արեգակը,  
Հա ծաղկեցաւ մանուշակը.  
Մեղուն թողեց իր փեթակը  
Տըզարզալով, տըզարզալով:  
Մեղուն թուաւ ծաղկէ ծաղիկ,  
Մեղը առաւ քազզը անուշիկ,  
Մոմը տւաւ հոտոս լուսիկ.  
Պըզալըզալով, պըզալըզալով:  
Անուշ մեղը մանր տըզոց,  
Դեղին մոմը՝ ամին սրբոց,  
Իսկ չարերին կըմ ու խայթոց,  
Կըսկըծալով, կըսկըծալով:

## 106 ՈՐԲԻ ԵՐԳԸ

Արև, արև, դնւրս եկուր,  
Աչքդ, ունքդ ինձ ցնց տուր,  
Ճուրտից ջանըս գողում է,  
Զըլիլախս որիս առաքացնուր:  
Հօրս ու մօրս սպանաւ  
Քափիր թուրքը. ուր դնամ.  
Փարա չունիմ փառ առնեմ  
Օջաղ վառեմ, տաքանամ:  
Արև, արև շուտ արա,  
Բուք-բորանը գալիս է  
Էսօր ցըտից որ մեռնեմ,  
Էլ արեդ ընչիմ է...  
Ս. Սափ.

## 107 ԿՈՐԱԾ ՀՈՐԹԸ

Զիւն էր գալիս փաթիւ-փաթիւ,  
Հետն էլ անձրկ կաթիւ-կաթիւ  
Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթ էր պտրում զաշտի միջին:  
Կովը եկաւ տաւարիցը,  
Կուրծքը ու ծըծեր կաթնով լիքը+  
«Հորթուկս ուր է», նա բառաչեց,  
Խեղճ պառաւին լացացրեց:  
Մինչեռ այսպէս պառաւ ու կով  
Ողբում էին լաց ու կոծով,  
Յանկարծ լուեց մի բարակ ձայն:  
Կովս իմացաւ, որ հորթն է այն:  
Կովը վազեց բառանչելով,  
Խոկ պառաւը տընքունքալով,  
Կորած հորթը մօրը գտաւ,  
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծըծեց բուղը կաթն ու տկլեց,  
Տանտիկնոջը բան չըթողեց,  
Բայց պառաւը այս անդամին  
Միրով ներեց չար հորթուկիւ:

—o—

## 108 Ա. Շ Ո Ւ Ն

Աշուն եկաւ, թափւեցաւ սաղարթ,  
Էլ մի փնտրել գու մանուշակ ու վարդ,  
Բնութիւնը տխուը, պարտէզը տրտում,  
Չմեռայ հոդան է ամենի սրտում:  
Երեխան փակւած մենակ սենեակում,  
Պատուհանիցը պարտէզ է նայում,  
Միտքը բերում է գարնան օրերը,  
Մարգերի վրայ զւարթ խաղերը:  
Մի տրտմիլ տղայ, թող անցնի մարտը,  
Նորից կը բացւի նարդիզն ու վարդը.  
Նորից սոխակը պիտի գայ հանդէս.  
Նորից խաղալու գու կերթաս պարտէզ:  
Գ. Ք.

## 109 ԵՐԿՈՒ ՔՈՅՑ

Մեղնից շատ առաջ կար մի թագւար,  
Հողով գեռ արի գլխով ալեսոր,  
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,  
Ուկի ասացին գիտունը այն դարը:  
Ունէր նա երկու մատղահաս աղջիկ,  
Մինը խիստ տղեղ, միւսը գեղեցիկ:  
Մի օր տղեղը ասաց միւսին.  
«Երթանը ծովի ափ, բուրիկ միասին»:

Սիրունը գնաց առաջից տրտում  
Տղեղ ետնից ոխ պահած սրտում.  
Հաղիւ թէ ծովի ափին էր հասած  
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած:  
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.  
«Թուրիկ իմ, քուրիկ, փրկէ ինձ մահից.  
Ես ունիմ տան գեղեցիկ մասեակ.  
Առ էն քեզ լինի, պարզեւ ինձ կեանք...  
— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:—  
«Թուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,  
Կուտամ քեզ ոսկի պսակ պատւական»:  
— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:—  
«Թուրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունջ  
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտրտունջ»:  
Տղեղի սիրաը զարձել էր ժէռ քար,  
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:  
Զկնորսը ծովը ձգեց մեծ ուսկան,  
Բոնեց մարմինը սիրուն աղջըկան...  
Զրից հանեց, գրեց ափի մօտ,  
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ իրու:  
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջըկան,  
Լացեց ու առաւ, գրեց ուսի վրան,  
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,  
Չորացուց նորա մարմնու դիփ հիւթը:  
Գեղեցիկ տափիլ շինեց ոսկերից,  
Քաղցածայն լարեր հիւսեց մազերից.  
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,  
Գնաց արքունիք տափիլը ձեռքին:  
Երբ մտաւ գաճլիճ ջեղ զարդարած,  
Տեսաւ տղեղին փեսի մօտ կայնած.  
Բացեց բերանը, լարերին խփեց,  
Հիւրերի առջն քաղցրածայն երգեց.

«Հընչէ իմ տաւիդ, հնչէ համարձակ,  
«Հարազատ քոյրըս խլեց իմ պսակ.  
«Լըսէ իմ ծնող, լըսէ, սիրական,  
Հարազատ քոյրըս խլեց իմ փիսան.  
«Լըսէ ժողովուրդ, լըսէ անխոռվ,  
«Հարազատ քոյրըս գլորեց ինձ ծով»:

Միւս օր գահիճքը խարոյկ շինեցին,  
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին,  
Հուը պըլպըլաց, աղջիկը կանչեց.  
«Իմ մեղաց համար Աստւած ինձ պատժեց»:  
Գ.-Քաթ.

## 110 ՈՒԽԱԽՈՒԹԻՒՆ ՔԵԶ

Ուրախութիւն քեզ անպակաս  
Ով գու, մանուկ սիրելի,  
Ծլիս, ծաղկիս և զօրանաս,  
Տալով պտուղ արժանի:  
Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,  
Եւ շնորհագեղ, որպէս օր,  
Մանուկ, մանուկ ինձ չխարես,  
Միշտ կաց այլպէս լուսաւոր:  
Նայիր վերեւ տես, ինչ սիրուն,  
Այստեղ փայլում են աստղեր,  
Եւ անթիւ են և շողողուն,  
Որպէս երկու քո աչեր:  
Այստեղ հոգեակ բնակում է  
Մեր սուրբ հայրը երկնքի:  
Նա է, որ մեղ ուղարկում է,  
Եւ կեանք և սէր և հոգի:

Ե. Շահաղիդ

— o —

## 111 ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վաղեր ալոչափ աբագ,  
Իմ սիրունիկ նապաստակ  
Շատ փոքրիկ ես տակաւին  
Թաթիկներդ կը յոզնին.

Քեզ կը ըերեմ կաթն ու հաց  
Շաքրիջրով համեմած。  
Ուսես, խմես, զօրանաս,  
Բանից կարօտ չմնաս:  
Ծանր-ծանր կը քայլես,  
Սիրտ վեր-վեր կը հանես,  
Կարձակեմ քեզ երբ ուզես,  
Կերթաս ազատ կարածես:

## 112 ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ

— Սիրուն թիթեռ, ինձ ասա,  
Թէ ինչով հս զու ապրում,  
Ամբողջ օրը խաղում ես,  
Ի՞նչպէս է, որ չես յոզնում:  
— Սիրուն կանաչ դաշտերում  
Ես ապրում եմ համարձակ,  
Ծաղկների հոտն անուշ,  
Իմ կերակուրս է մինակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է  
Նա մի օրից չէ երկար,  
Բարի եղիր, ով մանուկ,  
Խնայիր ինձ ձեռք մի տար:

— o —

## 113 ԿԱՐԴԱԼ ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացւեցաւ,  
Սպատ խօսել սովորեցաւ,  
Բարի մօրս ձեռքի տակ  
Գիր կարդալը սկսայ:  
Չանցաւ երկար ժամանակ,  
Կարողացայ ճանաչել  
Մի քանի տպած տառեր,  
Նրանցով կարդալ—զբել:  
Շատ ժամանակ չանցկացած,  
Ինձ համար գիր կարդալը,  
Այնպէս դժւար չէր թւում,  
Ինչպէս կասեն ծոյլերը:  
Այնուհետև ինձ համար  
Հով, վէզի, գնդակի չափ  
Միրելի էր թուղթ, գրիչ,  
Գիրը, քանոն, մատիտ, տեսրակ:

## 114 Ա. Ի. Ա. Գ. Ի. Լ.

Արագիլ, բարով եկար,  
Հէյ, արագիլ, բարով եկար.  
Դու մեզ գարնան նշան բերիր,  
Մեր սրտերը ուրախ արիր:  
Արագիլ, երբ գնացիր,  
Դու մեզանից երբ գնացիր.  
Հա փշեցին բուք ու բորան,  
Ծաղիկները ամեն տարան.  
Արագիլ բարով եկար,  
Հէյ արագիլ բարով եկար.  
Բունդ շինի դու մեր ծառին,  
Մեզ մօտ մնայ ամբողջ տարին:

## 115 ՀԱՍԹԻ ԵՐԳԼ

Ահա ծագեց կարմիր արև,  
Տաք և պայծառ է օրը,  
Դէ, քաշեցէք, սիրուն եզներ,  
Յառաջ տարէք արօրը:  
Վարը վարենք, ակօս փորենք,  
Խոր ակօսներ հողի մէջ.  
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
Յորեն դիզենք կալի մէջ:  
Կը գայ ձմեռ—մեռք վախ չունինք—  
Ուրախ կանցի մեր օրը,  
Ուտելու միշտ պաշար ունինք,  
Եի և կուշտ է մեր փորը:  
Դէ, քաշեցէք, սիրուն եզներ,  
Շուտով վարենք արտերը,  
Թոնդ չասեն մեր գրացիրը՝  
Ծոյլ են չասօի եզները:

Րաֆֆի

## 116 Ա. Դ. Ա. Գ. Ի. Լ.

Աղւէս գնաց, մտաւ ջաղաց:  
Թաթեր վերուց մի բոլ խաղաց:  
Հարմյ, աղւէս, պարոն աղւէս,  
Աշխարհիք մէջ չկայ քու պէս,  
Մի կօտ ու կէս կորեկ աղաց,  
Էն էլ շալակն առաւ, գնաց:  
Աղւէս կերաւ գեղի հաւեր,  
Փարւէզ տւաւ վերի կալեր:  
Աղւէս պառկե բըչոտ կողին,  
Թաթերը գրե սպիտակ հողին:  
Ասի՝ բընենք կուզ ու աղւէս,  
Աշունք կարգեմ իմ Օհաննէս:  
Էլ դին չարաւ յէլ տարւայ պէս,  
Աղապ մընաց իմ Օհաննէս:

## 117 ՓԱՅԼՈՒԽՆ ԱՐԵՒՆ

Փայլուն արեն արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ շուտով զնաց թագ կացաւ,  
Գիշերւայ մութը աշխարհս պատեց  
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:  
Ամեն մարդ քաշւեց իր տունը մտաւ,  
Ամեն երեխայ մօր զիրկն ընկաւ,  
Միայն խեղճ որբը, որ չսնէր հայր, մայր,  
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,  
Առքերը բորիկ, տկլոր ու քաղցած,  
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:  
Բարի տան-տէրը, վերեից նայեց,  
Մեր թշւառ որբին ներս հրաւիրեց,  
Եւ այնուհետև տարաբաղդ տղան  
Ռանէր իր համար տէր ու տիրական:

## 118 ԳԻՒՂԻ ԺԱՄԸ

Տան-դօ, Տան-դօ... Նազն վեր կաց,  
Արեն արդէն մայր է մտնում.  
Տես, Խաթունն էլ գործը պրծած  
Փողոցումն է, ժամ է զնում:  
Ժամը տիխնը—տան-դօ, տան-դօ,  
Տէր, փառքդ շատ, տան-դօ, տան-դօ...  
Շուտով նախիրն հանդէց կըզայ.  
Գնանք, որ շուտ էլի յետ գանք,  
Կովը կըթենք, թ' լո-թ' ըս, կաթ տայ,  
Կովը կըթենք, մեր ցաւն հոգանք...  
Ա՞խ Նազն ջան, չես իմանում—  
Էզուց էլի աղան կըզայ,  
Նորա սիրտը միշտ անկշտում,  
Էլի ամպի պէս պիտ զոռայ.

— ՕՇՈՒՄՈՎ, Գրիգոր, փողերը բեր...  
Էլի չկայ, կովդ հանիր»...  
Ա՛խ, Նազնու ջան, այս ինչ բան էր,  
Միտդ է հէրու... Տէր, դու փրկիր:  
Հայրիկդ արդէն գնացել է,  
Որ փող ձարի, երբ պիտի դայ,  
Տեսնենք մէկը խղճացել է...  
Ա՛խ, սև օրը Տէրն էկ չըտայ:  
Շուտով, Նազնու, գնանը ժամը,  
Աղօթը անենք, քո ձայնն Աստւած  
Շուտով կըլսի—այս անդամը  
Մեղ չի թողնիլ անկով, անհաց,  
3. Յովհաննիսեան

## 119 ՆՈՐ—ՏԱՐԻ

Ահա հասաւ նոր տարի,  
Հետը բերաւ նոր խարի,  
Մանը տըղոց ուրախ օր,  
Բարի զաւակ հօրն ու մօր,  
Մանը տըղայըն են ուրախ,  
Ունին կաղին գողինախ,  
Սալորի չիր չամիչ, թուզ,  
Փլշատ, ունար և ընկուզ:  
Մանը տըղայը չմոռնաք,  
Աշխարհումն չէք մենակ,  
Ուրիշ շատ խեղճ տըղայը կան,  
Ազքատ և անօգնական:  
Նոքա հայր ու մայր չունեն,  
Սև չոր հացի կարօտ են,  
«Եղքատներին ողորմած  
Եղէք», կասէ ձեզ Աստւած:

## 120 ՃԱԽԱՐԱԿ

Մանիր, մանիր իմ ճախարակ,  
Մանիր, սիպտակ մալաչներ,  
Մանիր, թելեր հաստ ու բարակ  
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Զէթ եմ ածել ականջներդ,  
Նոր շինել եմ շըտըփիկ,  
Դէհ շուտ շարժիր լայն թեներդ,  
Ռստեր շինիր սրուլիկ:

Մանիր մանիր իմ ճախարակ,  
Լիսեռնիկդ պըտըտիր  
Մանիր թելեր հաստ ու բարակ  
Իկիդ վրայ փաթաթիր:

Տիզըանիկս գուլբայ չունի,  
Հանդ է գնում ոտարաց,  
Գարըիէլս չուխայ չունի,  
Միշտ անում է սուգ ու լաց...

Չուալ չունինք, չաթու չունինք,  
Ո՛չ սամոտէն, ոչ պարան,  
Ալպէս աղքատ դեռ եղած չենք  
Կտրւել է ամեն բան:

Դեռ հարս էի որ գործեցի  
Քանի կարպետ, խալիչա,  
Բայց գրանցից շուտ զըկւեցի,  
Հիմա չունինք մի քեչա...

Կարմիր օրս երբ սեացաւ,  
Եւ պարտք մնաց, թէկ քիչ  
Պարտատիրոջ սիրտն էլ սեցաւ,  
Եկաւ տարաւ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր, սպիտակ մալանչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Դ. Աղայեան

## Խ Ը Ռ Ն Ե Ր Գ Ե Ր

## 121 ԱԼԱԳԵԱԶԻՆ

Սեւմութ ամպեր ճակտիդ դիզւան,  
Դուման հագար, Ալագեանգ,  
Սըտումս արև էլ չի ծաղկում,  
Սիրտս էլ դուման, Ալագեանգ:

Զառ փէշերդ անցայ, տեսայ,  
Առանց դարդի սիրտ չը կար.  
Ա՛խ, իմ դարդըս, չան Ալագեանգ,  
Իմ դարդիս պէս հէջ չը կար...

—է՛յ, Մանթաշի նշխուն հաւքեր,  
Իմ դարդըս որ՝ ձերն եղնէր,  
Ձեր էդ զաւ—վառ, խաս-փետուրներ  
Կը սենային, քանց գիշեր:

—է՛յ, Մանթաշի մարմանդ հովեր,  
Իմ դարդըս որ ձերն եղնէր,  
Ձեր ձաղկանուշ բուրմունքը նուշ  
Թոյն ու տօթի կը փոխւէր:

Է՛յ վախ... կոտրան իմ թեներըս,  
Բնկայ գիրկըդ, Ալագեանգ.  
Ա՛խ, մեծ սըրտիդ սըդմեմ սիրտըս  
Լամ, արուն լամ, Ալագեանգ...  
Աւ. իսահակեան

—o—

## 122 Կ Ա Ր Օ Տ

Խօրօտ թռչնիկ թըսի գնայ,  
Իմ դարիբէն խապրիկ մի բեր,  
Բնցի սարեր, շրջի ձորեր,  
Իմ դարիբէն խապրիկ մի բեր:  
Բարակ առու, դու բո՞ Աստւած,  
Իմ դարիբէն խապրիկ մի բեր,

Իմ սիրա մըսմուսն ասի՞ կեփէ,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր,  
 Մեռել յարոց մարմանդ քամի,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր,  
 Բէհուտա տեղ մի սլուջլա,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր:  
 Ա՛խ, դու խօրօտ հոտուն ծաղիկ,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր,  
 Գնա ուր մօտ թըխ հոտ բաշա,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր:  
 Իմ հալալ քուր պոծառ լուսնակ  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր,  
 Շողքդի քըցէ ճամբխու վրէն,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր:  
 Գու զ՞որ մնացիր արես շողք,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր,  
 Գնա ինոր սև սիրտ կարդա,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր:  
 Ղարիբ բլբուլ, զէմ ասա  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր,  
 Ղարիբիս ձէնն ու քուկ մէկ է,  
 Իմ զարիբէն խապրիկ մի բեր:  
 Արի զարիբ, բաժիդ մեանիմ,  
 Արի, քանի որ չեմ վառի,  
 Արի էրեսդ մէկ էլ տեսնեմ,  
 Քանի հոգիս դեռ չը թըռի:

## 123 ԱՐԾԻԻ ԵՐԳԻ

Գարահիսար լերան կըծըին,  
 Նա էլ լնկաւ վիրաւոր,  
 Կուրծքը պատռած, սիրտը խոյւած,  
 Վար թշնամու գնդակով:

Ժայռոտ լերան լերկ կատարից,  
 Վար սլացիր ով արծիւ,  
 Թեհերդ բաց, լայն թեհերդ,  
 Ու ջիւանուն հով արմ...  
 Խոցւած սրտից մուգ արիւնը,  
 Կաթիլ կաթիլ կծոցայ,  
 Ա՛խ ջիւանու կեանքն է հոսում,  
 Ցաւոտ կրծքի լայն վէրքից...  
 Ժայռոտ լերան լերկ կատարից  
 Վար սլացիր սև արծիւ,  
 Թեհերդ բաց, լայն թեհերդ,  
 Ու ջիւանուն հով արմ...

## 124 ԵՍ ԵՐԿԵՑԻ

Ես երգեցի մի երգ յուղւած,  
 Զանգիղայի մօր մօտը,  
 Նա փարատեց իւր կասկածը,  
 Առաւ որդու կարօտը:  
 Թշւառ մայրը զեռ չզիտէր,  
 Թէ Զէյթունն է իւր որդին,  
 Իմ զիւցազնի երգից լսեց,  
 Որ ապրում է սիրելին,  
 Լսեց նոր նոր յաղթանակներ,  
 Լուրեր հարցուց Բաշկալից,  
 Հուրաց—փայլեց սև աչքերը,  
 Ինչպէս կրակ բոցալից:  
 Շանթի նման լի շեշտերով—  
 Կրկնեց որդու անունը,  
 Մայրական վեհ զգացումունքով  
 Յայտնեց իր երջանկութիւնը...  
 «Ես բախտաւոր մայր եմ ասաւ,  
 Արդէն հասայ փափազիս,  
 Պատմութիւնը դափնեայ պսակ—  
 Պատմատել է զաւակիս»—  
 Ցանցատ

## 125 ԿԾՈՒԽՆԿԻՆ

Բարով եկար սիրուն կառւնկ,  
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս,  
Խօսիր ինձ հետ ազատօրէն,  
Կեանքս կընտիրեմ ես քեղ:

Տեսամբ իմ հայրենեաց տունը,  
Դեղեցիկ զարդարւած գոյնը,  
Նորա սիրուն տանջւում եմ,  
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ անսամբ մեր լնոները,  
Հազորդեցի՞ր դու իմ սէրը.  
Այն լեռներու պաշտպանողը,  
Սրծեփ կորիւնի նետերը:

Տեսամբ մեր փոքրիկ բուրաստան  
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,  
Եղեմական գրախտավայր,  
Նա կոչում է Հայաստան:  
—Այստեղ ունիս եղբայր ու քոյր,  
Միջադ թնչ կապասես ի զուր,  
Արի առնեմ իմ թևերուն.  
Գնանք այստեղ ուրախացուը.

—ο—

## 126 ԱՂԵՆ ՏԱՐՆՆ Է

Զարմանք բան է, հէսց գիտենասս,  
Սղէք տանը չին նըստում.  
Խոկի չէլաւ. զուր մի դըթնիմ  
Աղախին իր աղնում:  
—Մի՛ արմնաւ, պարուն Սարդիս,  
Էս ոշխարքի ադաթին,  
Իշխանք, գանա, զու խաբար չիս,  
Վուր բասիրին կու ատին.  
Ա՛ռ օրինակ, թէ մեծավուը,  
Աղալիտնիրը ուսին,

Դայ դըրան մօտ, հարցնէ աղին,  
«Տմնն է»—տանն է, կոսին:

Նըրա էդնից մի փէշաքար,  
Էլի էն նօքրին հարցնէ.

«Տմնն է աղէն». կընծին տալով  
Խեղճին իսկոյն դուս կօնէ:

Թէ աղի մօտ լաւ շուրերով  
Կու զամ տանը կու գըթնիս.  
Վայ թէ չուխէդ հընացած է,  
Լաւն էն է, տուն չի մըտնիս:

Թէ սալօպով աղջիկ պարոն  
Կուզայ՝ թող ներս հրամայէ,

Թէ ղաթիպով պառաւ ջալօն  
Հարցնէ՝ կոսին տանը չէ:

Թէ վուր ձեռքիդ քիսա բըսնած,  
Պարոնին փուղ բերիլ իս,  
Փառք ու պատուով ներս մտնում իս,  
Գլխի վըրայ տիղ ունիս:

Թէ դուքանդար իս, հիսարով  
Փուղի էդնից իս էկի,  
«Տմնն է աղէն», կոսին—հալա  
Ժամիցը տուն չի էկի—

Էս է հիմիկուայ ադաթը—  
Կուզես ջիզրից տըրաքի.

Թէ քասիր իս, ջուրը նընկի,  
Թէ խօջա իս՝ տունը մըտի—  
Գ. Քաթիպա

—ο—

## 127 ԴԱՐԻԲԻ ԵՐԳԻ

Օխալ տարով, օխալ սարով,  
Այ սիրական իմ աղխարէ,  
Հեռացել եմ քեզնից լալով,  
Դարիբ ընկել սարէ սարէ

Կեանք եմ մաշում, սև օր քաշում,  
Բնկած խալսի դռներին.  
Քո-սէրն է ինձ էրում, մաշում,  
Հողին կը տամ էդ սէրին...  
Կ'ուզեմ հողիդ կարօտն առնեմ,  
Հող ու ջրիդ ես զուրբան.  
Բայց հնց անեմ՝ ճանքէդ բանեմ  
Բաղդն է կապել իմ ճամբան:  
Վայ զարիթին օրն՝ օր չի,  
Վայով կեանքն է անցնում.  
Դուրսը մեռնի, չօլում կորչի—  
Ո՞վ է խեղճին հարցնում...

Ա. Ծառուըեան

## 128 ԳՆԱՑԻ ԴԱՇՏԸ

Գնացի դաշտը ման գալու,  
Հազար ըռանգ ծաղիկ տեսայ,  
Մէկն ուզեցայ եարիս տալու,  
Որ ինչ է մէկ հետս խօսայ:  
Ալ ու զումաշ փուել էին,  
Լեզու չկար, լուել էին,  
Խոտերի մէջ խրւել էին,  
Ինչպէս նոր պսակւած փեսայ:  
Կարմիր կակաչն ու ճշնարօտ,  
Աղբբանց արուն, խօրօտ մօրօտ,  
Դեռ նոր էր բացւած առաւօտ,  
Ափսոս, բացւելուն չըհասայ:  
Խեղճ մանուշակ տափ էր կացի,  
Վարդն իր ծաղիկ նոր էր բացի,  
Մօտեր կանգնած կուշտ մի լացի,  
Մարդ չիմացաւ թէ ինչ բասի:  
Արտուտն ու դարավիդ լոր,  
Սև ապոնեկ կարմրիկ փոր,

Մարեկն ու աղաւնին էսօր,  
Կը գըլգըլին՝ ճայներ լսայ:  
Խեղճուկ Խլղաթ սրանք տեսար,  
Մէկը չեղաւ հետդ խօսար,  
Էլի մուրազիդ չը հասար,  
Քու խալն ու տաղ յուշիկ ասա:

## 129 ԳԼԳԱԼՈՎԸ ԶՈՒՐ Է ԻՉՆՈՒԻՄ

Գլգլալով ջուր է իջնում,  
Մշոյ մշուշ սարերէն,  
Ծիծեռները ծիւ ծիւ եկան,  
Գարնան գալը երգելէն:  
Գարուն չը կայ հայու համար,  
Ծաղիկ ծիծեռ մեղ պէտք չեն,  
Գերեզմանս հողին հաւասար,  
Թող փուշ բըմնի իմ վրէն:  
Գնա ծիծեռ, թհա ինձ մենակ,  
Վէրքը սրտիս հողի տակ:  
Բայց երբ տեսնես թշնամու դէմ,  
Հայ ժողովուրդ սարի պէս,  
Զէնքը ձեռին հպարտ կանդնած  
Կուրծք դէմ տւած ժայռի պէս,  
Ա՛խ այն օրը արի ծւայ,  
Գարնան գալը նոր կանչէ,  
Հայոց գարնան, որ փիւր բարկ  
Միւսու խորէն զօղանչէ...  
—○—

## 130 ՄՈՒԻԹԸ ԳՐԿԱԾ

Մութը գրկած գետ ու գետին,  
Հով ու ալիք կը ծփան.  
Երկինք գրկած աստղ ու լուսին,  
Լուռ կը ննջէ ախուրեան:

— Սիրտս, սիրտս, թոյլ կը գարկէ,  
Սէր ու երգեր էլ չը կան.  
Նոր էր ծլեր,—արև սիրեց,  
Արև-աշեր էլ չը կան:  
    Վառ աստղերը երկնուց ընկան,  
Վարդ ու շուշան թառամեց.  
Ա՛խ իմ կեանքս, անուշ կեանքս  
Կտոր-կտոր փշըուեց...  
    Հովն ու ալիք կուզան-կերթան  
Յաւած սիրտս կը շոյին.  
Ու իմ սիրուս մըմունջներէն  
Տխուր երգեր կը հիւսեն...  
    Աւ. իսահակեան

— o —

## 131 ՊԱՐՁԻ ԵՐԳԸ

Իբրե արծիւ սաւառնում ես լիռ ու ժայռ,  
Թնդացնում ես երկին գետին տենչավառ  
Սուրբ անունդ պիտի յիշւի դարէդար  
Հսկայ լերինք քեզ ապաստան . . .  
    Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,  
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը.  
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը  
Չը ցամաքի մինչ յաւիտեան . . .  
    Հայոց կուսանք, դափնիայ, պսակ թող հիւսեն-  
Քնքոյշ ձեռ ամբ քո ճակատը պսակեն.  
Գոհարներով անվախ կուրծքդ դարդարեն  
Կեցցեն յաւէտ դու անսասան . . .  
    Հայաստ անի սոխակները քեզ համար,  
Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար,  
Անյաղթ մնաս, դու քաջ, կուի սիրահար,  
Հայրենիքի տէր ու պաշտպան . . .

## 132 ՊԱՐՁԻ ԱՂԲԻՒՐ

Պարզիր աղբիւր, պարզիր քեզնից ջուր տանեմ,  
Պարզիր, պարզիր ըէկի տղին ջուր տանեմ:  
    Աղբիւր զիտեմ քիւրզը մեզի ինչ կանէ,  
Կը կողովտէ, կը չարչարէ կսպանէ:  
Կար ժամանակ, որ մենք էլ աղատ էինք,  
Մեր սեփական թագաւորներ ունէինք:  
    Գաճ ու փառքից սղատ կեանքից գրկւեցինք:  
Երինարբու թշնամու ձեռք մատնըւեցինք  
Դէս, շուտ պարզիր բէկի տղին ջուր տանեմ:  
Պարզիր, պարզիր, Խան-Մուրատին ջուր տանեմ:

— o —

## 133 ԻՆՉ ՑԱՀԱԼԻ ՎԻՃԱԿ

Ի՞նչ ցաւալի վիճակ, ի՞նչ դառն հարւած,  
Հանդիպեցաւ քեզի, ընկեր պատւական,  
Մի ստոր թշնամի, դաժան արարած,  
Քո անդին կեանքիդ՝ շուտ տւեց վախճանո  
    Դու ազդի պարծանք, անդամ պատւառը,  
Լեզուդ քաղցը անուշ, ճարտար հոետոր,  
Անվախ համարձակ խօսելու սովոր,  
Զրկւած ճնշւածին էիր սիշտ պաշտպանո  
    Կազմդ յաղթանդամ, պատկերդ քեզու,  
Խաւարի դէմ մրցող, զրիչդ ուժեղ,  
Սև մահւանդ գոյժը ցնցեց ամեն տեղ,  
Ողբում են ընկերքդ, ծնողքդ, ազգական  
    Երկար տարիներ անդուլ անդասար,  
Ծառայելով անկեղծ, Սուրբ գործի համար,  
Վերջ ի վերջոյ գաղափարիդ զոհ եղար,  
Պատմութիւնը քեզ միւտ կը յիշէ յաւիտեան  
    Աշբ Զամալի

## 134 ՀԱՅՐԻԿ-ՀԱՅՐԻԿ

Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք  
Վասպուրական մեր աշխարհ;  
Վարդի փոխան քեզ վուշ բերաւ,  
Ցաւերդ դառան փիւր հաղար;  
Մայիսն եկաւ սոխակներով,  
Վարդի մի թուփ որոնեց,  
Փոխան թիի մացառ գտաւ.

Լալահառաչ ձայն հանեց:  
Հայրիկն ասաց իմ հայրենեաց,  
Փուշն անուշ է քան զվարդ,  
Ես այն փոց մէջը, դարձեալ,  
Կը որոնեմ սիրուն վարդ:  
Ոյն սայրասուր փշերն ամեն,  
Փունջ կապեցէք շարի շար,  
Թողէք գլխիս պսակ կապեն,  
Որուն ճակատս է յօժար:  
Հայրիկ, հայրիկ, քո սուրբ ճակատ,  
Արիւն արցունք են ո՛հ միշտ,  
Փթթեալ վարդից կարմիր թերթերը,  
Կը պսակեն փառօք զարդ:

—o—

## 135 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԻԵՐԻՑ

Ես գնում եմ հեռու երկիր,  
Իմ սիրելի թանկադին.  
Բաժանւում եմ ես քեզանից,  
Գուցէ կըկին չը դառնամ:  
Վեր կաց, սիրուն, քո ձեռքովդ,  
Մէջըս կապէ սուր, նիզակ,  
Պատերազմի փողը հնչեցին,  
Պիտի մտնեմ զէնքի տակ.

Մնաս բարնվ իմ սիրելի,  
Իմ թանկագին բարեկամ,  
Միշտ աղաչէ Աստւածանից,  
Որ կենդանի հետ դառնամ:  
Հայրենիքի սիրոյ համար,  
Աշուղ երգիչ եմ դառել,  
Գերեզմանս մէկ քարի տակ,  
Դուք պիտ ծածկէք սև հողով:

—o—

## 136 ԴԱՐԴՈՏ ԵՄ

Դարդոտ եմ, դարդաքաշ եմ,  
Մարի չափ դարդ կը քաշեմ,  
Դարդը դիր դարդիս վրայ,  
Էն էլ ես կը քաշեմ:

Մօրից տնից ձեռ քաշի.  
Միրու խաթեր ձեռ քաշի,  
Ազիզ եարիս որ տարան,  
Զոր գլխուցս էլ ձեռ քաշի:  
Դօխիկ ջան, ես ինչ անեմ,  
Կարօտդ եմ ես ինչ անեմ,  
Ես կերթամ, սիրոս չի երթար.  
Դուն կ'երթաս ես ինչ անեմ:  
Կեանքս գնաց յետ չի դայ,  
Հաւք էր թռաւ յետ չի դայ,  
Մարդու սիրալ որ կոտրաւ,  
Կեանք էլ գնաց յետ չի դայ:

Աւ. Խանակեան

## 137 ՀԵՌԱՅԵԼ ԵՄ

Հեռացել եմ հայրենիքս,  
Եւ իմ ծնող մայրիկէս,  
Անցան գեղեցիկ օրերս,  
Անցան ժամեր թանգագին:

Ո՞չ ինչ անբախտ վիճակի եմ,  
Որ ես նստած եմ քանտում,  
Ինչպէս սոխակ գեղեցիկ,  
Չարչարւում եմ վանդակում:  
Ես ընկերներ շատ ունեի,  
Եւ բոլորն էլ պէտքական,  
Հէնց որ ընկայ բանտի մէջ,  
Էլ չեն յիշում մէկ անգամ:  
Ծնողներից զրկւեցայ,  
Եւ կը զրկեն հայրենիքից,  
Կուղարկեն ինձ հեռու երկիր,  
Էլ չեմ ազատւի մահից:

—o—

## 138 ՀԱՅԴՐԻԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկել եմ քեւրդերի մէջ,  
Արնաշաղախ վէրքով լցւած,  
Ինձ կարծել են մեռած,  
Թողել գնացել են.  
Ես այս արեան դաշտում,  
Անտէր անտիրական.  
Կիսամեռ թշւասս ինչ անեմ.  
Մնացել եմ անօդնական:  
Երբ նայում եմ լուսնի լուսով,  
Հաղարներով փուած գետին,  
Սատկած և վիրաւոր,  
Շարափ բէկի քեւրդեր,  
Մըմնջում են մելամաղձուտ,  
Հէք դլօներ.  
Տեսարանն ուրախալի էր,  
Թեթևանում էր իմ վշտերը:  
Քրդական լաց-կոծի միջից,  
Յանկարծ լսեցի, մայրիկ ջան,

Ա՛խ, այդ աղդու—  
Հառաչանքն էր հայկական,  
Գնացի դէպի նորան,  
Տեսալ՝ ընկերը էր,  
Զինոր էր նա վէրը ստացած,  
Արեան դաշտ ընկել ինձ նման:  
Զեռք մեկնեցի մտերիմիս,  
Ասի, նայիր չորս բոլորդ,  
Տես և հոգի ստացիր,  
Հայի յազթութիւնից,  
Միծ է ջանփիղանը,  
Փառք իւր գրօշակին,  
Յաղթութիւնով ոգնորւած,  
Հեռացանք այն արեան դաշտից  
Երուսաղէմի դաշի պէս,  
Տեսէք վէրքերուս տեղերը,  
Հաւատացէք հայ զինորի—  
Ուզդութիւնը,  
Որ չէ խնայում ձեզանից—  
Իւր արիւնը,  
Ազատութեան գոհերն ենք,  
Կարեկից անձնւէր սրտով:  
Ֆահրաս

## 139 ՄԱՅԿԱԼ ԵՐ

Մաճկալ ես բեզարած ես,  
Առը շուռ տուր, շնւռ արի,  
Ծովի պէս բրտնած ես,—  
Եղներն արձկի, տուն արի,  
Կաթի սերը քաշեր եմ,  
Դրեր եմ հովին սառի,  
Ալ-զողնոցս փոեր եմ,  
Արի, թառլան թը՛ռս արի:

Տեղ եմ քցեր շուաքում,  
Քամին կուզայ զով կանի,  
Լուսնի շողքն է մեր ծոցում,  
Չափ տուր, չափ առ—չուստ արի  
    Դատրած, բեզարած եար ջան.  
Ամպեր եան—դէհ, արի,  
Բեզարած ջանիդ դուրպան,  
Ծտից թև առ, թէղ արի...  
Աւ. հսահակեան

—o—  
140 ԻՄ ՍԻՐՈՒՀՈՒՄ

Միլուններ դուք միք նեղանայ,  
Որ մշտական իմ եարս եմ գովում.  
Միք նախանձւի, միք դարմանայ,  
Որ պատւական եարս եմ գովում.  
Թէկուզ լինիք ասաղ ու լուսին,  
Անդաւաճան եարս եմ գովում.  
Ինչ կայ նրան այն չկայ ձեզ,  
Իմ աննման եարս եմ գովում:  
  
Դուք խեղճերու արհամարհող,  
Հարստութեան երկրպագող,  
Պար ու խնջոյք—շոայլութիւն,  
Աննպատակ ցոփի կեանք սիրող,  
Կեանք մեոցնող կօրսէտներով,  
Զարդի համար հոգի տուղ,  
Այդ բոլորին արհամարհող,  
Իմ գովական եարս եմ սիրում.  
  
Չեր զէնքերը արդուզարդն է,  
Յառաջ եկէք շորով ոսկով,  
Աշխատէք որ մարդ գրաւէք,  
Անքնական շինծու խօսքով,  
Քնութեան չէք դիմանայ,  
Խիստ աղքատ ու խեղճ էք դործըով,

Գործքով պահանջիս համաձայն,  
Ինձ օգնական եարս եմ գովում:  
Դարդամոլ կուոք, կանացի  
Սիրս, ոսկոյ մարդարտի դուլ չէ,  
Իսկական իւր փոքրերուն մայրը,  
Տնտեսական գործին ծոյլ չէ,  
Փչած տիկ—ծոկըտան տիկին—  
Ների նման անգործ թոռլ չէ,  
Գործքով եռուն, կազմով առողջ,  
Իմ սիրեկան եարս եմ գովում:  
  
Իւր մարդուն զբամը տալով,  
Մեծ բարեգործ չէ ձևանում,  
Հօր կարողութեան արդիւնքով,  
Բարերար չէ հանդիսանում,  
Իւր շնորհ—ձիրը ու տաղանդով,  
Փող աշխատում արցունք սրբում.  
Դրա համար անուշ ազնիւ,  
Իմ զիտնական եարս եմ գովում:

Փահպատ

—o—  
141 ՍԻՐՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Բարտվ ես եկել ծիծեռնակ սիրուն,  
Ի՞նչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,  
Գիտես որ մենք միշտ աշբներս յառած.  
Քեզ ենք սպասում ամեն մի գարուն.  
  
Գլուխս ծռած խեղճ ու հեզ,  
Աղաչում եմ ահա քեզ,  
Եկել ես հայերենիքից  
Ի՞նչ աւետիս բերեր մեզ,  
Եկել ես հիւր առա մի լուր,  
Մի սպասէ զուր,  
Լեզովդ սուր աւետիս տուր,  
Մեզ ուրախացուր:

Ինչ լուր ես բերել սիրուն ծիծեռնակ,  
Դու հայրենիքից աստ եկած թռչնակ,  
Ասա, ինչպէս է իմ հայրենի տունը  
Խօսիր ինձ հետ աղատ համարձակ:

Ասա մի բան իմանամ,  
Որ քեզանից գոհանամ,  
Ռւրախացուր սիրոս իմ,  
Տարակուսւած չմնամ,  
Դու ալացար սարէ սար,  
Մինչ այստեղ հասար,  
Դու ինձ համար բարով հկար,  
Ասա մի խապար:

## 142 Զ Ա Ն Գ Ի

Զանդին կուզայ, Զանդին եկաւ զնդալով,  
Քաղ ու բախչի միջէն կուզայ՝ հանդ առնելով,  
Ալագեազի սարէն կուզայ փրփրալով սօթ  
տալով,  
Սրտիս խորքէն ելիլ կուզայ վոադ վոադ  
զնդալով...  
Էս ինչ տեսակ ցաւ կայ սիրոս, անտուն  
դարիալ եմ դարձել.  
Հալալ Զանդի տուն տեղ թողած՝ քեղ հետ  
լնկեր եմ դարձել,  
Անդին մօրս մինակ թողած՝ ժէոիդ ծոցին  
եմ կպել,  
Սիրոս մուրատ, սիրոս կարօտ մի անբուն  
հաւք եմ դարձել...  
Փուս ու դուման կելնի սարէն, վայ, վայ,  
չլինի՞ ձիւն եկաւ,  
Դաշտ ու դուրան, ճար ու ճամբայ չլինի՞  
իրան տակ առաւ,

Զանդին, Զանդին, մատաղ ձէնիդ, մել սարից  
մի ծաղիկ բեր,  
Անդին մօրս արտըսուքը, — անդին մօրէս  
խաբար բեր.—  
Քութիկներիս, ընկերներիս սրտի սէրը  
պոկէ բեր,  
Վառւած սրտիս, կարօտ սրտիս, ախ, Զանդին  
ջան, մի գեղ բեր,  
Ժողովրդնան երգն ու մըմունջ, վիշտ և տրատոնջ  
շուտ ինձ բեր,  
Զըիդ ձէին, ջրիդ երգին մատաղ լինեմ,  
Զանդին ջան...

Դումանն առաւ սարի չորս գին, գումանն  
առաւ իմ սրտիս,  
Զանդին կուզայ Ալագազէն զընդալով,  
զընդալով,  
Սրտիս ցաւին դարման չըկայ, խապար չըկայ  
իմ երկրէն...  
Ես հնց մնամ անհայրենիք, ես հնց մնամ  
անընկեր...  
8. Կոստանեանց

## 143 ՀԱՅ ԶԻՆԻՈՐ

Մասիսի ճակտին ամպրոպ պատոեցաւ,  
Հայերուս սրտէն վախ փարատեցաւ,  
Նժոյգ է տակըս, ձեռիս այնալու,  
Սուլթան ունիս ոյժ ինձ դիմանալու.  
— Ըստրուկ եմ եկել կը դառնամ աղատ,  
Ֆետ խած քեզմէն հողն իմ հարազատ:  
Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս—  
Զոհել մարմինս, զոհել և հոգիս,  
Արհամարեկ սով և անդորրութիւն,  
Տալ Հայաստանին սուրբ աղատութիւն.

—Ստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,  
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ:  
Ել ես ահ չունիմ քո վախկոտ զօրքէն,  
Զգւած եմ ես բու շարեաթ օրէնքէն.  
Մշու դաշտերը վան ու էրզրում,  
Կ'լանան տաճկի սև ու պիղծ արիւն.  
—Բնտրուկ եմ եկել, կը դառնամ ազատ  
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ:

Գ. Քաթիստ

## 144 Ա. Ի Ա. Զ Ի Ն

Արագ տակդ մի փորէ,  
Առանց դրան նա խոր է,  
Արագ վնտրած ինձի տուր,  
Կամ թէ ասա նա հոր է,  
Զիւան բալէս կտրիճ էր,—  
Տանը նստելը կամաչէր.—  
Եկաւ որ անցնի զնայ.—  
Ճամբէն կտրել ամօթ չէր:  
Արագ, արգեօք դու գիտես,  
Որ անհոգի մի գետ ես.  
Աչքերդ փակ կտաղի,  
Մուրազով մարդ կը խեղդես:  
Մութ ջրերիդ ծալերում,  
Բալիս հայեացքն եմ տեսնում,  
Որդեկորոյս մի մայր եմ,  
Արագ, քեզ եմ անիծում:  
Արագ քո ջուրը վարար,  
Մի տար ցաւերս իրար,  
Արագ եթէ դու կտրաս՝  
Վերջին շունչս բալիս տար...

Ա. Խնկոյեանց

—o—

## 145 Ա.Խ Մեր ՄիրՏՀ

Ա՛խ, մեր սիրտը լիբը դարդ, ցաւ,  
Օր ու արև չը տեսանք.  
Վախ, մեր կեանքը սեով անցաւ,  
Աշխարհից բան չ'իմացանք:  
Հարուստ մարդիկ կուտեն խմեն  
Աշխարհի ճոխ սեղանից.  
Մենք աշխարհի խորթ տըղերքն ենք,  
Մեզ փայ չկայ աշխարհից:  
Խեղճ աղքատի հոգին դուրս կայ  
Քարից հողից հաց քամէ.  
Բնոով հացը հարըստին տայ,—  
Հարուստն իշխէ վայելէ:

Խեղճ աղքատը դառը դատի—  
Դադարկ նըստի... էյ, աշխարհ,  
Ել բնչու ես քարը թողնում  
Քարի վըրայ, քար-աշխարհ:

Ա՛խ, մեր սիրտը լիբը դարդ, ցաւ  
Օր ու արև չը տեսանք.  
Վախ, մեր կեանքը սեով անցաւ,  
Աշխարհից բան չ'իմացանք:

Ա. Խստակեանց

## 146 Շ Ա. Ի Ք Ի

Այսքան տարի գու ննջեցիր, բաւ է, բաւ,  
Տիրութիւնդ ողջ հայերիս ցաւ է, ցաւ,  
Արև եկաւ քո գլխիցդ անցկացաւ,  
Զարթիր, զարթիր իմ աննման անձկալի,  
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:  
Փարուն էկաւ, ձմբան դուրս զոցւեցաւ,  
Սպասելով մեր սրտերը խոցւեցաւ,  
Գիշերն անցաւ, առաւօտը բացւեցաւ,  
Զարթիր, զարթիր, իմ աննման անձկալի,  
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

9

Աղաչում եմ ինդրում մայրիկ, արթնացիր,  
Քո արարքէդ դու ամաչիր, դու երկիր,  
Քոյրերիցդ ողջիցը ես մացիր.  
Զարթիր, զարթիր, իմ անսման անձկալիւ  
Տհոռթիւնդ է ամենիս ցանկալիւ:

## 147 ՔՐԴԱԿԱՆ ՄՈՐԾ

Լօ, լօ, լօ,—Սիփանա սէգ սարի վերայ,  
Կտրիճները շտապով գալիս են միանում,  
Սյնտեղ անվախ որդիք հսկայ լերան վերայ  
Զէնը ու զբանի են ընտանում:

Ահա վառում են՝ զինուում,  
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,  
Արինը նրանց բորբոք սրտի մէջ եռում,  
Թոշում անցնում անհամբեր,  
Զերթ Սիփանա պինդ քամին,  
Սլանում են դէպի ցած,  
Դաշտի միջին թշնամուն պատահում են  
Եւ միծ վրէժ անմոռաց—  
Ահեղ կռւում նրանցից առնում,  
Հատու սուսեր հանում,  
Ցեղագետին են սպանում,  
Եւ զերթ կիզող հուը վառում:

Այժմ բոլոր ցեղն ստի կպնդնած  
Թշնամու դէմ մահառիթ մարտի է կանչում—  
Արեան մեծ վրէժը թշնամուց պահանջում,  
Եւ թշնամին պարտըւած  
Թողնում փախչում սարէ սար  
Ցետ ձգերով մեծ աւար:

Արիւն թափեցին, արիւնի փոխանակ  
Արիւն ըտմեց ծարաւի սուսեր,  
Նրան յագեցած՝ դրեցին պատեան  
Ելնում են ի լեռ—սէգ Սիփանն ի վեր,

Սէգ Սիփանայ կանանչ գլխին յաղթող  
Ճեղն սնուում է հն, մեծ խնդրում,  
Ամպերի թանձրութեան միջից  
Սիփանն ամրող է թնդում.  
Ել չեն գալ մեզ մօտ թշնամիք,  
Մուը տեսան մեր պղղպատիք:

## 148 ԹԲՂԵՔ ՈՂԲԱՄ

Ոչուրներս գայլեր տարան,  
Մէկն էր մնացել այն էլ կերան  
Ինձ թողեցին ոսկորները,  
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը.

Պալատիս մէջ մի ժամանակ,  
Ապրում էի ես համարձակ,  
Հրդեհն այրեց կտրեց ծուխը,  
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը.

Ծովի վրայ նաւ կազմեցի,  
Մի ժամանակ նաւ բանցուցի,  
Ալքն արեց կտոր կտոր,  
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը:

## 149 ԱՐԱՄԻ ԵՐՖԸ

Բանտիս դռներն էին եօթն ելքերով,  
Շուրջն էր պատած ամուը երկաթ քարերով,  
Զես ոտըս շղթայ զարկին այս պահուն,  
Վիճակումս այդպէս ընկաւ կախաղան,  
—Պարան դրին պարանոցիս յետ քաշէք.

Գոչեց Արամ բարձրանալով կախաղան,  
Ժամայոյցս ընծայ տարէք իմ հօրս,  
Եւ մի ասէք Արամ կախւեց իմ մօրս:

Իմ անունս քաջ Արամ,  
Մականունս Արմենեան,  
Խմբագետ եմ, խումբ կը կազմեմ,  
Հայ ազգիս, հայ ազգիս:

## 150. ՓԱԽԻՐ ԱՅԾԵԱՄ

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին,  
Պտըւում են քո խեղճ անձի մսասին,  
Գամբռներով բարակներով միասին,  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,  
Զագիկներդ տխուր լալիս են, լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,  
Կուզէ ձեռքերը քո արիւնով լւայ,  
Խղճալի՝ քո տեղեակ սար ու ձոր կուլայ,  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,  
Զագիկներդ տխուր լալիս են, լալիս:

Որսկանը գութ չունի, կանէ կրակը,  
Կամ քեզի կսպանէ, կամ քո գաւակը,  
Չուր չի անցնիւ հրացանի գնդակը,  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,  
Զագիկներդ ախուր լալիս են, լալիս:

Դաշտումը չես ման գար, թէ մտածես լաւ,  
Քեզ կվիրաւորեն կստանաս մեծ ցաւ,  
Դուրս մի եներ խիտ անատոից դու բնաւ,  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,  
Զագիկներդ տխուր լալիս են, լալիս:

Չորերը մի մաներ վտանգաւոր է,  
Որսկանը ման կուգայ այստեղ սովոր է,  
Բարայրից խփելով քեզ կը գլորէ,  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,  
Զագիկներդ տխուր լալիս են, լալիս:

Զիւանի

## 151 Մ Ա Յ Ր

Մայր ունէի, մայր նազելի,  
Մի փափկասիրտ արարած,  
Բուռն սիրով նրան էի  
Սիրտս ու հոգիս նւիրած,

Նա էր միակ իմ պաշտելին:  
Միակ ծաղիկն իմ հոգոյ:

Նա էր իմ թոյլը մանուկ կեանքին,  
Միակ նեցուկ, միակ յոյս:

Եւ ես ուրախ, ես երջանիկ,  
Որպէս անհոգ մի թռչնակ՝

Նետում էի միշտ մօրս գիրկ,  
Վայլում տէր ու գգւանք:

Սակայն, աւազ, ման անիրաւ,  
Մահն անողոք ու դաժան  
Ազիզ մօրս խլեց-տարաւ,  
Տարաւ-անդարձ, յաւիտեան:

Ո՞հ էլ չունիմ ես մայր անդին,  
Որ ինձ սիրէր, փայփայէր,  
Որ իմ խղճուկ, անտէր կեանքին  
Թև ու թիկունք նա լինէր:

Ա. Ծատուրեան

—ο—

## 152 Ծ Ի Ր Ա Ն Ի

Ես մէկ ծառ եմ ծիրանի,  
Հին արմատ եմ անւանի,  
Պտուղներս քաղցրահամ,  
Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արևելեան,  
Չունիմ որոշ այգեպան,  
Տունկերս ամեն երկիր,  
Բնկած են բաժան-բաժան:

Արևելքում ինձ տնկեց,  
Երբ որ Աստեած ստեղծեց՝  
Ասաց-ամէ բալմացիր —  
Մի այգի էլ ինձ տւեց: առ զո՞յ  
Ուղարկեց մի այգեպան —  
Հարաւից հսկայ իշխան:

Այս հակայի անունով  
Կոչւեցայ ծառը Հայկական։  
Չորս հազար տարւայ ծառ եմ,  
Արմատս պինդ՝ կայտառ եմ,  
Թէպէտ ոյժս պակաս է,  
Բայց անունով պայծառ եմ։  
Զիւան

— o —

## 153 ՄԱՆՈՒԾԱԿԻՆ

Ո՞հ մի ողբար դու թառամած,  
Եւ դալկացած Մանուշակ,  
Որ քո անուշ բոյրն առած,  
Քեզ ձգեցին ոտքի տակ։  
Աւելի պարզ էր շողշողում,  
Մեր գարունը մանկութեան,  
Բայց մեզ համար այս աշխարհում  
Նա չքացաւ յաւիտեան...  
Ոհ մի ողբար դու թառամած  
Եւ դալկացած մանուշակ,—  
Գուցէ էգուց անշընչացած  
Դու ինձ տեսնես հողի տակ։  
Մանէլսան

— o —

## 154 ԾԱՂԻԿ ԷՒ

Ծաղիկ էի նորաբողբոջ  
Սարի լանջում, երկնի տակ,  
Ինձ դիւթում էր առւի խոխոջ,  
Ինձ ողջունում արեգակ։

Գիշերները աստղ ու լուսին  
Քնից կտրած ու ապուշ՝  
Ծաղկիս սիրուց երգում էին  
Օրօր անդրբը ու անուշ...  
Գառների հետ լուսաղէմին  
Եկար սարը, ջան աղջիկ,

Ինձ քաղեցիր, զըրիր անգին  
Կըրծքիդ վերայ գեղեցիկ։  
Այստեղ շքեղ ես ապրեցայ,  
Քու արցունքով բիւրեղիկ.—  
Բախտը ժպտաց քեզ, սեաշհայ,  
Ես չորացայ... մի, տղջեկ...  
Աւ, իսահակեան

— o —

## 155 ԳԵՂՁԿՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Բարձր սարին հաւ չի համում,  
Միայն անուշ հով է փշում.  
Իսկ այս բարձրում աստղերի հետ  
Լուսաւորչայ վառ է կանթեղ,  
Մատաղ հոգուդ, սրտան աղբէր.  
Այն կանթեղը՝ քեզ թուր ու թեր,  
Սարի կրծքում լիքն է ակներ,  
Այդ ակները—աղբիւրներն են.  
Նկն ու աղբիւր՝ իմ քաղցը աղբէր  
Փափագ սրտիս շողն ու ցօղն են,  
Էրնէկ, աղբէր, քեզ սիրողին,—  
Ե՞րբ կը հասնես քո մուրագին։

Հարաւ կողմից ամպ է գալիս,  
Ամպ է գալիս, տերև դողում,  
Խըգւելով է զանգակ—ծաղիկ,  
Աքաղաղն էլ շատ է կանչում.  
Անձրե կուգայ, —սկի, կուգայ, —  
Իմ աղբէրս մւր է, չկայ:  
Լուսոյ աստղը հէնց դուրս եկաւ...  
Սրտոտ քաջը ալ ձին հեծաւ.  
Զարկեց քաշեց, —փախաւ տաք ձին,  
Կուի դնաց կէս գիշերին:  
Էրնէկ, աղբէր, քեզ սիրողին  
Ե՞րբ կը հասնիս քո մուրագին։

Խապար չկայ հեռու տեղից, —  
Քաջի սրտում դադար չկայ,  
Վաղուց է որ կտրայ քնից, —  
Մեր թշնամուց հանգիստ չկայ:  
Դադուց է որ կտրայ քնից,  
Խապար չկայ հեռու տեղից...  
Յ. Կոստանեանց

## 156 Ա Ղ Բ Ի Ի Ր

Էս աշխարհի խեղճ աշխարհի,  
Հանգերն անցիր, հէյ աղբիւր,  
Յօղ տուր լոյսին, ճամբիդ ծաղկին,  
Կարկաչանոս ջան աղբիւր:  
Մեր դաշտերը շատ են խոպան,  
Չորացել են ծառ ու բոյս.  
Առատ հոսիր անուշ խայտա,  
Մատաղ սրտի միակ յոյս:  
Դու գալիս ես այդ ես գիտեմ,  
Ծեր Մասիսի լանջերից,  
Ու քեզ համար երգ ես հիւսել  
Հայոց անուշ հովերից:  
Առառն կանուխ գու այց ելար  
Մեր աշխարհի բիւր ծաղկանց,  
Դու գգեցիր կոյս ցողիկին  
Ու լանջերը մեր լերանց:  
Հովից անուշ ցողից պայծառ  
Ջրիդ մեռնեմ, հէյ աղբիւր,  
Մեր սարերի զովս ես բերում,  
Զովիր մատաղ, ջան աղբիւր,  
Իէս կարկաչէ ու բըքըչա,  
Անուշ ձէնով անընդհատ,  
Քանի կանգուն ու հպարտ են  
Մալիս, Սիփան ու Նըպատ...  
Պ. Մոճուանց

—o—

## 157 ՀԱՅՈՒՅ ԵՐԿՐԻ

Հայոց երկրի աստղ ու լուսին,  
Պայծառ դէմքին քող են առել,  
Ի սէր Աստծու, գետեր, լճեր,  
Պղտոր արեան գոյն են դառել,  
Սուդ է երկինք, սուդ է երկիր,  
Ո՞հ, ի՞նչ ախուր վոփոխութիւն,  
Որովհետեւ ազգի պաշտպան,  
Վեհ Սերոր փաշան է մեռել:

Սերոր փաշա, ես քեզ մեռնիմ,  
Ինչու որբ թողիր բաջերուն,  
Ինչու նորէն սուդ սփռեցիր,  
Դարտ վարամով լի հայերուն:  
Տասնուչորս տարի անընդհատ,  
Դիմագրեցիր թիւրքերուն,  
Զոհւար բարձր գաղափարին,  
Ի՞նչպէս մոռնանք, Աստծու սիրուն.

Թող հայ կղերին Աստւած պատժէ,  
Պատրիարքին փափը տիրէ՝  
Թէ որ քեզի մեծ ցոյցերով,  
Հոգեհանդիստ չը կատարէ.  
Դու բարձր ես շատ շատերէ,  
Հայ զինւորն անմխթար է,  
Կոստանդ և բարասիրտ է,  
Ով որ քեզ սրտով չը սիրէ:

Ո՞հ, Աստւած իմ, խղճայ Հային,  
Խոկապէս մեծ է աղէտը,  
Զինւորները սըգի մատնել,  
Զկայ վեհ զինւորապետը.  
Հազար ափսոս մեռաւ բաջը,  
Դիւցազնական որդին հետը,  
Եղբայրներն էլ իւր վիճակին,  
Զնջւաւ հոյակապ տան յետըը.

Աերոբն՝ արդար Արէլի պէս,  
Կը բողոքէ պաղատանքով,  
Մեր ճակատին պող կը բուսնի,  
Կայենի պէս ամօթանքով՝  
Ի սէր Աստծու, հայեր—հայեր,  
Ոտքի ենենք հզօր ջանքով,  
Մեծ մարդու վրէժ լուծենք,  
Անձնւէրի յաղթող զէնքով,

Յարհամ

## 158 ՍԵՐ ԱՄՊԵՐԵՆ

Սև ամպերէն, ամպի սրոտէն  
Արտսունքի պէս թօն կուզայ.—  
Ա՛խ, ուր կ'երթայ իմ ու ճամբէն  
Ա՛յ բախտ, եարաբ վերջ չկայ...  
Եարաբ դարդու, չորդուիս  
Ուրտեղ պիտի քուն մտնի.—  
Սիրած կարօտ սրտի վրայ,  
Թէ չօլի մէջ ամայի...  
Ա՛խ, աչերս ո՞վ պիտ' ծածկէ,—  
Աղիզ մէրս համբուրդով,  
Թէ ձիւնն ու հող քամին բերէ  
Սև սհակի վույ-վույով...  
Աւ իսահակեան

## 159 ԵՐԲ ԱԼԵԿՈԾ

Երբ ալեկոծ ծովի վրայ,  
Իմ մակոյկս խորտակւի,  
Ես փրփրաղէղ ալեաց մէջը;  
Դեռ իմ յոյսը չեմ կտրեր,  
Բոլոր ուժով և համարձակ  
Բազուկներս կը շարժեմ,  
Ալիքները պատառելով  
Դէպի ափը կը թռչեմ:

Անհաւասար այդ կուի մէջ,  
Թէ ոյժերս ինձ թողնեն,  
Ալիքները յորձանք տալով  
Դէպի անդունդ ինձ նետեն:  
Այն ժամանակ գէթ սփոփանք,  
Ես կը գտնեմ նորա մէջ,  
Որ մեռնում եմ քաջի նման,  
Կոիւ տալով մինչև վերջ:

## 160 ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Գարունն եկաւ շողզողալէն,  
Հետն էլ բլբուլ զնգզնգալէն,  
Աստղէ վկնոց ցոլցլալէն.  
Բարնվ եկար, ծիլ գարուն:  
Բարնվ եկար, անուշ գարուն,  
Դուք էլ վարդեր, բլբուլներ.  
Ա՛խ, ուր մնաց կեանքս նշխուն,  
Ուր է սէրս, բլբուլներ...  
Է՛լ տեսար ինձ, նշխուն գարուն,  
Տեսար, թէն դեռ կ'ապրիմ,—  
Բայց, վայ, գարուն, որ սիրտս արուն  
Կ'ապրիմ կ'ապրիմ ու կ'ապրիմ...  
Դ. Դեմիքնեան

## 161 ՏԱԼՎՈՐԻԿԻ ԶԱՒՑԿ

Տալվորիկի զաւակ եմ զորդ,  
Քաղքցու պէս չեմ թուլամորթ,  
Սարի զաւակ, քարի որդի,  
Հին քաջ հայոց եմ մնացորդ.  
Տալվորիկի զաւակ եմ քաջ,  
Չեմ խոնարհիր թիւրքին առաջ,  
Քարոտ լերանց եմ ազատ լաճ,  
Չեմ տեսել ոչ արօր ոչ մաճ.

Հայ աղբբատիք, վայ աղբբատիք,  
 Տալվորիկի զաւակն եմ քաջ,  
 Ազատութեան սիրոյն համար,  
 Եկէք դէպ ինձ յառաջ յառաջ;  
 Երբ իմ աչքերս բացի աշխարհ,  
 Ազատ տեսայ մեր ուսը ու քար,  
 Մինչ չփակիմ աչքս ի խաւար,  
 Պիտ չկոխէ հոս ոտք օտար;  
 Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց,  
 Ընկոյզի կոճզ մինձ օրօրոց,  
 Տկող ծնայ մեծցայ տկող,  
 Կեանքիս բաժինն է կոիւ ու բոց.  
 Հայ աղբբատիք, վայ աղբբատիք, և այլն,  
 Ուրս բորիկ կուրծքս միշտ բաց,  
 Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց,  
 Ինձ մօտ մէկ է արև, բուք ցուրտ,  
 Բաւ է չիշխէ հոս թիւրք կամ քիւրդ,  
 Իմ կեանքս խիստ է և չարքաշ,  
 Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ,  
 Բնակարանս է ապառաժ,  
 Ընկերս՝ մըրիկ ու երկրաշարժ.  
 Հայ աղբբատիք, վայ աղբբատիք, և ալն,  
 Հարստութիւն, ուսում, հանձար,  
 Փառք ու պատիւ չեն ինձ համար,  
 Բաւ է ունիմ տէգ, թուր, խանչալ,  
 Բնաւ չի խորոխտար վրաս օտար.  
 Սիրած դէնքերս չեմ ձգեր ձեռքէս,  
 Առիւծն անվախ չէ ինձի պէս,  
 Կը սիրեմ որս, կոիւ, աւար,  
 Կը սպասեմ երբ ընկնի հաւար.  
 Հայ աղբբատիք, վայ աղբբատիք, և այլն:  
 Այծեամի պէս կը ցատկուտեմ,  
 Առիւծի պէս կը մռնչեմ,

Ծովի նման կը փրփրեմ,  
 Կայծակի պէս կը հարւածեմ.  
 Կուոյ դաշտը բաղդն է կեանքին,  
 Երբ կը ծագի արշալոյսը.  
 Կամ աւետիս տայ դրօշակին,  
 Կամ պաղ տեմնէ քու երեսը.  
 Հայ աղբբատիք, վայ աղբբատիք, և այլն:

## 162 ՕՐԸ ՄԹՆԵՅ

Օրը մթնեց, ճամբէս երկար...  
 Ուժերս հատան, ես մինակ.  
 Ա՛խ հեր ես դու, այ անջիգեար,  
 Ինձ հեր թողիր մեն-մինակ,  
 Քո ճանքէն եմ բռնել գալիս —  
 Դու փախչում ես, անգութ եար,  
 Ել ի՞նչ ես ինձ նշան տալիս,  
 Ի՞նչ ես քցում քարէ քար:  
 Սըևս անցաւ սիրուդ համար,  
 Սիրալս էրւեց անկրակ...  
 Ա՛խ, գուն անուշ իմ երազ եար,  
 Ի՞նչու թողիր ինձ մինակ:  
 Յ. Յովհաննիսեան

## 163 ՂՈՒՐԲԱՆ ԻՄ

Ղուրբան իմ ծուցիդ նըռանըն,  
 Հոքին տամ շիմշատ կըռանըն:  
 Թաք պառկիմ հարի դըռանըն —  
 Գլխօքըս քար իմ ասում:  
 Հաքիլ իս ատլաս խասեմէն,  
 Խըմեցու ձեռքիդ թասեմէն,  
 Համաշա էշխիդ բասեմէն  
 Երվում իմ, ճար իմ ասում:  
 Բաղ կու սիրիմ իս բաղման չիմ,  
 Բաղի տիրոչըն ճանանչիմ.

Բըլբուլ իմ, սիրով վարթ կանչիմ, —  
Հիդ քաշվի, խար իմ ասում: —  
Մէջիմներու խաղըն դուն իս,  
Վանքերումըն տաղըն դուն իս,  
Սայեաթ-Նովու բաղըն դուն իս,  
Կարօտ իմ, բառ իմ ասում:

## 164 Ճ Ա Մ Բ Ի Ն

Հայրենիքիս վառ երազով՝  
Դիշեն ինձի քուն բերեց,  
հարաբ ով էր անուշ ձէնով  
Խորսնկ քնէս ձէն տւեց.  
«Վեր ել, ճամբորդ, զարիպ ախպէր,  
Բարի լուսը բացւեր է.  
Երազիդ մէջ շատ ես լացեր,  
Աչւըներդ թացւեր է»...

Արեն եւաւ ցոլցլալով  
Աղօթրանի պալատէն,  
Սև թիերը թափ ծափ տալով՝  
Հաւքեր կ'անցնին երկնքէն:  
Ղարիպ հաւքեր, զարդնտ հաւքեր,  
Ես էլ զարդու ճամբորդ եմ.  
Կեցիք, հաւքեր, մէկ տեղ երթանք,  
Ես էլ, ձեզ պէս զարիպ եմ...»

Ա՛յս, մեր գեղեր—տեղերն կերթամ —  
Էնոնց շատ եմ կարօտցեր,  
Թոշնած սրտով՝ զարդու կ'երթամ, —  
Գեօպալ եար եմ կորուցեր.  
Գողտուկ լալով՝ սիրտս էլման  
Աբաշուտով լցուեր է, —  
Ազիդ մօրս, ջանիս կերթամ, —  
Աշխարհը ինձի մոռցեր է...»

Դ. Դեմիքեան

## 165 ՈՐՄԿԱՆ ԱԽՊԷՐ

— «Որսկան ախպէր, սարէն կուգաս,  
Սարի մարալ կը փընտռես.  
Սահ եարաբ դուն չը տեսար  
Իմ մարալը իմ բալէս:

Դարդի ձեռքէն սարերն ընկաւ  
Իմ արևս, իմ բալէս,  
Գըլուխն առաւ քարերն ընկաւ  
Իմ ծաղիկը, իմ լալէս: ...»

— «Տեսայ, քուրիկ, նըլխուն բալէտ  
Կարմի-կանանչ է կապեր,  
Սիրած եարի համբուրի տեղ  
Սըրտին վարդեր են ծըլեր»:

— «Որսկան ախպէր ասա, եարաբ  
Ո՞վ է հարս իմ բալիս,  
Ո՞վ է գըրկում չոր գըլուխը  
Իմ մարալիս, իմ լալիս»:

— Տեսայ քուրիկ դարդուր բալէտ  
Քարն է գըրեր բարձի տեղ.  
Անուշ քնով տաք գընդակն է  
Կըրծքում գըրկեր եարի տեղ.  
Սարի մարմանդ հովն է շոյում  
Ճակտի փունջը մարալիդ,  
Ծաղիկներ են վըրան սըգում,  
Աղիդ բալիդ, խեղճ լալիդ»...

Աւ Իսահակեան

## 166 Գ Ա Ր Ո Ւ Ն

Մի նոր, հրաշալի կեանքով շանչ առած՝  
Փալտում է լնութիւն, զերթ մանուկչնազ,  
Եւ նոր զօրութեամբ երկնքն է զարթած,  
Եւ երկինքն յստակ ու գեղածիծաղ,

Այս խորհրդաւոր պահուն ես մենակ  
Ծնկաչոք ահա քեզ եմ աղօթում,  
Խաչեցեալ Փրկիչ, քո հովանու տակ  
Յաւատանջ սրտիս իղձերն եմ քերում:  
Թռղ այս բերկրալից գարնան ջերմ արև  
Իմ հայրենի տան վերայ էլ փայլի.  
Մի օր, գէթ մի օր թռղ ըս առաջն  
Այստեղ հէք ծիծուան օրհներզը լսւի  
Թէ անցաւ և մեր ձմեռ ցրտաշունչ,  
Թէ անպարտ արիւնն հասցրեց վարդեր,  
Եւ տառապելոց ողբերն ու տրտունջ  
Դարձան գոհութեան խաղաղ մաղթանքներ։  
Յ. Յովհաննիսեան

## 167 ՃԱՐՏԱՐ ՅԱԿՈԲ ՍԵՐՈԲ ՓԱՇԻՆ

Չոկեցի անհատ քաջերը,  
Անցայ ընդարձակ դաշտերը,  
Հասայ ձնապատ լեռները,  
Հողիս, քեզ տեսնելու եկայ։  
Սուրբայ սարից մինչև Ղաթաւի,  
Հողիս մէջս չէր դադարի,  
Դիպայ անթիւ սարի քարի,  
Ազատ գիրկու ընկնելու եկայ։  
Վանայ ծովէն մինչև Տարօն,  
Նէմոռութից կը հսկես Սասուն,  
Մէկդին Յակովը, մէկդին Սօսօն  
Կարօտըս առնելու եկայ։

Դու մեր կեանքը, դու մեր բերկրանք,  
Սուրբ արիւնդ է ազգին փրկանք  
Դաշնակցութեան փառք ու պարծանք,  
Երկու համբոյր տալու եկայ։  
Դրօշակի Աղբիւր—Սերոբ  
Սիրած գործիդ դոհն է Յակոբ,

Դաշնակցութեան դէնքերն ամփոփ,  
Միայն քեզ յանձելու եկայ։  
Պետքըուրգից մինչև Շիրակ,  
Ծանօթներ քաշում են փափագ,  
Յայտնի մարդկանցից նամակ,  
Յատկապէս քեզ տալու եկայ։  
Յարհատ

## 168 ՏԱՐՈՆԱՑԻ ՊԱՆԴԱՏԻ ԵՐԳ

Մայիս ամսւայ դու զեփիւսիկ,  
Սլանում ես Մշու լերինք,  
Կորուցեր եմ քաղցը հայրենիք,  
Կուլամ, կողբամ, չասես հերիք։  
Լեառն Մշոյ է նման Մասիս,  
Մայրս կուլայ կանչում է զիս,  
Կասէ—որդեանկ, եկուր առ իս,  
Բաւ է այսքան դուն թափառիս։  
Պանդուխտ եմ ես օտարութեան,  
Ատէն չունիմ որ առ քեզ գամ,  
Յաւերս շատ են վիշտս յարաժամ,  
Գուցէ սոցա եմ ես արժան։  
Պանդուխտ եմ ես Տարօնացի,  
Շատ ժամանակ ցաւօք մնացի,  
Մշու երկրէն հեռու կացի,  
Հայրենիքս ես միշտ լացի։

## 169 ԽԴՇՈՒԿԻ ԼԱՑԼ

Ի՞մալ պտի էնինք, ես լէ չեմ գինայ,  
Որ չը թորկինք քոչինք մըր տուն ու վաթան,  
Զունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,  
Հիմիկուց յետի տեսնանք, փոխինք, զմեր բան։  
Ի՞ոս դարիպութեն աւիրից զմըր տուն,  
Կը թորկինք հեռնանք ճըժերսի սիրուն,

Նալով մընք խաց կուտենք չուրի յիրիկուն,  
էլ թըր միտք կու ըերինք մըր խեղճ Խայատառան։  
Սէֆիցեր՝ կը դողանք քըդերու առաջ,  
Տաճկին գանգատ կէնինք, չի էնէ ականջ.  
Ծանդրցուցեր է մըր վրէն խարջ-խարաջ,  
Խղճեցրեր պարսցնտէր, քեափիր խարկախան։  
Թորկած խօրօս հանդերս, թորկած սիրելիս,  
Թորկած Զամալ եղս, թորկած Մարալիս,  
ևա Ստամրոլ կերթանք, ևա թէ չէ թիֆլիս։  
Էստեհս աչքներս առած ենք ու գերեզման։

## 170 Բ Ն Կ Ե Բ

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,  
Փայլեցնում է արեի պէս պատկերը մարդուն։  
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝  
Յերէկի նման անցնում է՝ մութ գիշերը մարդուն։  
Կեանքդ նւիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,  
Այսպէս է հողեկան լուսատու լապտերը մարդուն,  
Ընկեր եմ ասում, աստւածալիս ճշմարիս ընկեր,  
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։  
Թշնամիները իր վրայ քալած ժամանակը,  
Կտրին հարազատ ընկերն է սուսերը մարդուն  
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան աշըգ,  
Չի սպիտակել ամենեին, մէկ հերը մարդուն։

## 171 ԶԱԽՈՐԴ ՕՐԵՐ

Զախորդ օրերը ձմռայ նման կուգան ու կերթան,  
Վհատելու չէ, զերջ կունենան, կուգան ու կերթան,  
Դառն ցաւերը մարդու վրայ չին մայ հրկար,  
Արզէս յաճախորդ՝ շաբաէ շաբան կուգան ու կնրթան։  
Փորձանք, հալածանք և նեղութիւն, ազգերի գլխից  
Ինչպէս ճանապարհի էտաւան—կուգան ու կերթան,

Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
Պրքան մանիշակ, վարդ, պալասան կուգան ու կերթան։  
Ոչ ուժեղը թող պարձնայ, ոչ տկարը տիրի,  
Փոփոխակի անցըեր զանազան կուգան ու կերթան։  
Արկը առանց վախենալու ցայտում է լոյսը,  
Ամպիրը դէպի աղօթարան կուգան ու կերթան։  
Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան։  
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, ազգերը հիւր են։  
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան։

## 172 ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԵՆ

Դուն էն գլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին  
Բաբ մի անի։  
Հրազդումըն տհսածի հիդ միզի մէ հեսաբ մի անի,  
Ֆս խոմ էն գլխէն էրած իմ, նուր մէկանց բարար  
մի անի,  
Թէ վոր, գիղիմ բէզարիլ իս, ուրիշին սարար մի անի։  
Զը կայ քիզպէս հուքմի հեքիմ՝ գու Ռոստոմի  
Զալ, թաքալուր,  
Ասկըդ ասկերումը գոված, համ գուն իս գողալ,  
Թաքալուր,  
Թէ էս անց էլ սուչ ունենամ, գլուխս արա տալ  
Թաքալուր,  
Մըտիկ արա քու ստիղծողին՝ նահախ տեղ զազար  
մի անի։

Եարալուն հիքիմն էնդուր գուզէ, դիդ տալու չէ,  
ցաւ տալու չէ,  
Քանի զուզէ արբար ըլի, զուլըն աղին դաւ տա-  
լու չէ,  
Դու քու սիրտըն իստակ պահէ, եադի խօսկըն  
աւտալու չէ.  
Աստուծու սէրըն կանչողի պէս դռնեմէդ ջուղար  
մի անի։

Ամեն մարթ չի կանայ խըմի իմ ջուրըն՝ ուրիշ  
ջըրէն է,  
Ամեն մարթ չի կարթալ իմ գիրըն՝ ուրիշ գըրէն է,  
Բուռնիաթս աւաղ չիմանսս՝ քարափ է քար ու կըրէն է.  
Սէլաւի պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ  
մի անի:

Դանի գուզէ քամին տանէ՝ ծովեմէն աւազ չի պակսի,  
Թէ գուզ ըլիմ, թէ գուզ չըլիմ, մէջիսներուն սազ  
չի պակսի,  
Թէ կու պակսիմ, քիդ կու պակսիմ՝ աշխարիս մէ  
մազ չի պակսի.  
Սայեաթ-նովու գերեզմանըն չինդ, չարաշ, նըրաբ  
մի անի:

## 173 ԲՈՑԻԿՈՒ ՍԱՐԻՆ

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,  
Հովն է հեծեծում Բասենայ դաշտում.—  
Ոսկի երգերը, իմ ազիդ ընկեր,  
Էն հովն է երգում Բասենայ դաշտում:  
Այս սիրուն արտուտ լալազար գարնան,  
Արազի գաշտից մինչ Խլաթ ու Մուշ  
Դուն թլուչում էիր սիրաբդ վարովառան  
Գովքն ազատութեան երգելով անուշ:  
Քաջ լնկերներով կըուի սըլացար  
Ազատ երգերով Արազի դաշտում.  
Նամարդ թշնամուն զարկիր, զարկւեցար  
Ընկերներիդ հետ Բասենայ դաշտում:  
Ու ժողովուրդը կարօտ քու սիրուն  
Բասենայ դաշտից մինչ Խլաթ ու Մուշ  
Երգում են անվերջ երգերը սիրուն,  
Ու չեն մուանում երգերը անուշ...  
Այս, սուրը վէրքերով ընկերներիդ հետ  
Արնոտ հողի տակ անուշ ընեցիր.  
Թող ծանը չեւայ այն հողը վըրէդ,  
Որն այնպէս՝ հըզօր, անհնէն սիրեցիր...

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,  
Հովն է հեծեծում Բասենայ դաշտում.  
Անուշ երգերը, իմ ազիդ ընկեր,—  
Էն հովն է երգում Բասենայ դաշտում...  
Ա. Խանակեան

## 174 ԿԱԼԻ ԵՐԳ

Մեր զիւզացին երբ տեսնում է  
Լծած եղը անքալիս,  
Երբ արկից նա այրվում է  
Խուրձը հաշան անելիս,  
Կամանն ըրայ երբ կանգնում է  
Զուխտ եզներին քչելիս,  
Ահա այսպէս նա երգում է  
Իրան կալը կասելիս.  
Ե՛զը ջան, կալ արա, կալիդ ման արա,  
Հասկերը փշրի, ցորեն գուրս արա,  
Հաշանը տրորի, լաւ դարման արա:  
Ես ու դու մին հնք, —իրար եղբայր ենք,  
Մինչ երեկոյ իրար հետ տանջենք,  
Ես երեկոյեան կալը կը թեղեմ.  
Դէպի կանաչ խոտ քեզ բաց կը թողնեմ.  
Լուսնակ զիշերին թեղը կը քամեմ,  
Ցորեն-տարմանը իրարից ջոկեմ.  
Տարմանը մզանով մարաքը կ'ածեմ,  
Ցորենը չւալով ամբաքը լցնեմ:  
Երբ որ ձմեռը կ'գայ, կը մրսենք,  
Դուք տարման կուտէք, մենք ցորնով կապրենք.  
Ե՛զը ջան, կալ արա,  
Կալիդ ման արա...

Ե՛զը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,  
Իմ թե ու թիկունք, դու իմ տան դուռն ես,  
Քեզ որ չունենամ, արտ չեմ ունենալ,  
Կալ էլ չեմ կալսիլ, ցորեն ստանալ:

Բայց, միս... ցորենը իմ տունը չէ մտնում,  
 Հորերս-ամբարս ցորնով չեն լցում.  
 Ա՛յս... աչքը դուրս գայ մեր պարտքատէրի,  
 Մէկ փութ պարտքի աել՝ վեց փութ կըտանի  
 Խեղճ երեխանցս ձմեռուայ կիսին  
 Քաղցած կը թողնի, ինձ գերի կանի...  
 Կաղ արա մատաղ,  
 Փառն է քեզ մատաղ...:  
 Ե՛զը ջան, քեզ հետ տանջում եմ, մաշում,  
 Դաշտում-արանում վարուցանը անում.  
 Բայց ես այդ ցանքը արմատից կերած.  
 Դեռ կանաչ վախտը հնձած եմ, բաժնած:  
 Ցորնի պարտքը չէ այս իմ ասածը,  
 Դարդ ու կրակ է իմ վզին դրս ծը:  
 Փողի պարտք ունիմ—ցորնից եմ տալիս,  
 Եւ հարկ ու բէգեառ—ցորնից դուրս տալիս  
 Տան կարսասիքները ցորնով եմ հոգում,  
 Տէրտէրի հարկը ցորին իմ բաշխում,  
 Աշըդի, որբի—ցորնից մաս հանում.  
 Խուրնի. ցորենը մեր բոլոր յոյսն է,  
 Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.  
 Ման տուր, իմ եղը,  
 Ապրի քու պնդը:  
 Ե՛զը ջան, տեսմը, թէ ինչպէս ծանը է  
 Մեր օրն ու կեանքը և ռըբան դառն է...  
 Դու հէսց կարծեցիր, որ աշխարհքումը  
 Միմիայն դու ես գերի բանտումը...  
 Բայց լաւ իմացիր, որ ինձ պէս մարդիկ  
 Վատ վիճակումն են, քան թէ կենդանիք:  
 Ասա, ով կառնի բեզնից տարմանը,  
 Ո՞վ կը խլի քո ձմրան պահըրը...  
 Բայց, տես, մեղանից շատ մոլի մարդիկ  
 Խսպառ խլում են մեր չոր ուտեիք...  
                   Մէջ արա, եղը ջան,  
                   Զանս քեզ դուրբանս:  
                   Աղք. Արարտեանք

175 ՄՇԵՅԻ ՄՈՒ ԱՂԱՋԱՆՔ  
 Թիփի բորան մրւթ գիշերին  
 Կը պտտէ ֆիդային,  
 Պատրօնզաշը խաչփակ թալւծ,  
 Զեոքին առած հրացան:  
 Ա՛յս, ձեզ մատաղ, չահ գիզայիք,  
 Ձեր մէր ձեզի թող մեռնի,  
 Մշու սուլթան սուրբ կարապետ,  
 Զեզի քեօմաք թող էղնի:  
 Ա՛յս ֆիզայիք ձեր սադադէն,  
 Ձեր հետ տարէք իմ տղէն,  
 Ձեր հետ մեռնի, ձեր հետ ապրի:  
 Ազգին մատաղ զիմ տղէն:  
 Թող զէն թողնի արօր ու մաճ  
 Իմ մէկ ու ճար ազիզ լաճ,  
 Քիչ մալ թող թւանքով խաղայ,  
 Ել թող չտայ քրդին խարջ:

---

176 ԱՆԹԻՒ ԴԱՐԵԲԸ  
 Անթիւ գարեր թափառեցինք,  
 Դարձեալ օտար հող մմացինք,  
 Մեր անուշիկ Հայաստանէն,  
 Հեռու-հեռու բնակւեցինք:  
 Հայ անունը ամենքի մօտ,  
 Դարձել է լոկ չնչին մի խօսք,  
 Հայեր-հայեր մտածեցէք,  
 Ձեր խոր քնից սթափւեցէք,  
 Սասնայ քաջիր ձեր գլուխներ,  
 Բարձրացըէք գերեկմանից,  
 Տեսէք թէ ձեր երջանիկ ազգը,  
 Թէ ինչ վիճակի է հասել

## 177 ԻՆՉ ԵՄ ԳԱԶԱԶՈՒԻՄ

Ի՞նչ ես գաղաղում, այ վիրաւոր սիրտ,  
Որ գաղաղում ես, ի՞նչ պիտի անես:

Աշխարհը իրա ճամբով կ'ընթանայ,  
Դու խեղճ, դռւ անզօր, ի՞նչ պիտի անես:

Մարդն էս աշխարհում, ինչպէս մի թռչուն  
Անդուռ ու անել մեծ վանդակի մէջ.—  
Սիրտ իմ, գաղաղիս, ի՞նչ պիտի անես  
Անդուռ ու անել այս վանդակի մէջ.

Մարդ ծընած օրից գերեզմանի հետ  
Շըլթայւած է պիրկ, ուր էլ որ երթայ.—  
Սիրտ իմ, գաղաղիս, ի՞նչ պիտի անես,  
Ո՞ւր պիտի թըռնիս՝ թերդ շըղթայ,

Տոկա, համբերիր, իմ վիրաւոր սիրտ,  
Վըճիս հայեացքով աշխարհին նայիր.  
Աշխարհը իրա ճամբով կ'ընթանայ,  
Է՞յ, վիրաւոր սիրտ, զու մի գաղաղիր...

Աւ. Իսահակիսն

## 178 Խ Ր Ա Տ

Անմտածել վեր վարէ խօսքերդ, ճարտար եղիր,  
Քեզ ճոռմախօս կասեն, ուզում ես յիմար եղիր.  
Քանիմ նախագասութիւն գրքերից բերան արա,  
Միշտ ումիկ դասի մէջ գիտնական հանճար եղիր:

Ծանր կողմը կշեռքի աշքի առաջ ունեցիր,  
Ճշմարտութիւնը ստէ, համ նորից արդար եղիր,  
Առիւծասիրտ անձի մօտ կղկթիր, եղիր կատու,  
Եթէ տեսար տկար մարդ, արիացիր՝ չար եղիր:

Ժամանակի պահանջն է անուժին կողոպտելը,  
Թէ խիղճդ քեզ խայթում է արտաքուսա արդար եղիր,  
Զիւան քեզ ո՞վ կիմանայ, զու գիտես քո հաշիւը,  
Խօսքերով սուտ ազգասէը, փողի սիրահար եղիր:

## 179 ԹԻԿՈՒՆԲԴ ԼԱՅ

Թիկունբդ լայն, թևերդ ուժգին,  
Կոներդ ամուր պինդ պողպատ,  
Սիրել գիտես, կուել չիտես,  
Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրգերը,  
Եղբօրդ արիւնն են ծծում,  
Դու անտարբեր, սառ արիւնով,  
Հանգստութիւն ես վնտեռում:  
Ամծթ քեղի, հազար ամօթ,  
Որ զէնք չունիս քո ձեռքին,  
Քո եղբօրդ կուի գաշտում,  
Տապալում է թշնամին:

Զեռքդ տներ ինձ, երդենք այստեղ,  
Թողնենք վառքը աշխարհի,  
Գնանք, կուենք առիւծաբար,  
Ի սէր ճնշւած հայ ազգի:

## 180 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽԵՏԱԲԵՐ

Հայաստանի աւետարեր,  
Ո՞վ դու կոռնկ, ձայնդ անուշիկ.  
Սրդ եկել ես օտար վայրեր,  
Ի՞նչ լուր բերիր ինձ պանդիստիս,  
Ո՞հ հայրենեաց կոռւնկ սիրուն,

Տար իմ ողջոյնս անդ հայերունն  
Հոէ կոռւնկ հայ դաւակաց,  
Թէ ձեր եղբայր օտար վայրեր  
Բնիկ է բայց սիրտն չմուցած,  
Միշտ հայրենեաց կարօտ եղիր.  
Ո՞հ հայրենեաց կոռւնկ սիրուն,  
Տար սիրոյս հետ և զիմ ողջոյն:

Մեր հարթ կանաչ մարգագետինք,  
Ուր կազաւեն հայ օրիորդները,  
Արդեօք քաղէ իմ անուշիկ,  
Մրտիս հատոր, սիրուն վարդեր.  
Ո՞հ հայրենեաց կռունկ սիրուն,  
Տար անկեղծ սկըս անդ հայերուն,  
Մայրս կ'իրոհեմ գիշերն ամին,  
Երբ աստեղք բարձր երկինս փայլեն,  
Դառն արցունքներս աչքիցս վաղեն,  
Երբ կը յիշեմ իմ հայրենիքս.  
Ո՞հ հայրենեաց կռունկ սիրուն,  
Տար արցունքներս անդ հայերուն.

## 181 ՍԱԼՆՈՅ ԶՈՐԵԲՈՒՄ

Սախոյ ձորերում, կըուի ձորերում  
Հայդուկն է ընկեր խոր վէրքը սըրտին, —  
Վէրքը վարդի պէս բացւած կարմըրուն,  
Ու ձեռն է քըցեր կոտրած հբացանին:  
Արնոտ դաշտերում ծըղրիդն է ծըղրում,  
Հայդուկն է ընկեր մահւան խոր քընով.  
Հայդուկը հոգում երազ է տեսնում, —  
Հայրենի աշխարհն ազմա, ապահով...  
Տեմնում է... արտում հովն է շընկըընկում,  
Փայլուն գերանդին զընգում է անուշ  
Ու փոցիս են քաշում սիրուն աղջըկունք՝  
Հայդուկի վըրայ երգելով անուշ...  
Սախոյ ձորերով ամպեր են անցնում,  
Հայդուկի վըրայ արծիւն է գալիս.  
Ա՞խ, սև աչերը սրծիւն է հանում.  
Հայդուկի վըրայ ամպերն են լալիս...

Աւ, Խսահակեան

## 182 ՀԱՅԴՐՈՒԿԻ ՆՇԱՆԱԾԻ ԵՐԳ

Հայաստանից եկած զինւոր,  
Սիրականս — կեանքիս հատոր,  
Քեզ կսպասէի օրէ օր,  
Շողշողուն ունքելիդ մատաղ:  
Տուր գէնքերդ առանձին պահեմ,  
Յոզնած — տանջւած հոգիդ շահեմ,  
Վաս համբոյրով դէմքդ շոյեմ,  
Թրթուան նեարգերիդ մատաղ:  
Արկածալի կեանք խորհրդով,  
Լեռներ ևս անցել շտապով,  
Արեգակն է այրել տապով.  
Մորակ պատկերիդ մատաղ:  
Կ'զաս զու զոհերի երկրէն,  
Պատմիր Մոկունքցի եսթերէն,  
Խօսիր Գիսակի խօսքերէն,  
Մրտաշարժ խօսքերիդ մատաղ:  
Զով Սատոնի հովէն կուզաս,  
Վանայ ծփան ծովէն կուզաս,  
Անդրանիկի քովէն կուզաս,  
Զօրաց շէք զինւորիդ մատաղ:  
Սերոր փաշի գերեզմանը,  
Տեսէլ ևս իմ սիրեկանը,  
Դիտել ես ողջ Հայաստանը,  
Ապագայ յոյսերիդ մատաղ:  
Սիրտս է զառել սիրոյ անօթ,  
Տասն օր կեցիր՝ առնեմ կարօտդ,  
Յետոյ գնա Սաքօյի մօտ,  
Թանկագին ընկերիդ մատաղ:  
Արքենիկն եմ, լի բերկանքով,  
Գլւեմ պաշտելոյս բաղձանքով,  
Քնենք ամուսնու տեսչանքով,  
Սիրուու կարօտ սէրիդ մատաղ:  
Ֆարհատ

## 183 ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

Մնաք բարով, արե, գալուն  
Եւ խնկաբոյր ծաղիկներ,  
Կարկաչահոս վտակ սիրուն,  
Կանաչազգեստ բլուրներ:  
Մնաք բարով, համբոյր և սէր,  
Դէմքով հրեշտակ կոյս չընաղ,  
Վայելչութեան պայծառ ժամեր,  
Թաղցր ժպիտ, կեանք մատաղ:  
Աղբատութիւն ես սիրեցի,  
Խեղճի լացը, հառաչանք,  
Ես քնարս նուիրեցի  
Վիշտ երգելու և տանջանք...

Յ. Յովհաննիսիան

## 184 ԽՕՍԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ

Անխղճօրէն մեզ դատում են,  
Խօսիք Հայաստանի լեռներ,  
Եղբայրս ինձնից զատում են,  
Խօսիք Հայաստանի լեռներ:  
Իմ խնդրիս չեն դնում ականջ,  
Ասում են սուս է քո պահանջ,  
Այս հողերը ումն էր առաջ,  
Խօսիք Հայաստանի լեռներ:  
Գուցէ յիշէք դուք այն օրը,  
Որ պազս ջած արօրը,  
Ճանում էր դաշտ ու ձորը.  
Խօսիք Հայաստանի լեռները:

Գիտեն իմ պապիս անունը  
Բայց ստում են ուղղութիւնը,  
Գոնէ նրանց պատմութիւնը.  
Խօսիք Հայաստանի լեռները:  
Հիմա ձեզ մնաց ամեն բան,  
Պէտք է դուք դաք վկայութեան,

Ումով էք կոչւում Հայաստան,  
Խօսիք Հայաստանի լեռներ,  
Պայծառիս վիրաւորել են  
Հողերին հաւասարեր են,  
Մեր կայքը օտարք տիրել են  
Խօսիք Հայաստանի լեռներ:

## 185 ԻՌԱՄՄԵՐԻ ԳՈՐ ՎԱՇՏԵՐԸ

Իսլամերի գոռ վաշտերը կատաղի,  
Պաշտերել են մեր լեռները սոսկալի:  
Ելէք, ելէք, քաջ հայեր,  
Արիւն թափենք անձնւէր,  
Վասն աղատման հայրենեաց,  
Թափենք մեր վերջին արիւն,  
Եյս է պահանջում դարը:  
Շքնիկ, Սէմալ շրջապատւած քիւրդերով,  
Տալորիկի անցքն է փակչած զօրքերով:

Մի վախենար քաջ Սասուն,  
Ել թշնամուն դէմ առ դէմ,  
Մեր պապերից սորված ենք,  
Մեռնիլ տղամարդու պէս,  
Սուր մեզ թողին յիշատակ:  
Քոյր եղբօրից բաժանելու եկել են,  
Հայր և որդի սպանելու եկել են,  
Ի սէր Աստծու դժւար է—  
Հպատակել իսլամին,  
Լաւ է մեռնիլ առանց հաց,  
Բան թէ յանձնւել թիւրքին,  
Անխղճ են ու անաստած,  
Թնդանօթների դէմ կուենք քաջ սրտով,  
Սովին դիմադրենք կաթով, բանջարով:  
Դէ, քեզ տեսնեմ քաջ Մուրատ,  
Սուրդ շարժիր անվիատ,  
Պուսահայ եղբայրներ—

Եւլուպայի պէս անխիղճ չեն,  
 Գուցէ կ'գան օգնութեան։  
 Գալինան ելման գետի նման գուալէն,  
 Թափւենք դէպի մեր գիւշմանը փափսալէն։  
 Թող որոտան հրացանք,  
 Մեր ժայռերի ծերպերից,  
 Թող խոցոտի շուն վալին;  
 Շանթինք չար սուլթանի սիրտը,  
 Որպէս կայձակ երկնքից։  
 Քաջ աղջիկներ առէք վառող ու կապար,  
 Լքցրէք գատարի փամփուշտները չարաչար  
 Իսկ դուք կանայք ժրաջան,  
 Առէք սուր ու հրացան,  
 Աղատենք մեր լսոները,  
 Զեր մայրական արիւնով։  
Թարհատ

## 186 Ե Ր Բ Ռ Ո Լ Ի Ն Ի

Երբոր լինի գարնանամուտ նոր գարուն,  
 Կը բազմանան վտակներդ, հայրենիք,  
 Շարիշար ցնձութեամբ երգով դւարթուն,  
 Շարժւում են բանակներդ, հայրենիք։  
 Օդըդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,  
 Պէս պէս գունով ծաղիկներդ դալարուն.  
 Չեն դադարիր աշխատելուց օրն ի բուն—  
 Քո հարազատ մշակներդ, հայրենիք։  
 Մարդիք կուգան բռ սարերդ ման դալու,  
 Իբր որսորդ եղնիկներդ որսալու,  
 Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարդալու—  
 Քո սգագիւաց սոխակներդ, հայրենիք։  
 Դու դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ,  
 Քո միջից անմահութեան հոտ կուգայ,  
 Հազար ափսոս մարդուց թափուր են հիմա—  
 Խիստ բազմամարդ վիճակներդ, հայրենիք։  
Զբւանի

## 187 Է Ն ԱՄՊԻ ՆՄԱՆ

Են ամպի նըման խուլ որոտումով—  
 Սիրտը դարդով լի՝ կըսիւ գընացի.  
 Են ամպի նըման ժէուտ սարերով,  
 Քուրիկ ջան, քեզնէն հեռու գընացի...  
 Է՛լ մի որոնիր քու ազիզ եարին  
 Կըսւէն յետ դարձող կըտրիճների մէջ.  
 Ա՛խ, մենակ փընտուիր իմ քաջ սեռուկին  
 Անտէր խըրխընջող՝ լուռ դաշտերի մէջ ..  
 Է՛լ մի որոնիր քու ազիզ եարին  
 Խմ ընկերների ուրախ խընջոյքում.  
 Բանձրիկ սարերէն օնացող քամին  
 Վրաս մի բուռ հող կը ըլցէ դաշտում...  
 Ու օտար մէրեր ինձի տես կուգան,  
 Սև հողիս վերայ արցունք կը թափեն.  
 Ա՛խ, օտար քուրեր ինձի տես կու դան  
 Ու վիրաս անուշ ծաղկունք կը թափեն...  
Առ իսահակեան

## 188 ՕՐԸ ՄԷԿ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Օրը մէկ տրտմութիւն, տարին հազար ցաւ,  
 Քաշելով ինձանում ոյժ էլ չի մնաց.  
 Լացըս, աղաղակըս եղան ոչ սակաւ,  
 Քանզի դիմանալու յոյս էլ չի մնաց:  
 Ստւերի պէս անցան օրերս բոլոր,  
 Ո՞հ, ես անմխիթար, ո՞հ, ես սգաւոր,  
 Ամիսը, շաբաթը, մինչ օրը մէկ նոր,  
 Ականջիս հասած դոյժ էլ չի մնաց։  
 Այս անբաղդութիւնը է իմ մեղացէս,  
 Յետ կացէք իմ ջուրէս, իմ կերած հացէս,  
 Մայիս իրաւ կասեմ, բացի կենացէս,  
 Ինչ տալու աշխարհին՝ ուոյժ էլ չի մնաց։

## 189 ԽԱԽԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԵՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,  
Եմ չորս կողման է փոթորիկ,  
Չունիմ ես սէր, չունիմ ես սէր,  
Ես սիրում եմ հայրենիք:

Այստեղ անթիւ անբաղդ մայլեր,  
Որքեկորոյս ծնողներ.  
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր,  
Թափում են յորդ արդունքներ:

Ինձ մի սիրիք, ինձ մի սիրիք,  
Ես շատ ու շատ փոխւել եմ.  
Առ թաշկինակդ սրբիք աչերդ.  
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մնաս բարեաւ իմ աչքի լոյս,  
Սէրդ լինի ինձ խրախոյս,  
Այդ արտասուրքը ես պիտ թափեմ  
Որ իմ ցաւերս սփոփեմ:

## 190 ԻՄ ԻՂՋՄ

Սիրաս ուրախ կեանքս անվրդով  
Ազատ խօսել կուզէի,  
Հոգիս հանդարտ խաղաղ կերպով  
Մնվերջ գործել կուզէի:—  
Հայաստանի սուրբ երկերներ  
Գնալ տեսնել կուզէի,  
Դաշտ և հովիտ բարձր լեռներ  
Փութալ թռչել կուզէի:

Աւարայրի ասպարիզում  
Նետս լարել կուզէի,  
Վատ թշնամու զինւած խմբին  
Զարդել փշեր կուզէի:

Անի քաղքից քար մի բերէք  
Վանայ, Մշու, մի բուռ հող  
Հայաստանի ջրով շաղւած  
Հայ մանուկը շինէ թող:

## 191 ԱՐԵՒՆ ԻՉՍԻ

Արեն իջաւ սարի զըլիխուն,  
Դար ու դաշտում լուս չը կայ.  
Հաւք ու թըլոչունք մտան խոր քուն,—  
Ա՞ն, ինձ համար քուն չը կայ.

Լուսնեակն լնկաւ երթըկից ներս  
Կըշեռքն ելաւ երկընքում,  
Զով հովերն էլ մըթընշողէս  
Աստղերի հետ են զըլցում:

Միքուն աստղեր, անուշ հովեր,  
Եարըս մեր ա էս զիշեր.  
Պարզ երկերն նըշխուն աչեր,  
Եարըս տեսամբ էս զիշեր:

Լուսը բացւաւ, դուռը բացւաւ,  
Ամոլ ու զամպ է.—թօն կուզայ,  
Ալ ձին եկաւ, անտէր եկաւ,  
Ա՞ն, եարս մեր ա, տուն չի գայ...  
իսահակեան

## 192 ԹԱԹՈՒԼԻՀԻ ՔԲՈԶ ԵՐԳ

Եղբայրս թիւրի բանտում,  
Արե, լոյսի կարօտով,  
Վայ իմ սկ օրերին, վայ,  
Ես ինչպէս հագնեմ կապիմ,  
Նաշխուն շորեր նարօտով.  
Աւաղ, իմ սկ օրերին, աւաղ,  
Ես գարդ ունիմ սարերով,  
Թողէք վառեկմ ցաւերով,  
Վայ անբաղդ իմ, վայ անբաղդ:

Ահա տարին լրանում է,  
Չեմ ստացել մէկ նամակ,  
Վայ իմ ու օրերին, վայ,  
Տխուր ու արաւում սիրոս,  
Չունի ուրախ ժամանակ,  
Աւաղ իմ ու օրերին, աւաղ,  
Ես կրակոս երգերով,  
Թողէք վասիմ գարգերով,  
Վայ անբաղդ եմ, վայ անբաղդ:  
Ես ինչպէս ռւտեմ խմեմ,  
Երբ նա բանառում ծարաւէ քաղցած,  
Վայ իմ ու օրին, վայ,  
Ես ինչպէս խնդամ, պարեմ,  
Միթէ խիզճըս է մեռած,  
Աւաղ իմ ու օրերին, աւաղ.  
Առանց նրան ոնց մնամ,  
Լաւ է մեռնեմ վերջանամ,  
Վայ անբաղդ եմ, վայ անբաղդ:  
Գահըստ

## 193 ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

Պայծառ արե, կայտառ հովեր,  
Սուի կարկաջ ու խոխոջ,  
Կոյս դայլայներ, ժըպտուն շողեր,  
Վարդի կոկոն ու բողբոջ,  
Անվէրք սըստեր, անվերջ երգեր,  
Սիրոյ արցունք ու հառաչ,  
Սար ու ձորում կաղմած խմբեր  
Կ'երթան դարնան ընդառաջ:  
Քընքնաշ ձեռքեր, մատաղ մատներ,  
Վառ պսակներ ոլորէք.  
Լոյս ճակատներ, վճիռ աչեր,  
Գարնան շուրջը բոլորէք:

Կոկոն սըստեր, շոշան կըրծքեր,  
Անուշ երգեր բուրեցէք  
Վարդ լեղոններ, յակինթ շըրթներ,  
Գարնան վիճ մուտքն օրհնեցէք:  
Միրուն աղջիկ, վարդի թերթիկ,  
Գարուն եկաւ իմ սըստին.  
Ծաղկի ցողիկ, գարնան հովիկ,  
Էլ օտար չեմ քո շընչին:  
Ես վարդի թերթ, դու զով զեփիւռ  
Ինձ գուրգուրա այսունետ.  
Ես ծաղկի ծոց, դու ցող ու բոյր,  
Ապրիլ, ցընդիր գարնան հետ:  
Ալ-վարդերով, թարմ վարդերով  
Անկողին եմ յարդարել,  
Միրուն սըստի արցունքներով  
Մարգարիտներ եմ շարեր:  
Անտէր թըռչնիկ, որու բւլըռուիկ,  
Արի, նընջիր վարդին մէջ,  
Շոշան աղջիկ, սըստիս ծաղիկ,  
Արի, բացւիր հոգուս մէջ:  
Արտմ-Զարբդ

## 194 ԶԱՐԹԻՐ ՈՐԴԵԱԿ

Զարթիր սրգեակ, ուշ բեր, վեր կաց,  
Պատերազմի փողը հնչեց,  
Զարթիր գոշեց ձայնը հայրենեաց,  
Կենաց մահու ժամը հնչեց:  
Պատրաստել եմ քո զէնքը, քո սուրը,  
Եւ քո գոտիդ ոսկեթել,  
Եւ մի պսակ ոսկէ փետուր,  
Երկինք կանխաւ պատրաստել:  
Հաւաքել եմ քո գինքերդ,  
Ահա գլխիդ վերև կան,

Ինչպէս երբեմն քո զիրքերդ  
Երբ կերթայիր վարժարան։  
Միթէ դու չես յիշեր երբոր՝  
Դրիչ ու թուղթ տւի քեզ,  
Փոխան դոցա՝ ըսի մի օր,  
Աւրիշ բան մ'ալ կռտամ քեզ։  
Անա փոխան գրչի քեզ սուր,  
Փոխան թղթի կուի դաշտ,  
Գնա, կռէ դու քաջի պէս,  
Աւրախացուը տրտմհալ ազգդ։  
Ելիր կապեմ սուր մէջքիդ  
Ասպար կախեմ քո վզէդ,  
Եւ մի դրօշակ ոսկէփետուը  
Թող ձածանի աջ թէշդ։  
Խըմեան-Հայրիկ

—o—

195 Ա. Ն Լ. Բ. Ռ Ե Լ. Ի Խ Ա Յ Ա Յ  
Անլընելի վլշվըշում է  
Պղտոր չուրը Դիրէդի,  
Նրա ափին կանաչում է  
Մինակ շիրիմն իգիթի։  
Նրա շուրջը ճէգ սիրուհին  
Թնդացնում է ողբ ու լաց,  
Զայն է տալիս իր Սարօին  
Ու պտըտում մոյրած։  
Եւ հոսում է գիշեր ցորեկ  
Արցուքն անբախտ աղջկայ,  
Բայց իր սիրած տղան երեք  
Զկայ, չկայ ու չկայ։  
— .., Սիրուն աղջիկ ինչ ես լալի  
Էդպէս մինակ ու մոյր,  
Ի՞նչ ես լալին ու ման գալիս։  
Ես ձորերում ամին օր։

Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում՝  
Մայիս կը զայ, մի քիչ կաց,  
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,  
Ա՛լս, նա գնաց, նա գնաց...  
Յ. Թ.

## 196 ՍԵՒ ՄԻԶԱՐԾՄ

Սև միզարըս ճօճք հմ արեր,  
Ճօճքն հմ կապեր ծառերէն.  
Լալէն, լալէն ըուն է մըտեր  
հմ որբ բալէն, իմ լալէն.  
Նանիկ էրա, նանի, դար-զար  
Դարդիր ունիմ, բանց ծով ու սար:  
Զար թըշնամու հըրէն, թըրէն  
Փախած, ընկած սար ու քար.  
Քեզի հար լուս սըրտիս վըրէն  
Վըրկած լացի սար ու քար:  
Օ՛ր, օր, բալաս, օր, օր, նանի,  
Քամրախտ մէրըդ չարդը տանի։  
Ծիծըս կըրծըիս կըպած, ցամքած,  
Ե՛լ կաթ չունիմ քեզ տալու։  
Սոված, ծարաւ թափըս կըրտած  
Օրօրելու ու լալու...  
Օ՛ր, օր, նանի, մի լայ, մի լայ  
Իմ մէկուճար ազիզ բալայ։  
Յորեկ եղաւ, հիմի հանդէն  
Կըթանն եկաւ, մերը մւր աւ  
Վախ, մեր հօտը էն-զուշմանը  
Զարկեց, տարաւ, ուր մ, չը կայ,  
Նանիկ էրա, մի լայ, մի լայ,  
Սև օրերիս նըշխուն լալայ.  
Բընաւորը թուրը քաշեց,—  
Արուն կապեց սար ու ձոր

Կարմիր-կարմիր արցունք թափեց  
Մեր վաթանի սար ու ձոր,  
Իմ աչքի լուս բալէն դուն ես.  
Սև սարերի լալէն դուն ես:  
Առ. Խոսհակեան.

o—

## 197 ԴՈՒՔ ԻՆՉ ԶԱՅՆ ՄԻ ՏԱՐ

Դուք ինձ ձայն մի տաք, դեռ պիտի քննեմ,  
Դեռ պիտի ննջեմ հանգիստ ու խաղաղ,  
Մինչ այս քայլքայւած խախուտ աշխարհը  
Վերանորոգման դիմէ անյապաղ:

Յայնժամ պիտ զարթնիմ, այս, ես յայնժամ,  
Երբ կուզայ Զատիկի, սուրբ օր Յարութեան,  
Մեր տիսուր երկիր գաժան ցըրտերից  
Կազատէ՝ տալով գարուն փրկութեան:  
Իմ սպաւոր հոգին յայնժամ կը հրճի՝  
Երբ իմ հայրենեաց հովիտն ընդարձակ,  
Երփներանդ ծողկոք կը բացւի աղատ,  
Մէջ տեղը ծլած կապուտ մանուշակ:

Մի կողմից լսէի խոխոջ առւակաց,  
Միւսից թոշնոց մեղեղին քաղցրիկ,  
Անուշ հովերի գուրգուրանքներով,  
Ողջունեն իրար թիկեր անմեղիկ:

Քացւի մեր երկրից բուք ու մառախուղ,  
Ամպ, փոթորիկներ, մրիկ ցրտաշունչ,  
Նոցա տեղ գարնան անուշիկ հովեր  
Մերձեալ հնչեն խաղաղ—անմռունչ:

Խայթ



## ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

## 199 ԱՌ ՏԻԷՔ ԻՆՉ

ԱՌ, տւեք ինձ բաղցը մի ըուն,  
Կեանքից հեռու սլանամ,  
Այս աշխարհը, ուր ինձութիւն,  
Ուր սէրն է միշտ անթառամ:

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,  
Վառ կանաչից իմ վերմակ,  
Նոցա բոյրը գւարթագին,  
Ծծեմ անվերջ ես անյագ:

Եւ խայտարով իմ առաջին  
Վտակն անուշ խոխոջէ,  
Մի թարմութիւն եղեմային,  
Չորս բոյրքս տարածէ:

Եւ ինձ ժպտի արշարուխն,  
Գարնան մատաղ արհգատկ,  
Եւ գիշերով իմ ճակատին,  
Խաղայ զողարիկ վառ լուսնակ:

Եւ աչաղեղ կոյսն ականջիս և բազմ  
Իւր մեղեղին նուպէ՝  
Եւ հերարձակ սիրով վկիս յարաց ոչ  
Փարէ, մեղմիկ փաղաքէ...

Եւ յաւիտեան վայելչութիւն  
Դրկէ հոդիս, չյագենամ...  
Ա՛խ, տւէք ինձ քաղցր մի ըռւն,  
Հեռու, չեռու սլանամ...  
— Յ. Յովիանիսեան

## 200 ԱՅ ԻՄ ՍԻՐՈՒՆ

Այ իմ սիրուն, հաղար սիրուն,  
Դրախտի խնձոր, աղուշ-մազուշ,  
Այ եղեգնի շաքար ծորուն  
Բայց նրանից քաղցր ու անուշ:  
Սիրուններում ընտիր սիրուն,  
Ի՞նչ լաւ Աստւած է քեզ գլծել.  
Կաթնով շաղւած են մոլորուն,  
Քո թաքցրած շամամ ծծեր:  
Եար, կըմեռնես—կը գայ օրը—  
Ծոցդ երկինք չես դրկելու.—  
Ճիճուն կուտէ այդ բոլորը,  
Միթէ ինձ ես լոկ դրկելու:

Ն. Քուչակ

## 201 Ա՛Խ ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Ա՛խ, իմ սիրեկան, ինձմէ հեռացար,  
Քեզ ի՞նչ գէթ արի, որ ինձ մոռացար,  
Վերջո թէ էդ էր, էլ մւր մօտ կացար,  
Քու սրտի սէքը ինձ մւր խոստացար:

Սուր էշխիդ նետը սրտիս խփեցիր,  
Քո սիրոյ կրակը ջանս զցեցիր.  
Սրտիս վէրքերին մըլհամ չը բակցիր,  
Երւած ու խորւած, մտէդ քցեցիր,

Արի սիրեկան, ինձ մէ ուահմ արն,  
Երեսդ մի շուռ տուր, ինձ մտիլ արն,  
Խղճա, քո զուլին, մէ ականջ արն,  
Քո քաղցր ձէնին ինձ արժան արն:

## 202 ԾԱՂԿՈՑ ՄՏԱՅ

Ծաղկոց մտայ—սիրու էրւած, եարու էր,  
Եարու սիրուց աղիկ եարիս կարօտ էր:  
Աղիկ եարիս ձէն արւեցի ձէն չըկար,  
Ծաղկանց միջին անուշ վարդըս էլ չը կար:  
Անգութ եարըս սրտիս հետը—խաղ արեց,  
Թողեց, գնաց, իմ ջիգեարը դաղ արեց:  
Երգիչ գարձայ, պտըտեցի սար ու քար,  
Ձէն աւեցի անուշ վարդըս էլ չը կար:  
Աստւած սիրէք, ասէք՝ եարըս մւր գնաց,  
Աղիկ եարըս անուշ վարդըս մւր գնաց:  
Էն ի՞նչ դուշ է էն ոսկեպատ վանդակում.  
Էն ի՞նչ վարդ է ոսկեջրած բաժակում:  
Ա՛խ, էն հիւանդ իմ խեղճ եարն է բանտարկւած  
Ա՛խ, էն թշւառ իմ ալ վարդն է թառամած...  
Ծ. Թ.

## 203 ԳԻՇԵՐ ՑՈՒՄԵԿ

Գիշեր ցերեկ մորմոքում եմ, ի՞նչ անեմ,  
Կարօտ քաշում եմ տարով նազանի,  
Հանգիստ չունիմ, անդադար եմ քեզ համար,  
Ցաւերս թէթեցուր սիրով, նազանի:

Մէկ տեսքդ տեսնողը քեզնից կամաչէ,  
Ծանօթացիր, սիրականիդ ճանաչէ,  
Հագած զկեստդ ալ ու կանաչ է,  
Փաթաթւել հս ճերմակ զարով նազանի:  
Թալալօղին խմեց երազում թասը,  
Քաղցրանաս, դու մեզի անուշ բարև տաս,  
Երանի այն օրւան, որ միր տունը դաս,  
Պտըտիմ գլխովդ բարով, նազանի:

## 204 ՍԻՐԱՎԵԼԻ

Թէ ինչպէս էինք մենք իրար ոլրում:  
 Դա յայտնի է մեղ, մէկ էլ Ասործուն.  
 Մեր սէրը չունէր գլրիթէ սահման.  
 Պաշտում էինք մենք՝ նա ինձ ևս նըրան:  
 Բայց չէր վիճակւած, տարաբախտաբար,  
 Միասին գընալ մէր կեսնքի ուղին,  
 Նա մի ամուսին զրտաւ իր համար,  
 Եւ ես էլ զրտայ ինձ համար մի կին.  
 Գարունը գընաց և նորից եկաւ,  
 Եւ այսպէս երկար տարիներ անցան,  
 Սակաւ առ ստկաւ մէր սէրը հանդաւ,—  
 Եւ մենք մոռուցանք՝ նա ինձ, ևս նըրան:  
 Բայց ահա մի օր ամարանցում,  
 Երբ մանկիկներին առաջը դցած՝  
 Նա ման էր գալիս ծառուղին ելում՝  
 Իր ամուսնու հետ թեանցուկ արած:  
 Մենք իրար տեսանք, իրար նայեցինք,  
 (Նա գեղեցիկ էր առաջւայ նըման).  
 Անցած օրերը նորից յիշեցինք—  
 Եւ կարօտեցինք՝ նա ինձ, ևս նըրան:

## 205 ԱՂՋԻԿ ԱՐԻՌ ՄԵԿ ՊԱԶ ՏՈՒՐ

Աղջիկ արի մէկ պաչ առւր, ջանիդ մատադ,  
 Ես մեռնում եմ, քեզ ու քու նանիդ մատադ,  
 Մատներումդ ոսկէ մատանիդ մատադ,  
 Նախշ ես անում քարգահ ու բանիդ մատադ,  
 Կարմիր սուրաթ՝ սպիտակ կուլ չանիդ մատադ՝  
 Լաւութիւնը լաւ կուլի աշխարհումս,  
 Քեզանից աւել էլ ճար չունի մ ճարումս,  
 Թէ մարալ ես, եկ ման արի սարումս,  
 Ես կաղնած եմ իմ տւած իղրարւմս,

Հարսսնիքդ կու նստի այս տարումս,  
 Ծծիդ վրէն կախած նշանիդ մատադ:  
 Աշխարհումս չի ճարւիլ քո դօլիցը,  
 Թէկուզ բերեն Հինդ ու Ստամբուլիցը,  
 Խելքս գնաց՝ գուրս եկար էն դօլիցը,  
 Զէյրանի պէս տեսայ եկար չօլիցը,  
 Կարսի պէս ձայն ես տալիս քօլիցը,  
 Անուշ խօսքիդ՝ ճարտար բերանիդ մատադ:  
 Ես քեզ համար մեռած եմ թաղւածի պէս,  
 Գիշեր ցերեկ մալուլ եմ շաղւածի պէս,  
 Խելքս գլխէս գառել է քաղւածի պէս,  
 Զիգնարս էլաւ նարին մաղւածի պէս,  
 Նարզիզ, սուսան, ալմրուլ ես քաղւածի պէս,  
 Բէր հոտ առնեմ վարդ ու բեհանիդ մատադ:  
 Եշխի բանը խօմ գիտեմս ինչպէս կուլի,  
 Մինչի իրան համնի ջանը կէս կուլի,  
 Մէկ պաչ օր տաս, Թէհրանը ինձմէն դէս կուլի,  
 Երկնքի մալակները քեզ պէս կուլի,  
 Ապա տեսնեմք մում հագուստը էդ պէս կուլի,  
 Կարմիր շապիկ կանաչ մինթանիդ մատադ:  
 Թէ բիւլբիւլ ես, բաս ի՞նչու չես բաղումը,  
 Կարմիր վարդ ես, բաց էլած եափաղումը,  
 Լուսնակ ես չարխի մաղալլաղումը,  
 Կայսերի պէս կանգնել ես օթախումը,  
 Միսկին-Բուրջուն պահել մի դութաղումը,  
 Թամրահ արա, թնդ՝ քու գիւանիդ մատադ:

## 206 ՄԵԽՈՐԱԿ ԱՉԵՐ

Սկորակ աչեր հրաշալի աչեր  
 Գեղեցիկ աչեր սքանչելի աչեր,  
 Հէնց օր քեզ տեսայ խելագարւեցայ  
 Քեզ համար միայն աշխարհ մոռացայ:

Զը տեսնէի ես քեզ, չէի տանչւել,  
Դապրէի մի դար ուրախ և գւարթ,  
Դու աչեր սիրուն, աչեր գեղեցիկ  
Խլեցիր ինձնից իմ անդորրութիւն:  
Երբեմն երազում տեսնում եմ ես քեզ:  
Եւ կարծում եմ թէ՝ բախտաւոր եմ ես,  
Զարթնում եմ յանկարծ շուրջս մթին  
Չկայ մի ընկեր, չկայ կարեկից:  
Դեռ չի թառամել բո վարդն ինձ տւած  
Նշան սրբութեան գրկախառնութեան,  
Պոկեցիր սիրտս անգութ անսսաւած  
Եւ մոռացար ինձ այժմ և յաւիտեան:

## 207 ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՍՈՒԻՐԲ ԿԻՐԱԿԻՆ

Աստածածնի սուրբ կիրակին,  
Արեւ դեռ չէր ծագել,  
Գեղեցկուհին իջաւ այգի,  
Կանաչ-կարմիր էր հագել:  
Եւ մանրաքայլ, յուշիկ-յուշիկ,  
Պատրուսենին նա մնցաւ,  
Քաղեց խաղող-մեղր անուշիկ,  
Շար շըմաթի մէջն ածաւ:  
Բայց շըմաթը վեր քաշելիս,  
Նրա տակից լուս ցողաց—  
Արև ըս կայ, մէջն է լալիս,  
Ինչո՞ւ այգին շողովաց...  
Իսկ խաղողը—այ դաւաճան—  
Խայտաց ծոցում խենթի պէս,  
Լեզու առաւ, կանչեց «ջան, ջան,  
Մուրազս առայ վերջապէս:  
Լաւ է մի ժամ ինձ այս անուշ  
Ծոցում քաղցր արուրէիլ  
Քան մայր-ճիւղիս վրայ մուշ-մուշ,  
Տարիներով օրօրւիլ»:

Ն. Քուչակ

## 208 ԹՐԻՒՐ ԻՄ ՍԵՐ

Թոփիր իմ սէր սրտիս խորքից,  
Գնա, գտիր սիրուհուս,  
Նրա քնքոյշ սրտի խորքում,  
Դիր կրակը, իմ սիրուս:  
Եւ նա կըզգայ այն ժամանակ,  
Թէ ինչ է իմ տանջանքու,  
Զօր ու գիշեր միշտ հանապադ,  
Մաշում է իմ խեղճ կեանքու:  
Կամ իմ նախշուն աչքերիցս,  
Թուէք շանթ ու սլաքներ  
Շանթէք կուրծքը իմ սիրուհուս  
Բացէք սիրոյ խոր վէրքեր:  
Այն ժամանակ ով գու անգութ,  
Իմ վիճակիս կը խղճաս,  
Թէ ինչ աղի արտասունքներ,  
Մափել եմ ես հանապագ:

## 209 Ա. Բ. Ա. Զ

Արազն եկաւ լավին տալով  
Ժեռ քարերին ափին տալով  
Ո՞րտեղ թաղթմ ես իմ դարովը  
Չոր գլուխս, տափին տալով:  
Այ իմ Արազ, ջուրդ վարար,  
Սիրուն եարիս եարաբ տեսար,  
Ես չասայ իմ մուրազիս,  
Արազ, եարաբ կարօտս տոմք:  
Ամպերն ընկան Մասիս սարին,  
Կարօտ մասից եմ իմ եարին,  
Աստւած սիրես, էրւած սրտիս,  
Զուղապ բերես եկող տարին:  
Գիշերն անքուն զեր կը զըմ,  
Արտասուքս գետ կը շինեմ,

Արագ ծէզը ջրիդ չտուած,  
իմ սև դարդը քեզ կ'ըերեմ,  
կասես շողքը քարին ընկաւ,  
կրակն իմ սրտիս մէջն ընկաւ,  
կամար ունքից, թռւխ աչքերից,  
Յաւն իմ ջիւան ջանիս ընկաւ,  
Յ. Յովհաննիսեան

## 210 ՈՒՐՏԵՂ ՍԻՐԱԽՆ

Ուրտեղ սիրուն կին կը տեսնիմ,  
կը նորանան դարդերը.  
Ու երբ անուշ երգ կը լըսնմ,  
կը խորանան դարդերը.  
Սահման չունին, դարման չունին,  
չեն վերջանում չեն անցնում,  
Ա՛խ, մահւան պէս, սև մահւան պէս,  
իմ դարդերը, դարդերը...

Զառ յոյսերով, անմահ սիրով  
ես քեզ խորունկ սիրեցի.  
Աստղ ու երկինք—մատաղ սիրտըս  
ոտներիդ տակ փըսեցի.  
Սէր չը տւիր, ու աշխարհէն  
սիրտըս կըտրաւ, Շուշան ջան,  
Ա՛խ, զմրուխտէ, մի զմրուխտէ  
իմ յոյսերըս իմ սէրըս...

Կարօտ կեցայ կընջ սիրուն—  
ոըրտի ոսկի արեին,  
Պապակ կեցայ մութ սարերին,  
ըաշը փըրփուը նըժոյգին.  
Կեանքըս անցաւ թերը թափ,  
սիրտը կոտրած սազի պէս,  
Ա՛խ, ծովէն խոր, սարէն՝ ծանըր  
իմ դարդերը, դարդերը...

## 211 ՍԻՐԵԼԻԴ ԻՆՉ ԱՏԵԼ ԵՄ

Իմ սրտին աղ ես արել,  
Զիգարս դաղ ես արել,  
Ինձանից հեռացել ես,  
Ինձ բէգամաղ ես արել:  
Դու ես իմ սիրահարը,  
Քաշկա տանեմ քո ճարը,  
Գլխիս տւել չես քարը,  
Կիսակինդան ես արել:  
Շատ մարդկանց ես խաչել Դու ես իմ սիրականս,  
Սիրոյդ ես իմ կրակւել,  
Ինձ հօ թուկով չես կապել Երեշ տարւայ դիւշմանս,  
Ամա գուղսաղ ես արել,  
Սիրելիդ էի ատել ես,  
Ատել ես նախատել ես,  
Զիգարս կորատել ես,  
Սընում շաղախ ես արել:  
Ինձ արտինելու յայտնէ զբով,  
Ինձ հօ մորթել չես պրով,  
Սնսուր մատաղ ես արել:  
Ասա տեսնեմ իմ մեզը,  
Հալւելայ է սրտիս եղը,  
Երկու ծծիդ մէջ տեղը,  
Բաղչա ու բաղ ես արել:  
Շատ մարդկանց ես խաչել Դու ես իմ սիրականս,  
Մի մաշիլ ջիւան ջանս,  
Երեւ թուկով չես կապել Երեշ տարւայ դիւշմանս,  
Նոր ըարեկամ ես արել,  
Մայիլ եմ դօշիդ խալին,  
Անուշ խելք ու քամալին,  
Խղճալի Գուրջի-օղլին,  
Կարկտահար ես արել:

## 212 Զ Ի Ֆ Ե Ը Դ

Սանդրի, թող թափի խէտ շող երէսիդ,  
Քամին իկեա տանի--բերի զիլֆերդ,  
Աշխարհըս խինդ օր ի, մարդու չի մնայ,  
Էդ էլ մի դեօրվանի թող քշի զիլֆերդ:  
Մէկն իսպահանի, մէկն թեաշանի.  
Առնող բազըրգեանի տունը կը շինի,  
Խազար խետ էլ խետ ապրշումին կշնի,  
Հալամ տէլ էժան ի, մի տու զիլֆերդ:  
Էդ երկուն էլ Յարութիւնին Փարման ի,  
Ինձ մէ դարդի քցիր առանց դարմանի,  
Հալղայ-հալղայ արա, թալ վիզդ կանի,  
Վեաւ որ չուզի աչքը խանը զիլֆերդ:

## 213 ԳԻՇԵՐ ՑՈՐԵԿ ԿԸ ՀԱՌԱՋԵՄ

Գիշեր ցորեկ կը հառաջեմ, ախ, օրիորդ քո սիրոյդ  
Սև աչքերուդ վարդ այտերուդ գարնւեցայ ի՞նչ օգուտ,  
Աչքերուդ այտերուդ և ոսկէթել մաղերուդ,  
Միտյն քեզի սա կ'աղաջեմ որ ունենաս բիչ մը գութ:

Գիտես, անգնեթ, որ իմ սիրոս չի գիմանար այս ցաւուն  
Քեզի համար ալ չի զազրիք աչքիս արցունքն օրն ի բուն,  
Քեզ միայն կը յիշեմ թէ քուն ըլլամ թէ արթուն,  
Թէ մոթ ըլլայ միտքս կուգաս նոյնակս և առաւօտուն:

Շատ աղուներ թէն տեսայ, ոիրտս միայն քեզ սիրեց,  
Դ'ն, չեմ զիտեր ըսէ ինձի, թէ քու սրտիդ ովլ տիրեց,  
Ա իսքու խաթուն բարի մայրիկի իրեն փեսայ ովլ ընտրեց,  
Գիրի կըլլամ քու մօրկանդ, եթէ զիս զուրկ չի ձգեց:

Ուրախ էի, զիտես որ օր մը ես բեզի նստեցուցի,  
Սա ներսիզիս ինչ կայ չկայ, ամենքն ալ հասկցուցի,  
Անուշ բոյրդ զիս թովից, քենէ վարդ մը փրցուցի,  
Այս ինչ օր էր, ինչ ժամ մանակ, խելքս գլխէս թոցուցի:

## 214 ԻՆՉ ՈՒ ԻՄ ՍԻԲԵԿԱՆ

Ինձ ու իմ սիրեկան եարին մէ տարի բերած  
գիղենաբ,  
Ալ քաշելէն սըրտիս մէշըն արունըն մերած զիտենաբ.  
Դրէիք ցերեկ եարի խաթըն ջիգարըն էրած զիղենաբ,  
Աչքըն թաց, բերանս ցամաք, լիզուս հիդ բերած  
գիղենաբ:

Սիբալս փորումըն թուլացաւ անզայներու զախ  
անելէն,  
Ուշկ ու միտքըն խոնլվեցաւ խուռըն խաղ  
հանելէն,  
Աչքեմէս ջուհարըն զընաց՝ եարին կարօտ՝ միս անելէն,  
Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կերած զիղենաբ:

Էրած խորված ման իմ զալի, մէ տիդ չըկայ մաք  
ունենամ,

Լիդփով չիմ կանացի ասի, թէգուզ խօսքըն փարդ  
ունենամ,

Ափուսալու հազար ափսուս՝ իս էնզաղա դարդ  
ունենամ.

Էշին ուշկ ու միտքըն կապած, ինձ ջրի տարած  
գիտենաբ:

Սիբալս փորումըն սգուր է, ալ աչկիըն յաց է  
անում,

Ծովըն նընգած ամպի նըման դօշս ու եախէս  
թաց է անում,

Թանի փուր մըկլամ իմ դնում, դուզունս էլ խիան  
թաց է անում,

Հալվեցայ արնաքամելի՝ եարէս հիդ արած զիտենաբ:

Օլ տեսնում է, էս է ասում «վայ քու դարին  
Սայեաթ-Նօլա»,

Համաշա քիզ պիտինք տեսնի՝ աչքըդ արին,  
Սայեաթ-Նօլա,

Ինչով չէլաւ, չըռաստ էկար մէ լաւ եարին,  
Սայեաթ-Նօլա».

Ումբըն էրազի պէս գընաց՝ ծառըս չը խերած զիտենաբ:

## 215 ՄԻ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի լար բլբուլ քեզ մի տանջիր,  
Որ փոթորիկն անիրաւ.

Վարդդ սիրուն, վարդդ կարմիր,  
Թփից պոկեց ու տարաւ.

Կոնցնեն օրեր կ'զայ կրկին,  
Մի նոր գարուն վարդարեր,

Եւ սոսացած քո վիշտը հին,  
Նորից կ'երգես վարդի սէր»

Բայց վայ կեանքին այն խեղճ երգչի,  
Պը վաղաժամ որբացաւ,  
Իւր սիրելի խօսող վարդից,  
Նա յաւիտեան զրկւեցաւ:

Երգչի համար զարուն չի դայ,  
Եւ ոչ նոր վարդ կ'սիրէ,  
Նա պէտք է լայ, պէտք է սդայ,  
Մինչ յաւիտեան պիտ' լոէ:  
Ա. Շատուրեան

## 216 ԴԱՐԴԼՍ ՀԱՅՔ

Դարդըս լացէք, սարի սըմբռւլ,  
Ալւան ալւան ծաղիկներ.  
Դարդըս լացէք, բաղի բըլբռւլ,  
Ամպշող երկնուց զով-հովեր...  
Երկինք-դետինք գըլխուս մըթնան,  
Անտուն-անտէր կուլամ ես.  
Եարիս-տարան-ջանիս-տարան,  
Հոնդրւր-հոնդրւր կուլամ ես...  
Ա՛խ, եարս ինձի հանեց սըրտէն,  
Անձար թողեց ու գընաց.  
Սըրտիս սաւդէն-խորունկ եարէն,  
Անդեղ թողեց ու գընաց...  
Դարդըս լացէք, սարի սըմբռւլ,  
Ալւան-ալւան ծաղիկներ.  
Դարդըս լացէք, բաղի բըլբռւլ,  
Ամպշող երկնուց զով-հովեր...  
Աւ. Իսահոկեան

## 217 ՍԻՐՈՒՄ Էի...

Սիրում էի երբեմն քեզ,  
Այժմ ես տակաւին,  
Իմ սրտումը դու ապրում ես,  
Բայց ոչ ուժով քո նախկինս

Առաջ հնչում էիր մաքուր,  
Որպէս բիւրեղ իմ հոգուն.  
Որպէս սիրոյ նախանձ և հուր.  
Տաք արիւնս բորբոքում:  
Այժմ որպէս վաղոց մեռած,  
Բարեկամի յիշատակ,  
Կամ մանկութեան օրով սիրած  
Մի հին երգի եղանակ:  
Քո անունդ այժմ յիշելիս,  
Էլ չեմ ասում հոգեակս,  
Զեմ աշխատում քուն մտնելիս,  
Որ քեզ տեսնեմ երազում:  
Բայց զարմանքով երբեմնապէս,  
Մտածում եմ ակամայ,  
Ի՞նչու էլ դու սիրելի չես,  
Ի՞նչու ես քեզ մոռացայ:

## 218 ՈՒՍՏԻ ԿՈՒԳԱՍ

Ուստի կուգաս, զարիբ բըլբռւլ  
Դու մի լաց լի, ես եմ լալու,  
Դու վարդ փնտոէ ես գոզալին,—  
Դու մի լաց լի, ես եմ լալու  
Արի, բըլբռւլ խօսի բան,  
Օխնւի քու էկած սարն,  
Քե վարդ էրեց, ինձ իմ եարն.—  
Դու մի լաց լի, ես եմ լալու  
Ման եմ գալի զիդարի հետ,  
Վունց զարիբ բըլբռւլը եարի հետ,  
Դու վարդի հետ ես եարի հետ,  
Դու մի լաց լի, ես եմ լալու  
Սալիի նման կանաչ եմ,  
Արի, խօսի, ձայնդ ճանաչեմ,  
Դու վարդ կանչի, ես եար կանչեմ,  
Դու մի լաց լի, ես եմ լալու:

Հարիբ բըլթու, ձայնիցդ մալում,  
Եսու գու էրվենք մէ հալում,  
Սայհաթշնովէն ասաց՝ զալում  
Դու մի լաց լի, ես եմ լալու:

## 219 ԴՈՒ ԶԵՄ ՀԱԻԿԱԾՈՒՄ

Դու չես հաւատում թէ քեզ եմ սիրում,  
Թէ զիշեր ցերեկ անքուն անհանգիստ,  
Միայն քեզ համար մտածում եմ միշտ,  
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:  
Թէ քո վառ սիրով ես հիւանդ պառկած,  
Ուժու սպառած լեզուս չորացած,  
Ասեմ քո սիրուց հոգիս կաւանդեմ,  
Դու չես հաւատում որ քեզ սիրում եմ:  
Բայց եթէ յանկարծ ես խելազարւիմ,  
Չեռներս ծոցիս փողոցներ շրջիմ,  
Եւ սիրոյ երգը երգեմ սգալով,  
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:  
Վերջապէս թէ քո սէրը յաղթելով,  
Սպանէ յանկարծ վերջիս շունչս տալով,  
Քեզ համար միայն արիւնս թափեմ,  
Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ:  
Թէ սառ դիակս ամփոփւած լինի,  
Մի քանի չոր չոր տախտակների մէջ,  
Ընկերներս տանին դազալս գրկած,  
Դու չես հաւատում թէ քեզ սիրում եմ:  
Ամէնքը դառն արցունք թափելով պիտի,  
Ինձի համբուրեն հրաժեշտ տալով,  
Դու չես մօտենալ գէթ վերջին անգամ,  
Բարեկ տալու մինչև յաւիտեան:  
Ծնողը բարեկամք երկինք և երկիր,  
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,  
Որ սիրեմ անկեղծ դու էլ ինձ սիրես,  
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:

Երբ արե լուսին խաւարին յանկարծ,  
Երբ ինձ իջնեն խաւար գերեզման,  
Գերեզմանից էլ մի ճիչ կարձակեմ,  
Որ քեզ եմ սիրում էլ չես հաւատում...

## 220 ԻՄ ՍԻՐԱԿԱՆԻ ԿԱՐՈՏԻՑ

Իմ սիրականի կարօտից տարւած՝  
Տեսայ փողոցում նրան իմ զիմաց,  
Ծով-ծով աչքերը գետին խոնարհած,  
Շիկնած, ամօթխած բարենց կամաց:  
Եւ ինչպէս շոգում սառն աղբիւրին  
Հանդիպի յանկարծ ծարաւած ճամբորգ,  
Հըպի շրթունքով կենսարար ջրին  
Եւ ծծէ ագահ այն ջրից յորդ-յորդ.  
Ես խենթի նման եարիս գրկելով՝  
Պիսդ պինդ պաչեցի աչքերը խորին.  
Վայ ինձ—նա գնաց լալով, կրկնելով՝  
«Խայտառակ եղայ օրը կէսօրին»:

Ն. Քուչակ

—ο—

## 221 ՈՎ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ

Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար  
ըաշում է փափագ, ով սիրուն սիրուն,  
Զի լինիլ քեզ պէս ամենայն երկիր  
փայլուն արուսեակ, ով սիրուն սիրուն,  
Կուգայ ժամանակ, ով սիրուն սիրուն,  
Փառք ու պատիւդ քեզի կ'յանձնեն  
ըոյրիդ նմանակ, ով սիրուն սիրուն,  
Եղեմեան ծաղիկ, հայրենի հոգով  
մնւած մանիշակ, ով սիրուն սիրուն,  
Հոգիդ անարատ, տեսքդ գերազանց,  
մէկ հատ օրինակ, ով սիրուն սիրուն

Սրտիս ու հոգոյս մխիթարութիւն  
քեզանով է միշտ, ով դեղատու կինք  
Յոյսս դրած եմ ես բոլորովին  
սիրելոյդ վերայ Աշխարհատիկին,  
Ազնիւ թագուհի շնորհօք լեցուն,  
այցելութիւնդ է մեզ կաթոգին,  
Զարդացած մտքով Եւրոպացու պէս,  
թէև ասում են քեզ ասիածին,  
Փնտում են քեզի շատ սիրահարներ  
աշխարհիս մէջը սրտով լալագին,  
Բացի քեզանից թէ լոյս էլ լինի,  
չէ մեզ ընդունակ, ով սիրուն սիրուն:  
Ի՞նչ կլինի արդեօք արժան համարես  
դէպի մեր կողմը գաս այցելութեան,  
Փափագդ քաշող տեսնում ես շատ կայ,  
պատկերդ ցոյց տուր լինինք բաւական,  
Քեզ սիրողներուն զու մի չարչարիր,  
քիչ խնամք արա, անոյշ սիրական,  
Լուր պաղատանքս, ով իմ սիրու հի,  
վիրաւոր սրտիս տուր դեղ ու գարման,  
Ոչ զու մեզի պէս կարող ես գտնել  
և ոչ մենք քեզի մէկ հասանման,  
Դու մեզ թագուհի մինչև յաւիտեան,  
մենք քեզ հպատակ ով սիրուն սիրուն:  
Զիւանի.

## 222 Ա.ՂԿԱՅ ԵՐԳ

Հանգիստ իմ անուշ, անցար գնացիր,  
Միայն վերքն անբոյժ սրտումս թռղուցիր.  
Սոխակ գեղեցիկ կանաչ պարախզում,  
Երգելով քաղցրիկ ինձ չէ կրաւում:  
Քեզանով միայն երջանիկ էի,  
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի.  
Երեկը մենակ փակւած սենեակում,  
Ողբում եմ անյագ ոչ ոք չէ լում:

Գիշեր է գալիս մահիճ եմ մտնում,  
Տրտում է հոգիս քունս չէ տանում.  
Մազերը թոււս երկայն, աչերը գրաւիչ,  
Ի՞նչ հասակ, ինչ ձայն, ինչ հոգի կտրիճ,  
Ո՛հ, սիրոս այրեած ողջ քեզ է կանչում.  
Ողջ ըս անմոռաց անունդ եմ յիշում,  
Անգութ ինձ խաբեց, ուրիշին սիրեց,  
Ա՛խ, նա ինձ դեռ վաղ, պատրաստեց դագաղ՝  
Ա. Շահազիզ

## 223 ԱՍՈՒՄ ԵՆ ԹԵ

Ասում են թէ սիրեկնի հետ սէր չունիմ,  
Յետը ընկնես, զարարն աւել խէր չունիմ.  
Իմ տեսնողն ասում է դարդեր չունիմ,  
Վայ, ինչ անեմ, դարդերիս ընկեր չունիմ  
Հէնց գիտում են սրտումս ցաւեր չունիմ:

Լսիր ցաւըս, ինձ դեղ արա, սիրեկան,  
Ծոցիդ միջին մէկ անդ արա, սիրեկան,  
Որ տեղ կուզես էն տեղ արա, սիրեկան,  
Թէ մարդ խօսի, ինձ մեղ արա սիրեկան  
Աշխարհումս քեզնից աւել տէր չունիմ:

Էժան չէ սէրդ, զիտում եմ թանգ ունիմ  
Քո սիրողիդ կըխմացնես բանգ ունիմ,  
Վաղ զիտէի, որ էղպիսի հանգ ունիմ.  
Երկնքի պէս օրը հարիւր ունգ ունիմ,  
Լուսին ասում է քեզ պէս պատկեր չունիմ:

Քեզնից չունիմ մէկ սալամ տալ, ինչ ասեմ  
Աւել չունիս գնալ ու գալ, ինչ ասեմ,  
Դուն իղբալով, ես բէիղբալ, ինչ ասեմ,  
Երեսիդ կայ թանկազին խալ, ինչ ասեմ.  
Խալիդ գինը թէ գին դնեն, ջէր չունիմ:

Սէր ուզում ես, ինձ անես, լաւ կանես,  
Լաւ անունըդ աշխարհումը չաւ կանես,

Սիւահարիդ ձեռումք զբաւ կանես,  
Թէ մուսանաս նրան մեծ դարդ ու ցաւ կանես,  
Նա էլ կասէ, և ողջում ախաղէր չունիմ:  
Ինչնվ չիմացար քու լաւ ուղողդ ով է,  
Քանի որ սաղ է, պէտք համաշա գովէ,  
Մէրը որ կայ, մէկ անպատմելի ծովէ,  
Մէկ օր արի քու Քամալուն բարովէ,  
Ծանսպարհին մնալով աչքեր չունիմ:

## 224 ՀԱՅՈՑ ԱՂՋԻՆԵՐ

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,  
Երբ միտքս էք գալիս, ասում եմ ևս ախ,  
Հալլում եմ հալլում, օտարութեան մէջ,  
Ա՛խ, սիրոս խորովում ցաւիս չկայ վերջ:  
Երբ կարմիր գինին բաժակումս ածած,  
Սելանիս վերայ առաջս է դրած,  
Աչքս ակամայ վերան եմ ձգում,  
Զեր սիրուն պատկերն եմ մէջը անսում:

Տեսնում եմ և, ախ, միտքս է մոլորվում,  
Դաւն արտասունքով աչքս պղտորում,  
Կարձում եմ բոլոր աշխարհը մթնեց,  
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,  
Չեր սիրուն աչերն էլ երբ կը տեսնեմ,  
Էս սեսև աչերը՝ սե ունքով պատած,  
Գործես՝ երկնային զալամով քաշած:

Էս սեսև աչերն, որ շատին սպանեց,  
Բայց էլի շատին՝ գժոխքից հանեց,  
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,  
Առանց կը սկի էրւած, խորոված:

Էլ երբ կը տեսնեմ ևս ձեզ ման դալիս,  
Քաղ ու բալչայում սէյրան անելիս,

Ինչտեղ ամօթից վարդն էլ է գեղնում,  
Երբ որ ձեր կարմիր թշերը տեսնում:  
Բըլլումն էլ վարդից ձեր ձայնը լաելիս  
Թոչում է, թոչում ամպերում կորչում,  
Եւ իր Արարչին տեսածն ասելիս,  
Փառք քեզ, Տէր Ասուած, փաւք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ՝ ինչ անուն տամ ձեզ,  
Թէ հրեշտակ ասեմ հրեշտակ չեմ տեսել,  
Թէ մարդ անւանեմ բէղամաղ կ'անեմ,  
Ուրեմն ինչ անեմ, մոլոված եմ ես:

Մոլորված եմ ես, օտար աշխարհում,  
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,  
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման.  
Հայոց աղջիկներ՝ դուք էք աննման:  
Չեր սէրն է միայն սրտումս պահան,  
Չեր սիրով միայն եմ ևս կենդանի,  
Չեր սէրը միայն էս կեանքս մաշւած,  
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:

## 225 ՍԵԼԻՒ ԱՂԵՐ

Վրդովեցիր խաղաղ կեանքս սիրական,  
Անցուգարձիդ իսձ նայելով մշուսկու,  
Չէի տեսել մէկ հոգենան քեզ նման,  
Սևիկ աչեր, դուն իմ կեանքս մաշեցիր,  
Կանդնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Ի՞նչպէս մնամ ևս առանց քեզ միայնակ,  
Գուն ձգել ևս սրտիս մէջը վառ կըալ,  
Ակնարկելով գաղտնի ամէն ժամանակ,  
Սևիկ աչեր, զուր իմ կեանքս մաշեցիր,  
Կանդնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Անուշ անուշ խօսալովդ սիրուն կոյս,  
Մաշւած սրտիս նորից տէիր կեանք և յոյս,  
Առանց դինոյ արբեցուցիր խղճալոյս,

Սերկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,  
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:  
Սիրոյդ սուր սուր նետերովը խոցւեցայ,  
Քըրև ծաղիկ գեռ չբացւած գոցւեցայ,  
Երը քեզ տեսայ՝ կրակովդ լեցւեցայ,  
Սերկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,  
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Սիրոյդ լարը պարանոցէս տւիր կախ,  
Օր ու արև չունիմ գործս է միս ու վախ,  
Կրկին խօսէ գոնէ լինիմ ես ուրախ,  
Սերկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,  
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Զիւանի

## 226 ԷՆ ՄԻ ՊԱԶԲ

Էն մի պաչը, որ ինձ տւիր վերջապէս  
Քո բերանով, սրտի կամով ու տար-տաք,  
Զէ պարզեել անուշ պտուղ նրա պէս  
Տիեզերքի գեռ ոչ մի ծով ու ցամաք:

Նա անուշ էր զրախտի տւած էն պտղից,  
Որ վիճակւեց մեր նախահայր Աղամին.  
Նա ուտելուց թէպէտ զրկւեց սուրբ տեղից,  
Բայց մինչեւ մահ կարոտ մնաց էն համին:  
Ն. Քուչակ

## 227 ՊԱԴ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

Պաղ աղբիւրի մօտը կանգնած մի աղջիկ  
Չեռին սափոր, լցած ջուրն էր անուշիկ:  
Աչք ու ունքը դալամով քաշած գեղեցիկ.  
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:  
Պաղ աղբիւրի մօտը պարտիզում նստած  
Ռնէին լաւ գինի, զանան խորոված,

Երգում էին ու պարում աղջկերք բոլորած,  
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ման էր գալիս ընկերներով միասին,  
Կարձես հրեշտակ էր, չէր նա հողածին,  
Մաղերն ոսկեգոյն ճակստը լուսին,  
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:  
Ցերեկը անզաղար նորան եմ յիշում,  
Գիշերն էլ հրազիս մէջն եմ տեսնում,  
Տոչորւած ման կուգամ խեղճ մոլոր տրտում,  
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:  
Երանի այն աւուր հազար երանի,  
Տեսութեան ևս կրկին լինիմ արժանի,  
Առանց նորան երբէք չեմ մնայ կենդանի,  
Մայրիկ, զարնւեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:  
Զիւանի

## 228 ԹՈՂԵՔ ՈՐ ԳՈՌԱՄ

Թողէք որ գոռամ, գոռամ աշքարա,  
Թող աշխարհ ցնցի իմ աղաղակից,  
Հէյ քրիստոնեայ մարդ, խելքը գլուխդ արմ,  
Զգուշացիր սիրոյ անեղ կրակից:

Սէրն է աւաղակ անսիրտ մուեզին,  
Աւաղակ է նա ձեռն ու ոտ ունի,  
Բայց գուք նայիցէք էն աւաղակին,  
Նետ չունի ձեռին, կ'խփի, կ'սպանի:  
Վայ, կամաց-կամաց իմ ջանը մտած,  
Առանց գրողի հողիս է հանում,  
Չեմ ուզում գնալ, պողպատս չախած,  
Անոիրտ, անհոգին զօրով է տանում:  
Ն. Քուչակ

## 22) ՍԻՐԱԿԱՆԻ ԳԱՆ ԴԱՏԸ

Ես քեզ սիրի, որ դու ինձի չը թարլաս,  
Եթէ թարկես՝ հոգով մարմնովդ խարհես,  
Անիծեմ, տաս տարի տեղուժդ պարհես,  
Եօրդանի մէջ տնքայ կողերդ, աղջիկ:

Ում հետ էլ որ երթաս՝ հետդ չվարւի,  
Պասկելուդ օրը՝ քողըդ սև կարւի,  
Հօրդ տուն ու գուռը սև քարով շարւի,  
Ա՛խ ու վաճառվ մնայ ախպէրդ, աղջիկ:

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակւի,  
Քառասուն օր տանջւի՝ հոգին չը քակւի,  
Ինձնէն դայրի հետդ ով որ պատկի,  
Իրեք օր չը վելէ սէրդ, այ աղջիկ:

Զգտնես, խամ կտաւ էնես արխալուդ,  
Լէն բոլ աշխարհի մէջ օրդ անցնի սուդ,  
Հացդ կորեկ էղնի, գարին հետը կուդ,  
Օձի պէս սակաւի բռ կերդ, աղջիկ:

Ես մի խեղա տղայ եմ, էրի քեզ գիւման,  
Աստածածինն էնէ քու մօրդ դիւան,  
Իր կենաց մէջը նա՝ չունենայ սադ ջան,  
Որ ինձ էրաւ տնից դարբէզար աղջիկ:

Պտաճառն ինչ էր, որ չհաւնաք դուք ընձի,  
Կարծա էր դովլաթի, փափագ էր դանձի,  
Առաջ խօսը տուղի լեզուն պատանձի,  
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ:

Ալագեօգ աչքերդ, կամար ունքերդ,  
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,  
Քեզի ընձնէն էրաւ բու քեաֆիր մէրդ,  
Խնդրում եմ շատանայ վէրքերդ, աղջիկ:

Ես Զուլալ-օղլին եմ, դարդովդ եմ կեցի,  
Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի,  
Տասը տարի խաթրիդ աղապ մնացի,  
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ աղջիկ:

## 230 ԹԱՐԱՄԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄԱ

Թամամ աշխարհում չկայ մի անման ջան քեղի պէս,  
Ճակատ մէյդան քեղի պէս  
Ունքեր քեաման քեղի պէս,  
Աչքերը մաստան քեղի պէս,  
Պոօշն մարջան քեղի պէս,  
Սուրահ կեարդան քեղի պէս:

Կին մնց է ծնանել մարալ ու ջէրան քեղի պէս:

Վեզ տեսնոյն ասում է սա հողեղէն չէ, հրեշտակ է,  
Կերպարանքն արեգակ է,  
Հար թուշն մի լուսնեակ է,  
Աչքերն վասած ճրագ է,  
Լողուն դժոխքի կրակ է,  
Բուխաղն մեղը ու կարագ է,

Ուրան վարավուրդ եմ անում չկայ է ինսան քեղի պէս:

Երիսիդ մտիկ անողն ասում է քաշած ուտակեր ես,  
Ոտից ցլոււխ զիփ սէր ես  
Ամեն բանից գեր ի վեր ես,  
Իմաստալիր գլւի տէր ես  
Արարիչդ թէ կը սիրես,  
Սխալմունքս պիտի ներես,  
Որ կամենում եմ ասել, չկայ մէհրի բան քեղի պէս:

Ինչ տեղով որ անցնում ես ասում են եալաբ սա ով է,  
Հանգերձն դիփ կաթմիր մով է,  
Երեսը մախուրի խով է,  
Հանգարտութիւնով մհծ ծով է,  
Բերան պէտք է որ զովէ,  
Անպատմելի շնորհով է,

Կենացս մէջ չեմ տեսել սուլթան ու խան քեղի պէս:

Գեղեցկութիւն բաժանողից շատ վիայ ստացողն դու ես,  
Միշտ ուրախացողն դու ես,  
Ամակ իմացողն դու ես,  
Դատաստան անողն դու ես,  
Մարդոց ջան առնողն դու ես,  
Սայեադ սպանողն դու ես,  
**Քեամանգարների մէջ չկայ մի որսկան քեզի պէս,**  
Պ. Մաղթեան

## 231 ՄԱՐՈՒՄ ՄՐՏՈՎ

Մարուր սրտով, մտորուն  
Դաշտիցը տուն դառնալիս՝  
Յանկարծ տեսայ վառվուուն  
Արեգակի պէս եարիս:  
Խսկոյն անցաւ իմ մտքով.  
«Արի, սրան տամ մի պաչ,  
Բայց նա սաստեց ինձ ունքով,  
Խորհրդաւոր շըշընջաց.  
«Մեր տուն կը գաս երբ մթնի,—  
Հայրս ժամ է գնալու,  
Մայրս էլ տուն չի մտնի,  
Հիւր է այսօր մնալու:  
Հէսց որ անցար դուան շեմ՝  
Իմ ծոցը քեզ կը բանամ,  
Էնքան պաշեմ, պաշպչեմ,  
Որ վերջապէս կշտանամ»:  
Ն. Քռւչակ

## 232 ԲԱՐՈՎ ՏԵՍԱՑ

Զիս ասում, թէ՛ լաց իս էլի.  
Բարով տեսայ, իմ սիրեկան.  
Վարթի նըման բաց իս էլի  
Խարերով,  
Խարերով,  
Բարով տեսայ իմ սիրեկան:

Արբ մէ դարդըս իմացի,  
Էշխամէդ համան իմ լացի.  
Օրըս էսպէս անց է կացի  
Դարերով,  
Դարերով.  
Բարով տեսայ, իմ սիրեկան:

Եփ կու հաքնիս ու ու ատլաս,  
Տեմողին կու շինիս մասմաս.  
Դոշիդ պիտի լալ ու ալմաս  
Շարերով,  
Շարերով.

Բարով տեսայ, իմ սիրեկան:  
Ես քիզ գովիմ խաղի մէջըն,  
Շամամներդ թաղի մէջըն.  
Ման իս գալի բաղի մէջըն  
Եարերով,  
Եարերով.

Բարով տեսայ, իմ սիրեկան:  
Սայեաթ-Նովին վրևաց գընջանայ՝  
Աչքերըդ ուկէ փինջան ա.  
Դիւշմանի լեզուն մընջանայ  
Զարերով,  
Զարերով.  
Բարով տեսայ, իմ սիրեկան:

## 233 ՍԻՐԵՑԻ ԵԱՐԸՄ ՏԱՐԱՆ

Սիրեցի եարըս տարան.  
Եարայ տըւին ու տարան,  
—էս ինչ զուլում աշխարհ է,  
Պոկեցին սիրտս ու տարան:  
Ցաւըս խորն է ճար չը կայ,  
Ճար կայ, միս, ճարող չը կայ.

— էս ի՞նչ զուլում աշխարհ է,  
Սրտացաւ ընկեր չը կայ:  
Լաւ օրերը զընացին,  
Ափսոս ասին, զընացին,  
— էս ի՞նչ զուլում աշխարհ է,  
Սև զարդերը մընացին...  
Աւ. Իսահակեան

## 234 ԱԼ ԼԻՆԵՄ, ԽԱԼ ԼԻՆԵՄ

Աղջի, երնէկ ալ լինեմ,  
Թշշիդ վերայ խալ լինեմ—  
Թուշըդ պագնեմ զօր գիշեր,  
Սասցի նման հալ լինեմ.  
Ալ լինեմ,  
Խալ լինեմ,  
Սասցի նման հալ լինեմ:

Աղջի, երնէկ շալ լինեմ,  
Վշպիդ վերայ ծալ լինեմ—  
Վշպիդ փարւեմ ամեն օր,  
Կախւեմ, անդին լալ լինեմ.  
Շալ լինեմ,  
Ծալ լինեմ,  
Կախւեմ, անդին լալ լինեմ:

Աղջի, երնէկ թառ լինեմ,  
Թառի վերայ լար լինեմ—  
Գովքըդ պատմեմ աշխարհին,  
Քեզի համար եար լինեմ.  
Թառ լինեմ,  
Լար լինեմ,  
Քեզի համար եար լինեմ:  
Ցարութիւն թուսանեան

— o —

## 235 ՍԵՒ ԱԶԵՐԷՆ

Սև աչերէն շատ զախեցիր—  
Էն մութ, անծէր գիշեր է.  
Մութն ան է, չարքեր շատ կան,—  
Սև աչերը մի սիրէ  
Տես իմ սիրտը.— արուն-ծով է,  
Էս չարքերը զարկեցին.  
Էն օրւանէն զադար չունիմ,—  
Սև աչերը մի սիրէ...  
Աւ. Իսահակեան

## 236 ՄԻՐՈՒՆԵՐ ՄԻՔ ՆԵՂԱՆԱՅ

Միրունէր, միք նեղանայ,  
Որ ես իմ եարին եմ գովում,  
Դուք իմ դարձս չեք իմանում,  
Էնդուր նրան եմ գովում:  
Թէկուզ լինիք աղաւնեակ,  
Թէկիկներդ լայն բաց արած,  
Ճախրելով վեր բարձրանաք,  
Էլի եարիս եմ գովում:  
Թէկուզ լինիք սիրամարդ,  
Չել գեղեցիկ փետուրներով,  
Կամ անուշիկ երդող սիխակ,  
Էլի եարիս եմ գովում:  
Մազերդ ոսկեթիլ է,  
Ունքերդ նորածին լուսին,  
Ելքերդ փայլուն աստղեր,  
Էլի եարիս եմ գովում:  
Որքան կուզէր զարդարւէր,  
Ալ ու եշիլ գոհարներով,  
Եարս սկ զոքք ալ հազէր,  
Էլի եարիս եմ գովում:

Ամէն մէկդ մէկ-մէկ փէրի,  
Աչքիս առաջ ման էք գալի,  
Քայց ինձի չէք գրաւի,  
Էլի հարիս եմ գովում:

## 237 Թ/ՄՅԼ ՏՈՒՐ ՄՏՆԵՄ

Թոյլ տուր մտնեմ, ինձոր քաղեմ,  
Ծոցդ—դրախտն եղեմական,  
Ծծերիդ մէջ գլուխս պահեմ,  
Բնեմ քընով անմահական:  
  
Քո զթունքից ծծեմ գինի,  
Ծծեմ, հարբեմ, ինձ մոռանամ,  
Ցետոյ թող զայ Գրող ինձ տանի,  
Դժոխք թէկուզ յետոյ գնամ:  
  
Քայց ինչ անեմ, եար, մի ու զախ,  
Ուրիշնն ես, ով ինչ կասի:  
—Տօ, մի նայիր, մտիր անվախ,  
Աեղուն չորնայ, ով բամբասի...  
Ն. Քուչակ

## 238 ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿ

Համեստ աղջիկ, ինձ մի տանջիր չարաչար,  
Չարաչար սիրնեն ջան, չարաչար:  
Հոգիո հոգոյդ մատաղ լինի ամեն ժամ,  
Ամեն ժամ աիրուն ջան, ամեն ժամ:  
Ես հայ դու հայ մեր մէջ չկայ խարութիւն,  
Խարութիւն սիրուն ջան, խարութիւն:  
Նազիւ, նազլու ինձ մի ըշիր սարէսար,  
Սարէսար սիրնեն ջան, սարէսար:  
Մատաղ կեանքում ինձ մի զնիր գերեզման,  
Գերեզման սիրուն ջան, գերեզման:

Ի՞նչ ես ասում իժում քու խղճմտանքիդ,  
Թէ որ մատաղ անես գլուխս՝ պատկերքիդ:  
Ի՞նչ կուլի մէ ձէն տաս, ով իմ հոգեհան  
Մէ սիրտս խիթարիս՝ չը դաղես էդքան,  
Քու անուշ բերնի մի համով խօսքն,  
Չարչարանքիս գեղն է իմ բաղդիս հիմքն:  
  
Ասուած սիրունութիւն քեզ էսդուր էրիտ,  
Որ ողորմած լինես՝ պարոն, սիրականիդ,  
Վարձք կանիս, աչքի լուս մէ տեսութեն դաս,  
Է՛ս ջուր տարածիս, մէ համբուրել տաս:

## 243 ԿԱՅԾԱԿ ՇԱՆԹԵՑ

Կայծակ շանթեց մթնեց իմ երկին,  
Բնկաւ ու հանգաւ աստղս անմեկին—  
Եարս ինձ թողեց, չանսաց իմ «կաց»ին,  
Գնաց—բիւր ծաղիկ յետևից լացին,  
Գուցէ ես նորան տանջեցի խանդով,  
Գուցէ սիրեցի պակաս եռանդով...  
Գրեցի նամակ լացով, հառաջով,  
Արտասուքի մէջ թաթախւած գրչով.  
Մէջը փակեցի շատ պաչ ու գգւանք,  
Խոկ իմ մէջ թողի բոլոր տառապանք:  
Ն. Քուչակ

## 244 ՂԱՐՍԵՑՈՑ ԵՐԿԵՐԻՑ

Սէրդ ընձի ուոցուցեր է տկի պէս,  
Մայիլ իմ էղիր սեւ աչքերուզ մկի պէս,  
Քեսալայ համանիս ծեր գուռն իմ մաշիր,  
Շան պէս սնկսընկամ կը, յիրիսը չիս աշեր:  
Զիտիմ վիվ է ըսիր ընձի՝ թէ գէշ իմ,  
Քեզի հըմար համ ջորի իմ, համ էշ իմ,  
Բայլամ փաշէն էսօր էլաւ այվանը,  
Մի չարչըթի ընձի պէս խիղճ հայվանը:

Մէ Վահրատի փուշըմ որ առնիս պառկիս,  
Դիտիս թէ Անդրիսաէն լմւ պըտիր եղնիս.  
Դժոխըլն էլ տանին հետք դայիլ իմ,  
Թաք թող ըսին ֆիլանը ֆիլանին առիր է:

## 245 Մէկը ԶԵՂԱԻ

Մէկը չեղաւ, որ իմանար դարդերըս  
Քնընւշ ձեռքով դարման անէր վէրքերիս.  
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերըս,  
Անհնշ բնյըր տար, վարդի գնյն տար երգերիս:  
Կեանքըս կը տամ մրտից բըղխած համբոյրին.  
Ա՛խ, թէ մէկը ինձ հասկնար ու սիրէր.  
Ի՞նչ կայ նրկրուժ և սրբաղան և անգին,  
Քան թէ զոհւել, քան թէ լինել անձնըւէր:  
Բայց ես կեանքում շատ սիրեցի ու լացի,—  
Մէկը չեղաւ, որ իմանար դարդերըս.  
Սիրող սրտի ծարաւ, կարօտ մնացի.—  
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերըս...  
Ա. Խասհակեան.

## 246 ՂԱՐՄԵՅՈՒՅ ԵՐԳԵՐԻՑ

Քանի մէկ—քանի մէկ քաշեմ դարդերդ,  
Էս իմ դարդիս դարման ով պտի էղնի.  
Կուլամ ու կողկողամ լամ ու հառանչիմ,  
Մակեամ արտըսունքս ծով պտի էղնի:  
Նստըիս նստըիս յօտին սեատըր,  
Բացըիս անդրանիկ լսիդ բեատըր,  
Բիւլիւլն էլ ի՞նչ գիտէ վարդին դեատըր,  
Էս իմ դարդիս դարման ով պտի էղնի:  
Մէ պարըմ գուգիմ, խնայիս կը—չես տաթ,  
Դիտիս թէ կը պարպի, ով պտի էղնի,  
Կանչեմ ու հառանչիմ, կողկողայէն լամ,  
Մակամ էս աչքերըս ծով պտի էղնի:

## 247 ԵՐԿԱՐԻԲ ԳԻՇԵՐ

Երկարիբ գիշեր. միծ տարի դարձիր,  
Դաժան, սև խանըր, իջիր, թանձրացիր,  
Խմ մուրազ առայ այսօր իրիկուն—  
Վերջապէս եկաւ հիւր, եարս թագուն,  
Եօթ սարի յետև կանգնիր արշալոյ,  
Թէ չէ կը փախցնէ սիրածիս քո լոյ.  
Թող յաւէդ այսպէս խաւարում մնամ,  
Միայն եարս միշտ կրծքիս ունենամ:  
Ն. Քուչակ

## 248 ՔՈ ՓԱՓԱԳՈՎ

Քո վափաքով վառվում եմ, արի, սիրական ուրաեղ ես,  
Երկնային ամպերու մէջ նստոյ ծիածան, մուր տեղ ես,  
Ճանապարհող նայելով աչքերումս լոյս չը մնաց,  
Ե'կ երևոյթ տեսանեմ, ազնիւ սիրաբան մուր տեղ ես:  
Ի՞նչ պատահաւ անուշիկ, որ դուն հեռացար ինձանից,  
Քաղցրախօս անուշ լիզու, անւամբ զովական մուր տեղ ես,  
Քանի մէկ քանի չարաշար տանջւիմ այլոց ձեռով,  
Ո՛վ վեհապանծ անւանի, կեանքիս պահապան ուրտեղ ես:  
Միր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առանց  
Դու արի՝ ի միասին գնանք դատարան, մուր տեղ ես,  
Թող միայն ասեն, Զիւան, սիրականդ կուգայ,  
Թող տատանիմ քո սիրով ո՞ինչ յաւիտեան, մուր տեղ ես:

## 249 ՄԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Միրում եմ քեզ մաքուր սիրով մշտակաս,  
Զը կայ ոչինչ քո վարկից թանգ ինձ համար.  
Այն օրից, ինչ արև շողաց իմ գլխին,  
Քեզանից զատ ես չեմ սիրել ոչ մի կին,  
Դու մի կարծիր կիրքն է գէպի քեզ քաշում,  
Կամ աղբիւրի ջրի ծարան է ինձ մաշում.  
Հաւատամ, եար, նոր եմ դառնում ես գետից...  
Ես մաշում եմ լոկ քո տեսի կարօտից:

Կարող էիր երբեկցէ դու կարծել,  
Թէ որչափ ինձ դու անհրաժեշտ ես դալձել.  
Նայիր գէմքիս, թօնից թշիս ալ վարդգ,  
Այստեղ քցեց ինձ տառապանքն ու դարդը:  
Այն, երդու էր մի անխոհմ, անփոյթ երգ,  
Բայց զրա տեղ դու ինձ տւիր շատ խոր վէրը.  
Ներիր ինձ, եար, ներիր, իմ եար քալցըադին,  
Զէ որ սէրդ խելք չէ թողել իմ գիշին:

## 250 ՄԻՐՈՅ ՏԱՂԻՐԻՑ

Առաւոտուն ելամ, աչքս ընկաւ երեսիք,  
Էլ չմաց ինձ վրայ հալ փարի,  
Տարար խելքս գլխէս, արիր սարարի,  
Մարդիկ ժողովիր գլխիս արիր դար, փարի:  
Ասլըդ խարար առնիմ, ըշկամ տիւն դոր ես,  
Նախուն շամամ ես, կարմիր ինձոր ես,  
Եշիդ ալաֆը ինձ էրեց մընձորեց,  
Էլ չմաց ինձ վերայ հալ, փարի:  
Խօսքը որ կ'ատա՞ իւղարէտ մի դարձ,  
Դոշդ ինձ գեղակ, թելդ գլխիս բարձ,  
Չիլֆերդ ետ արա, մէ երեսդ բաց,  
Տեսնամ ջավահիր ես՝ եօխսա լալ փարի:  
Սալմաստեցի Յարութիւնն եմ, ջիւմլէին դաստան  
Օրս էլ ընցուցիմ քիւլի քիւրդիստան,  
Իմ ու քոնը մնաց վերջին դատաստան,  
Մինչ Քրիստոսն իւկայ ուսնէյիկալ, փարի:

## 251 Ի՞՞ՆՉ ՃԱՐ ԱՆԵՄ

Սիրտս դառել է մի մանուկ լալկան  
Զուր եմ խաբխըրում նրան շաքարով  
Նա լալիս է միշտ, անհուշ սիրական,  
Եւ քեզ է ուղում օր ու գիշերով:  
Ես նրան ի՞նչ ճար անհմ:

Ինչքան աշխարհում սիրուններ որ կան,  
Ցոյց աւի աշքիս, զուր եմ համողում:  
Քեղանից բացի, անհուշ սիրեկան,  
Նա ուրիշ ոչոք, ոչոք չէ ուղում:  
Ես նրան ի՞նչ ճար անհմ:  
Ն. Քոչակ

## 252 Ի՞՞ՆՉ ՀՔ ԲԱՄԲԱՍՈՒԻՄ

Ի՞նչ էք բամբասում, ի՞նչ մեղք եմ արել,  
Ես լոկ մի չընաղ էակ եմ սիրել:  
Բայց գիտեմ, երբէք դուք չէք դադարի.  
Բամբասելը ձեղ հաճոյը է տալի.  
Ուրեմն ձեղ տամ հաճոյք կրկնակի,  
Այս գիշեր թող ձեր աչքը չը փակի:—  
Դէհ, բամբասեցէք, նոր սեղք եմ արել,  
Ես մի այլ չընաղ էակ եմ սիրել:  
Ն. Քոչակ

## 253 ԼԵՌԱՆ ԳԼԻԻ

Լեռան գլխի ծաղիկներում  
Պառկած էի գիշերով:  
Ծաղիկները ջինջ եթերում  
Բուրում էին անխոռվ:  
Գլխիս վերև իմ սիրականն ամէժ իփարձ  
Նուն խոմում էր գինի,  
Իսկ ես անհոգ նրա ծնկան, ի ըռո՞ ո՞ ո՞ ո՞  
Տեել էի ինձ ընի և մարա այց մոռ  
Եւ ինձ թւաց. ազատ, թեթե սիր զազու  
Թուա. կագաւ նա դառած. հօդուար որուն  
Խոկոյն ընկայ նրա յետե զար նաւան մի  
Ես բազէի թն առած:  
Ծովի ափին հասայ եարիս, ուղար մինչ  
Բոնի նորան բերի յետ,  
Սակայն սէրը, —վայ իմ օրիս, —  
Սէրը թոնի էր անհետ...  
Ն. Քոչակ

## 254 ԾՆԻԵԼՈՒՄ ՕՐԻՑ

Ծնւելուս օրից մինչև հիմա գեռ  
Զէ խոստովանցրել ինձ ոչ մի տէրտէր.  
Հէնց որտեղ տէրտէր ես աչք եմ ածել,  
Շեղել եմ ճամբէս ու թաք եմ կացել:  
Բայց երբ տեսնում եմ մի կին գեղադէմ,  
Գըժի պէս իսկոյն հէնց վազում եմ դէմ.  
Նրա ծոցն եմ ինձ ես տաճար անում.  
Նրա ծծերին եմ խոստովանում:

Ն. Քուչակ

## 255 ԿԱԺՏԻՑ ԴԵՆ

Կաժտի դեն՝ կաժտի չաս, զուշա մայեա, պօմնիու վաս,  
Խնչ կուլի՝ ղաղամ փոխես, լայեալ անես՝ մօտս գաս,  
Եադ օզրու համդամ օլայ՝ գեալ արան մաննան քեսս,  
Սարի Խուզա համշարի, սուխան միգուխամ ոաս:  
Շէնի ճիրիմէ, աք մօ, էլսլա շէն սմղ միդիխար,  
Եազինան աշնա օլինջա՝ օլ մանըմ իչուն աղեար,  
Վիպիօմ կրասնի վինօ, րազիզրայիմ գիտար.  
Էյ զուլում, եք շաբ բինա թու մարա մեհմանի զիգեալ.  
Մծերդ դիր բերանս, թէ չէ ես կուլիմ անմաս:

Շաբ ու բուզ գիւլիշանդա լալ էյլազըմ բիւլբիւլի,  
Որ իմ կամքը կատարես, ասա տեսնեմ ինչ կուլի,  
Բէղափլ էշսա զուշառմ՝ դազըթտըմ զունիա փուլի,  
Էլսլա մէ մօկուտէ՝ արարիս շէնի սուլի,  
Վիյ նի Բոյ, վիյ նի անգէլ, ըշտօ խատիտէ ատ նաս:  
Չուն բէլս բազան ու միսան՝ բուիւր՝ դաբաղջա երի,  
Կրակի պէս շափաղդ գիփուն աշխարհքս կու էրի,  
Կուզա պայցիօշ, պրաշու մենիա ստաքօյի բերի,  
Եկ սահաթ սաբր բըքուն՝ բիսանամ դազալի շէնրի,  
Երթի օրի պորտի էլսլա միեցի ամաս:  
Խէյլի հարիֆ մարդ պիտի որ խօսքերս իմանայ,  
Պայտի սուզա, սկազալայ մընէ ադին բազ անա,  
Մօտի էրթի դարձանդի, գինացվալի, չեմ թանայ,  
Ղուրբանի թու, դարդիմանդ, բիս՝ մերիմ զամխանա.  
Միսկին Բուրջի էյլիիր ինդի սանա իլթիմաս:



## ՓԱՂԱՎՐԻՎԵԿԵՆ ԵՐԳԵՔ

## 256 ԾԱՄԹԵԼ

—իմ գլխու փութէն, կիտամ  
Դէ խանա ծամթելն ի ծովէն,  
—Լողվորի մէկ լէ ես եմ,  
Զին խանա ծամթելն ի ծովէն,  
—իմ գլխու չամբար կիտամ,  
Դէ խանա ծամթելն ի ծովէն,  
—Լողվորի մէկ լէ ես եմ,  
Զիմ խանա ծամթելն ի ծովէն,  
Եար ունի, եար ունի,  
Եարսի եօթ ախպէր ունի,  
Եար ունի, եար ունի,  
Եօթ լէ դացած բանելու,  
Եար ունի, եար ունի,  
Նախրագնէն ուռի ծառ,  
Եար ունի, եար ունի,  
Խնձոր թալեմ արի տար.  
Եար ունի, եար ունի,  
Խնձորի լէս կծած էր,  
Եար ունի, եար ունի,  
Չորս բոլորն արծըթած էր,  
Եար ունի, եար ունի,  
Ախպէրս ուղեց չը տւի.  
Եար ունի, եար ունի,  
Սնուշ եարի զրկած էր,

— Իմ խաքի շապիկ կիտամ,  
 Դէ խանա ծամթելն ի ծովէն.  
 — Իմ դօշի սրտնոց կիտամ,  
 Դէ խանա ծամթելն ի ծովէն,  
 — Լողվորի մէկ լէ ես եմ,  
 Զեմ խանա ծամթելն ի ծովէն:  
 — Իմ թեկի թենոց կիտամ,  
 Դէ խանա ծամթելն ի ծովէն.  
 — Լողվորի մէկ լէ ես եմ,  
 Զեմ խանա ծամթելն ի ծովէն:  
 — Իմ վզի վզնոց կիտամ,  
 Դէ խանա ծամթելն ի ծովէն.  
 — Լողվորի մէկ լէ ես եմ,  
 Զեմ խանա ծամթելն ի ծովէն:  
 — Իմ ծամի ծանրութենէն,  
 Ծամթելս կտրե ընկե ի ծով,  
 Իմ ծամթելն խան տնւր ի գիս,  
 Քու ջըհել արեն յաբով,  
 — Իմ ջուխտակ աչիչ վրայ,  
 Ծամթելդ խանեմ ի տամ քեզի,  
 Ե՞թ կիտա յէն օրն Աստւած,  
 Օր էրանէկ իտան մըզի:

## 257 ՎԱՐԴ ՑԱՆԵՑԻ

Մէկ սիրտ էրա, հէյ անջիպեար,  
 Արի մեր տուն ներս մտիր,  
 Ես հիւանդ եմ քո դարդովը,  
 Եկ քո սիրով ճար կտիր.  
 Վարդ ցանեցի, փուշ քաղեցի,  
 Եար վնտուցի եարայ դտայ:

Արեն ելաւ կամար կամար,  
 Զուլօն կապեց ոսկէ քամար,  
 Ես կը մեռնեմ քեզի համար:  
 Արեն ընկաւ ամուր քերդին,  
 Քո սէրն ընկաւ մէջ եմ լերդին,  
 Ես քեզ սիրեմ, Թող զիս քերթին:  
 Դու դաշտ կուգաս հոլա հուլա,  
 Կու նմանիս բամբկի ըռւլա,  
 Աչքս տեսաւ, սիրոս կուլայ:  
 Միր ջուխտ գութան դաշտ կու բանի,  
 Զուլօն իսաթուն հաց կու տանի,  
 Աչքով, ունքով մարդ կու սպանի,  
 Հելել-վելել, Մըրու գոմէշ,  
 Իմ ձեռ թալեմ Քեալաշու փէշ  
 Զուլօն եղնի ինձի փէշէշ:

## 261 ԾԱՄԵՐԴ ԾԱՄԵՐԴ

Ծառի վերայ բացւել է կարմիր վարդը  
 Քեզի զուրպան ես կը տանեմ քու դարդը.  
 Ծամերդ, ծամերդ,  
 Շեկոյ ջան մազերդ,  
 Աիրունիկ ունքերդ:  
 Զօր ու դիշեր կը քաշեմ քու կարօտդ,  
 Զմեռնէի քիչ մնայի քու մօտդ...  
 Ծամերդ, ծամերդ...  
 Լալէն աչքերիս մէջն է ցան ընկել,  
 Քո սիրովդ ես շատ դռներ եմ ընկել.  
 Ծամերդ, ծամերդ...  
 Թէկուզ հոգիս էլ որ յելնի բերանիցս  
 Քո անունը դուրս չեմ հանի մտքիցս.  
 Ծամերդ, ծամերդ...  
 Քանի անզամ ձեր դռներէն անցել եմ,  
 Զեռքս դուան վերայ դրած լացել եմ.  
 Ծամերդ, ծամերդ...

## 262 ՀՕՐՅ ՆԱԶԱՆ ԻՄ

Հօյ Նազան իմ, Նազան իմ,  
Զնն Նազան իմ, Նազան իմ,  
Նազան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր խոր ձորերով եկար,  
Նազան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Կարմիր սոլերով եկար.  
Գարնան սիրուն ծաղիկ հս:  
Հօյ, Նազան իմ, Նազան իմ,  
Խնձ համար եղունիկ հս.  
Զնն Նազան իմ, Նազան իմ,  
Գլխիս վրով պտիտ տուր,  
Հօյ Նազան իմ, Նազան իմ,  
Նախշուն թև թիթեռնիկ հս:  
Զնն, Նազան իմ, Նազան իմ:  
Եար ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր խոր ձորերով եկար,  
Եար ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Կարմիր սոլերով եկար.  
Ծամբայ, աէք առաջ գամ, առ արջ  
Սիրած եարիս բարե տամ, առ արջուն  
Ուխտ եմ արել, որ առնեմ,  
Թող տեսնի աշխաթի ալամ, աջայ  
Սարեր, ձներ, յետ կացէք, այս ո՞ւ  
Իմ եարին ճամբէն բացէք.  
Եար եարի հետ խօսելիս այս ո՞ւ  
Ականջ արէք իմացէք: Այս ո՞ւ  
նշի ծառին նուշ կը լիս:  
Վարդի ճուռն անուշ կը լիս ի ամառ  
Երանէկ էն աղջրկան՝ ամառ սցուն  
Սիրած եարին թուշ կը լիս:

## 263 Կ Բ Ո Ւ Կ

Կոռւնկ ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ,  
Մի վազիր երամիդ շուտով կը հասնիս,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ,  
Թողիր եմ ու եկիլ մըքերս ու այզիս,  
Քանի որ մխ կանհմ կու բազւի հողիս,  
Կոռւնկ, պահ մի կացիր ձայնիկդ ի հոդիս,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ:  
Քեզ խարար հարցնողին չես տանիք տալապ,  
Զայնիկդ անուշ կուգայ քանզ ջրի տոլապ,  
Կոռւնկ, Պաղղագ իջնուս կամ թէ ի Հալապ,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ:  
Ոչ զուր գիտեմ և ոչ կիրակին,  
Զարկած է զիս շամփուր բանած կրակին,  
Սյրիս չեմ հոգար ձեզնէ կարօտ եմ,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ:  
Պաղղագու կուգաս կերթաս ի Սահրաթ,  
Թղթիկ մը զրեմ տամ քեզ ամանաթ,  
Աստւած թող վկայ լին ի քու վրագ,  
Տարեալ հասոյցես գայն իմ սիրելեաց:  
Գրել եմ մէջ թղթիս թէ հոս մնացի,  
Օրիկն ի օրեր աշերս չը բացի,  
Սիր ելլքս, ձեղանից կարօտ մնացի,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ:  
Աստորիս բաներ կամաց կամաց է,  
Եթէ Աստւած լսէ դոնակ մը բացէ,  
Դարի բին սիրտն է սուդ աչքերն ի լաց է,  
Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիմ:  
Ասուած, քեզանէ խնդրեմ մուրզիթ ու քէրէմ,  
Ղարիբ ին սիրտն է խոց ջիկարն է վէրէմ,  
Կիրած հացն է լեղի ջուրն է հէրէմ,  
Կոռւնկ, մեր սիրարհէն խարրիկ մը չունիմ:

Աշուն է մօտեցել գնալու ես թէտքիր,  
Երամ ես ժողվեր հազարներ ու փիւր,  
Ինձ պատասխան չտուիր ելար ու գնացիր,  
Կոտնկ, մեր աշխարհէն գնա հեռացիր:

## 264 ԲԱՅ ԽՈՒՐՁԻՆԸ

Կանզնել ես ախա-բախա,  
Ալթուան ուստան գեօթ սինալադ աթմիշամ հէլ  
աթմիշամ եար աթմիշամ.  
Լաշակիդ տուտը կախ ա,  
Բաց խուրջինը տուր գանակը, խնձոր կտրեմ  
տար եարիս գիլիմ, գիլիմ, գիլիմ.

Թուլս տղայ սիւտակ աղջիկ:

Բոնել են իրար հախա:  
Պուճուր աղջիկ զալում ես,

Մազերդ սղալում ես,  
Խունջիկ—մունջիկ մի անի,

Ինձ առնելու կամ ունիս:  
Բիւրիւլ արի մեր բաղը,

Ասան իմ եարի խաղը,

Մաղիդ միջով բարես,

Հասցրու եարիս թաղը:  
Նոր եմ եկել հնձանից,

Դու մի փախչի ինձանից,  
Չեր տուն Աստած քանտի,

Թէ որ շուռ գաս ինձանից:

## 265 Ա. Լ. Ա. Գ. Ե Ա. Զ.

Ալագեազ բարձ, սար է, եար,

Զուրը հիւսուդի դեղ է, եար,

Ես նոիրեցի խալիսը տարաւ իմ սիրած եարը,

Օրիէ չառնեմ ես կը մեռնեմ, իմ անուշ եարը:

Սիրածը սիրածին չեն տալ,

Ես ինչ անօրէն գեղ է:

Լուսնակն է կայնել զարին,

Պատկերըն է քու պատկերին,

Լուսնակ ջան, թէզ մի էրթայ,  
Զուր մէկ լէ դալող տարին:  
Երկինքը կամար կապեց,  
Սև մազերս սպիտակեց.  
Փիս մարզի սառ խօսքերը  
Ինձ քեզանից շուտ ջոկեց:  
Ղուշը կշտովս անցկացաւ,  
Թուաւ գնաց, անցկեցաւ,  
Երկուսիս մէջտեղովն,  
Ար սրտամեռն անցկացաւ:

## 266 ՍԻՐՈՒՆ ԶԱՆ

Սիրուն ջան, սիրուն ջան,  
Սիրուն ջան, սիրտդ մի բանայ,  
Նշանած զինոր եմ,  
Ես չեմ զիմանայ:

Սիրուն ջան, սիրուն ջան,

Ծաղիկ ունիմ ալայ ա,

Ալայ չի՝ ալ-վալայ ա,

Հեռու տեղ մի եար ունիմ՝

Նըռան հատիկ, լալայ ա:

Սիրուն ջան, սիրուն ջան, և այն:

Էս գիշեր ես դուրս ելայ,

Թախախ ձենիկ թացել ա,

Կը կաթէր սարմար քեարին,

Եարիս աչքն ա՝ թացել ա:

Լուսնակը բակ ա գըցել,

Քեղ ամպի տակ ա գըցել,

Իմ կուրացած բախտըն էւ

Ինձի մհնակ ա գըցել:

Ամպել ա կամար կամար

Կապել ես ոսկի բամար

Դու ուղիզ միար մի անի,

Մի ջան ունիմ քեղ համար:

## 267 ԱԼԱԳԵՅՈԶ ԿՉԵՐԴ

Ալագեօղ աշերդ, կամար ունքերդ,  
Ուզում եմ հեռանալ, չի թողնում սէրդ,  
Աղէ ջան, աղէ,  
Աղէ ջան, աղէ.  
Դարդերս շատ է:  
Ես բեզի սիրեցի՝ որ ինձ եար էնիս,  
Երւած վառւած սրտիս, գեղ ու ճար անես,  
Մայրկ ջմն, ջուրն ընկնեմ,  
Քոյրիկ ջմն, ջուրն ընկնեմ,  
Շէկ եարի բոյին մեռնեմ:  
Արի եար ջան, արի, ինչ նազ ես անում,  
Սարի կաքաւի պէս շօրօր ես անում.  
Աղէ ջան, աղէ,  
Աղէ ջան, աղէ,  
Դարդերս շատ է:  
Կոռնկ իջած տեղը, չայիր չիման է,  
Աշխարհին արե է, ինձի դուման է.  
Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,  
Քոյրիկ ջան, ջուրն ընկնեմ,  
Շէկ եարի բոյին մեռնեմ:

## 268 ԱՄՊԵՐՆ ԵԼԱՆ

Ամպերն ելան բլուր բլուր,  
Մասիս սարի գագաթէն,  
Ա՛խ, իմ սիրաըս կարօտ մնաց,  
Սրտիս սիրած իգիթէն:  
Ա՛խ, թողեց հեռացաւ,  
Միրտս խոցեց հեռացաւ,  
Մէկ տարի է խաբար չունիմ,  
Եարաք ինձի մոռացաւ.  
Օխտ սարով հեռու գնաց,  
Ազիզ եարս ինձանից,  
Զիգարս եարալու մնաց,  
Նրա սիրոյ կարօտից:  
Ա՛խ թողեց հեռացաւ...

Սպասելով հողիս էլաւ,  
Գիշերն անքուն սպալով,  
Զահէլ ջիւան կեանքս մաշւաւ,  
Գըլիսիս տալով ողբալով:  
Ա՛խ թողեց հեռացաւ...  
Էռուին չկայ, որ մէկ տեսնեմ:  
Ասեմ—եարիս բարև տար,  
Պատմիր ինչպէս կը թառամի,  
Եարը կարօտից, չարաշար:  
Ա՛խ թողեց հեռացաւ...  
—

## 269 Է Ս Գ Ի Շ Ե Ր

Էս գիշեր, լուսնակ գիշեր,  
Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Զիւնն եկեր, զետին նախշեր,  
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանալ,  
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.  
Աչքով դէմ արա՝ պաշեմ,  
Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Կեռ ունքեր կարմիր թըշեր:  
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանալ,  
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.  
Ա՛յ գիշեր զարձիր տարի,  
Հացըս թող լինի գարի,  
Մհնակ եարըս ինձ համար  
Սրտով խօսքը կատարի:  
Ա՛ղի, քու չարը տանեմ,  
Քու սիրուգ ինձ կըսպանեմ.  
Դու իմ խօսքին ականջ դիր,  
Ես մօրըդ հաւան կանեմ:

## 270 ՇԱՏ ԾԱՂԻԿ ՑԱՆԵՑԻ

Շատ ծաղիկ ցանեցի, բայց ոչինչ չգտայ,

Սիրուն ջան, էդ քո ծամերդ ով է հիւսել,

Կարօտ եմ վախ, կարօտ եմ ես քեզ,

Սիրուն ջան, մեռնեմ քո չինար բոյին:

Այդ ինչ վատ սովորցել ես քո բըլբուլին,

Առաւօտ շատ վաղ զարթեցնում է սիրած եարին.

Սիրական դուն, սիրելիս դուն, գովելիս դուն,

Աչքերդ շատ սիրուն է, համեստ աղջիկ:

Երկուսս էլ մի ծառի պառուղիցն էինք,

Ինչից է, որ դու կարմիր ես, ես դեղին,

Կարօտ եմ, վախ, կարօտ եմ ես քեզ,

Սիրուն ջան, մեռնեմ քո չինար բոյին:

